

551.4
Ա-60

ԱՇԽԱՐՀԱՄԱՍԵՐԻ
ՏԻՉԻԿԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊՐԱԿ. IV

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՇԽԱՐՀԱՄԱՍԵՐԻ
ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊՐԱԿ I

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

(Ուսումնաօժանդակ ձեռնարկ)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1986

Գրախանչականի գիտ. թեկն., դոց. Մ. Ա. Խականդարյան

Ա. 609 Աշխարհամասերի ֆիզիկական աշխարհագրություն/Երևանի պետ. համալս.—Եր.: Երևանի համալս. հրատ.:

Պր. 4: Հյուսիսային Ամերիկա: (Ուսումնաօժ. ձեռնարկ)/Հ. Ս. Խաչատրյան.—1986.—132 էջ:

Ձեռնարկը բաղկացած է երկու բաժնից: Առաջին բաժնում տրվում է Հյուսիսային Ամերիկա մայր ցամաքի ֆիզիկաաշխարհագրական պայմանների բնութագիրը: Երկրորդ բաժինը նվիրված է Հյուսիսային Ամերիկայի ֆիզիկաաշխարհագրական շրջանների բնութագրմանը:

Աշխատանքում տրված են կլիմայական գոտիների, բուսաաշխարհագրական, կենդանաաշխարհագրական մարզերի և ֆիզիկաաշխարհագրական շրջանացման քարտեզ-սխեմաներ:

1905030000—46
704 (02)—86

Ե Գ Հ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՀ Կ

Հ Պ

ХАЧАТРЯН ГРАЧИК СЕДРАКОВИЧ
ФИЗИЧЕСКАЯ ГЕОГРАФИЯ ЧАСТЕЙ СВЕТА

Выпуск IV

СЕВЕРНАЯ АМЕРИКА

(Учебно-вспомогательное пособие)

(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван—1986

99 00010545



Երևանի համալսարանի հրատարակություն, 1986

ՏԻԶԻԿԱՍԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Հյուսիսային Ամերիկան մեծությամբ երկրագնդի երրորդ ցամաքն է: Այն գրավում է $24,259$ մլն քառ կմ տարածություն (Կըղզիների հետ): Նրա ափերը ողողում են Հյուսիսից՝ Սառուցյալ, արևմուտքից՝ Խաղաղ, արևելքից՝ և Հարավ-արևելքից՝ Ատլանտյան օվկիանոսների ջրերը: Ցամաքի հյուսիսային ծայրակետը Մերձխոն հրվանդանն է (Բութիա թերակղզում) հյուսիսային լայնության $71^{\circ} 50''$ -ի, հարավայինը՝ Մարյատո հրվանդանը հյուսիսային լայնության $7^{\circ} 12'$ -ի, արևելյանը՝ Սենտ Ջարլզ հրվանդանը (Լաբրադոր թերակղզում) արևմտյան երկայնության $54^{\circ} 40'$ -ի, արևմտյանը՝ Ռւելսի թագաժառանգի հրվանդանը (Ալյասկայում) արևմտյան երկայնության 168° -ի տակ:

Հարավում Հյուսիսային Ամերիկան Պանամայի պարանոցով միանում է Հարավային Ամերիկային: Հյուսիսային Ամերիկայի հարավային նեղ ու մասնատված հատվածը Վեստ-ինդյան կըղզիների հետ հայտնի է Կենտրոնական Ամերիկա անվամբ, որի հյուսիսային սահմանն անցնում է Տեհուանտեկեկ պարանոցով, հարավայինը՝ Պանամայի պարանոցով: Այսպիսով, բուն Հյուսիսային Ամերիկա մայր ցամաքի հարավային սահմանը պետք է համարել ոչ թե Մարյատո հրվանդանը, այլ Մեքսիկական բարձրավանդակի հարավը՝ հյուսիսային լայնության 19° -ը: Հյուսիսային Ամերիկային են պատկանում նաև Կանադական Արկտիկական, Ալեքսանդրի կղզիախմբերը (արշիպելագները), Գրենլանդիա, Ալեռության, Նյուֆաունդլենդ, Վանկուվեր, Շառլոտա թագուհու և այլ կղզիները: Կղզիների հետ մայր ցամաքի տարածությունը (մինչև հյուսիսային լայնության 19°) կազմում է 23 միլ քառ կմ: Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային ծայրակետը Գրենլանդիայի Մորիս-Ճեսեփ հրվանդանն է, որն ընկած է հյուսիսային լայնության $83^{\circ} 39''$ -ում:

Ամբողջ ցամաքը տարածվում է միջօրեականի ուղղությամբ Նրա արևմտյան մասով, Ալյասկայից մինչև Կենտրոնական Ամերիկա, 9000 կմ ձգվում են Կորդիլիերյան, իսկ արևելքով՝ Աստղաշայան լեռները: Այդ երկու լեռնային համակարգերի միջև կազմված ինքն Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի և Մեքսիկական ծոցի միջև տարածված են ընդարձակ բարձր ու ցածր հարթավայրեր՝ լեռների ու հարթավայրերի նման ձգվածությամբ էլ պայմանավորված են օդափոխանակությունը, ինչպես նաև բնական զոնաների՝ միջօրեականի ուղղությամբ տարածվելը հատկապես ցամաքի հարավային կեսում:

Աշխարհագրական դիրքով ու երկրաբանական զարգացման առանձնահատկություններով Հյուսիսային Ամերիկան ընդհանրություն ունի Եվրասիայի հետ (միանման կլիմայագոյացնող պայմաններ, կլիմայական տիպեր, լանդշաֆտային զոնաներ և այլն), սակայն տարածությամբ և լեռնագրությամբ միմյանցից խիստ տարբերվում են:

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային Ամերիկայի կենտրոնական շրջաններն ունեն պլատֆորմային կառուցվածք, իսկ եզրերում համարյա թե ամենուրեք տարածված են գեոսինկրինային կառուցները: Մայրցամաքի միջուկը կազմում է Հյուսիսամերիկյան պլատֆորմը, որն զբաղեցնում է ցամաքի մոտ կեսը, Գրենլանդիայի գգալի մասը և Կանադական Արկտիկական կղզիախմբի (արշիպելագի) հարավարևելյան հատվածը: Պլատֆորմը կազմված է արխեյան-պրոտերոզոյան բյուրեղային հիմքից և ավելի երիտասարդ նստվածքային ծածկոցից: Հյուսիսային մասում նրա հիմքը մակերևութում մերկանում է՝ առաջացնելով Կանադական վահանը, որի առանձին ալիքածե բարձրություններ կազմված են արխեյան գրանիտներից, գնեյսներից և պրոտերոզոյան կվարցիտներից, որոնց բացարձակ հասակը կազմում է շուրջ 2500 մետր: Կանադական վահանը եզրավորում են վերին պրոտերոզոյան հասակի գոյացությունները, որոնք ունեն ոչ ավելի 950—1450 մետրավորված հասակ:

Պալեոզոյում (քեմբր, դևոն) պլատֆորմի հյուսիսը, հարավը և արևմուտքը ենթարկվել են ծովային տրանսգրեսիայի՝ ծածկելով այն կրաքարային, դոլոմիտային ու ավաղաքարային հզոր

շերտախմբերով։ Ստորին պալեոզոյում ավելի հզոր նստվածքներ են կուտակվել Ապալաշյան, Գրենլանդական և Կորդիլիերյան գեոսինկրինալներում, որոնք ունեցել են 4000—8500 մ հզորություն։

Միլուրում և գեոնի սկզբում սկսվում է կալեղոնյան ծալքավորությունը, որի կառուցցներն այժմ պահպանվում են Ապալաշյան լեռների հյուսիսում և արևելքում, Գրենլանդիայի հյուսիսում ու հյուսիս-արևելքում, ինչպես նաև էլսմիր կղզու հյուսիսում։ Կալեղոնյան ծալքավորության լեռները հետագայում հարթվելով ձուլվեցին Հյուսիսամերիկյան պլատֆորմին՝ ամբողջացնելով այն։

Կալեղոնյան լեռնակազմական պրոցեսների ժամանակ պլատֆորմի տարածքում նույնպես գոյացել են մի շարք սինեկլիզներ և անտեկլիզներ։ Դրանցից հայտնի են Նախապալաշյան սինեկլիզը, Ներքին սինեկլիզը և Ագիրոնդակի ու Օգարկի անտեկլիզները։ Երկրաբանական այդ դարաշրջանին բնորոշ են եղել մեղմ, խոնավ կլիմայական պայմաններ, որի հետևանքով էլ պլատֆորմի սինեկլիզային ճկվածքներում կուտակվել են մեծ քանակությամբ ածխաշերտեր։

Կարբոնի սկզբին սկսվում են Հերցինյան լեռնակազմական պրոցեսները, որոնք պլատֆորմը գոտեորում են հիմնականում հարավից ու արևելքից և հավանաբար Ալտանտյան օվկիանոսով շարունակվում դեպի Եվրոպա։ Հարավում Հերցինյան ծալքավորումներն անցել են Մեքսիկական ծոցի տակ և այժմ իրենց վրա ունեն հզոր երիտասարդ շերտախմբեր։ Հերցինյան ծալքավորումների շնորհիվ Ապալաշյան գեոսինկրինալում հին կալեղոնյան կառուցցները միաձուլվելով Հերցինյան ժամանակաշրջանում ծալքավորված շերտախմբերին, առաջացրել են ժամանակակից Ապալաշյան լեռները, որոնք ձգվում են Մեքսիկական ծոցի շրջանից մինչև նյուֆառնորմենդ կղզին։

Հերցինյան ծալքավորություններն ընդգրկել են նաև Կորդիլիերյան գեոսինկրինալի տարածքը, սակայն դրանք այժմ արդեն չկան։

Ամբողջ պալեոզոյի ընթացքում Հյուսիսային Ամերիկան մի քանի անգամ միացել է Եվրոպայի կալեղոնյան և Հերցինյան գոյացություններին, իսկ առանձին լեռնաբազուկներով՝ նաև Հարավային Ամերիկային ու Ասիային։

Մեզոզոյում Ալտանտյան օվկիանոսի գոգավորության առաջացման հետ Հյուսիսային Ամերիկան անշատվում է Եվրոպայից։ Մինչև յուրա ընկած ժամանակաշրջանում Ապալաշները քայլայ-

վում, ցածրանում և նրա որոշ մասեր նույնիսկ ծածկվում են զրով:

Կորդիլիերյան գեոսինկլինալի տարածքում յուրայի ժամանակ տեղի է ունենում մեղողոյան ծալքավորությունը (Նեադայի), որն ուղեկցվում է ինտենսիվ հրաբխականությամբ և ինտրուզիվ մարմինների ներարկմամբ: Նեադայի լեռնակագմական պրոցեսներն ընդգրկել են Ալյասկայից մինչև Մեքսիկական սարահարթը: Նըրանցից արևելք մայր ցամաքի կենտրոնը, ունենալով ծովային ռեժիմ, կուտակում է Կորդիլիերներից քայլայված ու տեղափոխված նյութերը:

Լարամյան ծալքավորությունը, որը տեղի է ունեցել կավճի և էոցենի սահմանում, ընդգրկել է ամբողջ Կորդիլիերյան գեոսինկլինալը, մանավանդ նրա արևելյան մասը, ուր գոյացել են Բրուկսի, Մակենզիի և Փայոոտ լեռնաշղթաները:

Ի տարբերություն Նեադայի ծալքավորության, Լարամյան ծալքավոր գոյացությունները չեն ներարկվել հրաբխային ու ինտրուզիվ մարմիններով, այլ բնորոշ են ավելի շատ վրաշարժերով և վարնետներով, որոնց շնորհիվ գոյացել են մի շարք կարճ, ընդհատումներով ծալքեր: Լարամյան և Նեադայի ծալքավորությունների միջև հյուսիսից հարավ ձգվում է սարահարթերի ու սարավանդների ընդարձակ գոտին:

Պալեոգենում Կորդիլիերների և պլատֆորմի միջև տարածված ծովային ավագանը նահանջում և ընդունում է ներկայիս տեսքը:

Օլիգոցենից սկսվում և մինչև մեր օրերը շարունակվում են ալպյան լեռնակագմական պրոցեսները Կորդիլիերյան գեոսինկլինալի ծայր արևմտյան մասում, որի ընթացքում գոյանում են առափնյա և կղզիների լեռնաշղթաները:

Ալպյան տեկտոնական շարժումների շնորհիվ Կորդիլիերյան շրջանում ինտենսիվ է եղել էֆուզիվ հրաբխականությունը, հատկապես Փայոոտ լեռների ԱՄՆ-ի հատվածում, Մեծ Ավագան սարահարթում, Կոլումբիական սարավանդում, Կասկադյան լեռներում և Մեքսիկական լեռնաշխարհում, որը շարունակվում է նաև ներկա ժամանակաշրջանում, սակայն ավելի թուլլ:

Օլիգոցենից սկսած պլատֆորմի եղրային մասերից ծովը նահանջում է, քեռնային համակարգերը ուղղաձիգ բարձրանում են վեր, որի շնորհիվ ակտիվանում է գետային էրոզիան՝ լեռներին տալով ժամանակակից տեսքը: Նույն ժամանակ Կանադական Արկտիկական կղզիախմբի շրջանն իջնում է, երբեմն ուղեկցվելով լավային արտավիժումներով:

Կորդիլիերյան համակարգի ուղղաձիգ բարձրացումները մեծ ինտենսիվության են հասել պլիոցենի վերջին և պլեյստոցենի ըսկրզբին, որը և պատճառ է դարձել կլիմայի սառեցման, մայրցամաքային ու լեռնային տիպի սառցադաշտերի գոյացման:

Դեռ պլիոցենում կլիմայի ցրտեցման պատճառով Հյուսիսային Ամերիկայում գոյանում են տունդրայի ու տայգայի ֆլորան ու ֆաունան: Այդ ընթացքում թերինգի նեղուցի վրայով գոյություն ունեցող ցամաքային կապի միջոցով եվրասիական ֆաունայի ու ֆլորայի տեսակներն անցել են Հյուսիսային Ամերիկա:

Գրենլանդիայում սառցապատումն սկսվել է դեռ նեոգենից և մեծ ինտենսիվության հասել ստորին պլեյստոցենում: Սառցապատման կենտրոններ են եղել Կորդիլիերներն արևմուտքում, Բաֆինի ծրկիրն ու Լաբրադորյան թերակղզին արևելքում: Կանադական կղզիախմբի (արշիպելագի) հարավ-արևմուտքը և Ալյասկան կլիմայի ցամաքայնության շնորհիվ շեն սառցապատվել: Կորդիլիերյան սառցադաշտերն ունեցել են 2—3 հազար մետր հզորություն և կլիմայի ցամաքայնության շնորհիվ դեպի արևելք շատ շեն տարածվել, իսկ արևելյան սառցադաշտերը Ատլանտյան օվկիանոսից մեծ քանակությամբ խոնավություն ստանալու հետեանքով ընդարձակվել են և հաճախ միանալով Կորդիլիերյան սառցադաշտերի հետ՝ առաջացրել միացյալ սառցադաշտ, ձգվելով արևելյան ծովափից արևմտյան ծովափի: Արևելյան սառցադաշտերի գրաված տարածքը կազմել է 13135 հազար քառ կմ, իսկ Կորդիլիերյանը՝ 2500 հազ քառ կմ, ամբողջ ցամաքում՝ մոտ 15,5 մլն քառ կմ (առանց Գրենլանդիայի):

Ինչպես Եվրոպայում, այստեղ ևս եղել են մի քանի սառցապատումներ, որոնք ստացել են այն նահանգների անունները, որտեղ հանդիպել են դրանց նստվածքները. դրանք են՝ Ներքրասկայի, Կանգասի, Խլինոյսի և Վիսքոնսինի, որոնց Եվրոպայում համապատասխանում են Գյունցը, Մինդելը, Ռիսը, Վյուրմինը: Վիսքոնսինի սառցադաշտն անհետացել է մոտ 6—10 հազար տարի մեզանից առաջ, իսկ Գրենլանդիայի և Հյուսիսարևելյան կրդզիների սառցադաշտերը, որպես ոելիկտներ, պահպանվում են նաև մեր օրերում: Առավելագույն սառցապատման ժամանակ (Խլինոյս) սառցադաշտերը տարածվել են ընդհուպ մինչև հյուս. լայն. $39-40^{\circ}$ -ը:

Սառցապատման ժամանակ Հյուսիսային Ամերիկայի մերձափնյա ծովերն ավելի փոքր են եղել, ջուկոտյան և Բերինգի ծովերի միջև գոյություն է ունեցել ցամաքային մի նեղ շերտ և այդ ցամաքային կամրջով ոչ միայն ֆառնան ու ֆլորան են միգրացիա կատարել, այլ նաև մարդն է թափանցել Եվրասիայից Ամերիկա (ամերիկյան բնիկները): Սառցադաշտերի հալվելու և տեկտոնական շարժումների շնորհիվ Հյուսիսային Ամերիկայի մերձափնյա ցածր հատվածները, ինչպես նաև Բերինգի նեղուցի շրջանի ցամաքային կամուրջն անցել են զրի տակ: Միայն Պանամայի պարանոցով նա կապ է ունեցել Հարավային Ամերիկայի հետ: Մայր ցամաքի հյուսիսային շրջանում գոյացել են մի շարք սառցադաշտային ծագման լճեր: Չորրորդականի սառցադաշտերը վերափոխել են Հյուսիսային Ամերիկայի ոելիեֆը. Կանադական վահանի շրջանում մեծ տարածում ունեն էկզարացիոն, իսկ Հարավային՝ Հարթավայրային մասերում՝ ոելիեֆի կուտակումային ձևերը՝ զանդրային ավազները, լցուային նստվածքները և այլն: Սառցադաշտերն ավելի մեծ ոելիեֆագոյացնող գեր են կատարել Կորդիլիերներում (հատկապես Սիեռա Նեադայի, Կասկադյան), որտեղից նրանք դեպի արևելյան հարթավայրեր են դուրս բերել մեծ քանակությամբ մորենային նյութեր: Սառցադաշտերի լրիվ անհետանալուց հետո մայր ցամաքի բնական լանդշաֆտը հետզհետե ձեռք է բերել ժամանակակից տեսքը:

ՈԵԼԻԵՖԸ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ

Հյուսիսային Ամերիկայի ոելիեֆը բազմազան է: Նրանում լրիվ արտահայտված են բոլոր ուղղաձիգ գոտիները, սակայն տարածքի գերակշռող մասն են կազմում 200—250 մ բարձրությունները (զբաղեցնում են ցամաքի կեսը). զրանք հիմնականում հարթություններ և սարավանդներ են: Դաշտավայրերը զբավում են տարածքի 1/5-ը, իսկ մոտ 1/4-ը զբաղեցնում են մինչև 1000 մ բարձրությունները՝ լեռնաշղթաներով ու սարահարթերով: Իր միջին բարձրությամբ (720 մ) Հյուսիսային Ամերիկան Ասիայից հետո գրավում է երկրորդ տեղը:

Հյուսիսային Ամերիկայի սահմաններում կարելի է առանձնացնել չորս խոշոր մորֆոստրուկտորային շրջաններ, որոնք միմյանցից տարրերվում են ոչ միայն տեկտոնական առանձնահատկություններով, այլև ոելիեֆի բնույթով: Դրանք են՝

1. Հարթավայրերի ու բարձրությունների շրջանը (ցամաքի հյուսիսային, կենտրոնական և հարավային մասերը):

2. Մինչքեմբրյան և պալեոզոյան հիմքի վրա վերածնված լեռնային շրջանը (Գրենլանդիան և Կանադական Արկտիկական կղզիախմբի հյուսիս-արևելքը):

3. Ապալաչյան լեռների շրջանը:

4. Մեզո-կայնոզոյան երիտասարդ ժալքավորության լեռների շրջանը (Կորդիլիերներ):

Պլատֆորմի շրջանի հարթավայրերն ու բարձրությունները ձգվում են Արկտիկայից մինչև Մեքսիկական ծոց: Դրանք ընդգրկում են Կանադական վահանի մեծ մասը, պլատֆորմի իջեցման շրջանները (սալը) և հերցինյան ժալքավոր գոտու ցածր մասերը: Տեկտոնական տեսակետից սրանք մայր ցամաքի համեմատաբար կայուն հատվածն էն: Միայն նրա եզրային որոշ մասեր իշնում են (Մեքսիկայի առվափնյա շրջան), որոշ մասեր՝ բարձրանում (Կանադական վահան, Մեծ հարթավայրեր):

Այս տարածքի համեմատաբար խոշոր միավոր է Լավրենտյան բարձրությունը, որն ընդգրկում է Կանադական վահանի մայրցամաքային հատվածը: Այն իրենից ներկայացնում է մինչքեմբրյան ժալքավոր հիմքով պալեոզոյան մի պենեպլեն: Սակայն իդեալական հարթություն չէ, նրանում կան մինչև 100 մ-ի հասնող բարձրություններ, առանձին բլրաշարեր, որոնք ունեն գմբեթաձև կատարներ: Այդ ալիքավոր մակերեսույթում զգալի տարածում ունեն ջրասառցադաշտային գոյացությունները՝ մորենները, օղերը, դրումինները: Այդ գոյացությունների հզորության փոքրության շնորհիվ առանձին հատվածներում դրանց տակից մայր ապարները մերկանում են՝ առաջացնելով խոյի ճակատներ, գանգրահեր ժայռեր: Զգալի տարածում ունեն լճերը, որոնք կազմում են տարածքի 1/3 մասը:

Լավրենտյան բարձրության միջին բարձրությունը կազմում է 300—400 մ: Այս բարձրության անբաժանելի մասերն են Հուդանի ծոցի իջվածքը և Մակենզիի հովիտը, որտեղ մինչքեմբրյան հիմքը թաղված է պալեոզոյան հասակի կրաքարային շերտախմբերի տակ: Վերջիններս ունեն հարթ, խիստ ճահճապատ մակերեսույթ և հետսառցադաշտային շրջանում ենթարկվել են ծովային տրանսգրեսիայի: Հավերժական, սառցույթի և փուլս նստվածքների տարածման հետևանքով Հուդանի ծոցի և Մակենզիի իջ-

Էրողիոն մասնատվածության մեծացման հետ միասին լայնորեն զարգացած են ռելիեֆի կարստային ձևերը։ Կենտրոնական հարթավայրերի հարավ-արելքում են գտնվում հայտնի Մամոնտի քարայրները, որոնց երկարությունը հասնում է 225 կմ.-ի։

Հյուսիսամերիկյան պլատֆորմի արևմտյան մասն իր վրա ունի ծովային ու ցամաքային հզոր շերտախմբեր և նեռտեկտոնական շարժումների շնորհիվ բարձրացել է։ Դա Մեծ հարթավայրերի շրջանն է, որը դեպի Կորդիլիերներ բարձրանում է աստիճանաձև և նախալեռներում հասնում $1500-1600$ մ բարձրության ու աննկատելի ծովվում Կորդիլիերներին։

Մեծ հարթավայրերի ռելիեֆի մեծ մասն աչքի է ընկնում էրոպիոն մասնատվածությամբ, ջրաժանային հատվածները հարթ են՝ կազմված կավճի, պալեոգենի ու նեոգենի ավազաքարերից, որոնք ծածկված են չորրորդականի լյոսանման ավազակավերով, իսկ հյուսիսում՝ սառցադաշտային նստվածքներով։

Հյուսիսից հարավ Մեծ հարթավայրերը ձգվում են մոտ 4000 կմ։ Միսսուրի գետից հյուսիս ռելիեֆում մեծ տարածում ունեն սառցադաշտային կուտակումային ձևերը։ Հարթավայրերի միջին մասում զգալի տարածում ունեն լյոսային ավազակավերոց կազմված հզոր շերտախմբերը, որոնք մասնատված են գետային էրոզիայի հետևանքով։

Հյուսիսային լայնության 34° -ից հարավ մակերեսուցիքը կազմված է վերին պալեոգոյան ապարներից, որտեղ գետերն ստեղծել են խոր՝ $200-300$ մ.-ի հասնող կանիոնաձև հովիտներ։ Այս շրջանը հարուստ է ռելիեֆի կարստային ձևերով։

Կենտրոնական և Մեծ հարթավայրերից հարավ են գտնվում Մերձափնյա դաշտավայրերը (Մերձալանտյան և Մերձմեքսիկական)։ Այս տարածքի կառուցվածքում մեծ տարածում ունեն կավճի, պալեոգենի ու չորրորդականի հասակի $8-10$ հազար մետր հզորության շերտախմբերը, որոնք ծածկում են հերցինյան հիմքը։ Դաշտավայրերն ունեն թույլ թեքություն դեպի հարավ, որտեղ նկատելի են խիստ ճահճացված ծովային դարավանդները՝ եղրավորված լագուններով, մարշերով։ Դեպի հյուսիս դաշտավայրերը կուեստային թմբաշարերով միանում են Կենտրոնական հարթավայրերին։ Ֆլորիդայի մակերեսուցիքը զարգացած են ռելիեֆի կարստային ձևերը։ Դաշտավայրերի ռելիեֆը մասնատված է գետային խիտ ցանցով։ Գետերի ստորջրյա հովիտները շարունակվում են դեպի ծով՝ առաջացնելով կանիոններ։ Միսսիսիպի գետի

Սառցապատման ժամանակ Հյուսիսային Ամերիկայի մերձափնյա ծովերն ավելի փոքր են եղել, Չուկոտյան և Բերինգի ծովերի միջև գոյություն է ունեցել ցամաքային մի նեղ շերտ և այդ ցամաքային կամրջով ոչ միայն ֆառնան ու ֆլորան են միգրացիա կատարել, այլ նաև մարդն է թափանցել Եվրասիայից Ամերիկա (ամերիկյան բնիկները): Սառցադաշտերի հալվելու և տեկտոնական շարժումների շնորհիվ Հյուսիսային Ամերիկայի մերձափնյա ցածր հատվածները, ինչպես նաև Բերինգի նեղուցի շրջանի ցամաքային կամուրջն անցել են զրի տակ: Միայն Պանամայի պարանոցով նա կապ է ունեցել Հարավային Ամերիկայի հետ: Մայր ցամաքի հյուսիսային շրջանում գոյացել են մի շարք սառցադաշտային ծագման լճեր: Չորրորդականի սառցադաշտերը վերափոխել են Հյուսիսային Ամերիկայի ոելիեֆը. Կանադական վահանի շրջանում մեծ տարածում ունեն էկզարտացիոն, իսկ Հարավային՝ Հարթավայրային մասերում՝ ոելիեֆի կուտակումային ձեռքը՝ զանդրային ավազները, լցուսային նստվածները և այլն: Սառցադաշտերն ավելի մեծ ոելիեֆագոյացնող դեր են կատարել Կորդիլիերներում (Հատկապես Սիեռա Նևադայի, Կասկադյան), որտեղից նրանք գեպի արևելյան Հարթավայրեր են դուրս բերել մեծ քանակությամբ մորենային նյութեր: Սառցադաշտերի լրիվ անհետանալուց հետո մայր ցամաքի բնական լանդշաֆտը հետզհետե ձեռք է բերել ժամանակակից տեսքը:

ԹԵԼԻԵՖԸ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ

Հյուսիսային Ամերիկայի ոելիեֆը բազմազան է: Նրանում լրիվ արտահայտված են բոլոր ուղղաձիգ գոտիները, սակայն տարածքի գերակշռող մասն են կազմում 200—250 մ բարձրությունները (զբաղեցնում են ցամաքի կեսը). դրանք հիմնականում հարթություններ և սարավանդներ են: Դաշտավայրերը գրավում են տարածքի 1/5-ը, իսկ մոտ 1/4-ը զբաղեցնում են մինչև 1000 մ բարձրությունները՝ լեռնաշղթաներով ու սարահարթերով: Իր միջին բարձրությամբ (720 մ) Հյուսիսային Ամերիկան Ասիայից հետո գրավում է երկրորդ տեղը:

Հյուսիսային Ամերիկայի սահմաններում կարելի է առանձնացնել շորս խոշոր մորֆոստրուկտորային շրջաններ, որոնք միմյանցից տարբերվում են ոչ միայն տեկտոնական առանձնահատկություններով, այլև ոելիեֆի բնույթով: Դրանք հիմնական ամերիկյան բնակչության ազգային կազմում կազմում են մեծ մասը:

1. Հարթավայրերի ու բարձրությունների շրջանը (ցամաքի հյուսիսային, կենտրոնական և հարավային մասերը):

Հ Մինչքեմբրյան և պալեոզոյան հիմքի վրա վերածնված լեռնային շրջանը (Դրենլանդիան և Կանադական Արկտիկական կղզիախմբի հյուսիս-արևելքը):

3. Ապալաշյան լեռների շրջանը:

4. Մեզո-կայնոպոյան երիտասարդ ժալքավորության լեռների շրջանը (Կորդիլիերներ):

Պլատֆորմի շրջանի հարթավայրերն ու բարձրությունները ձգվում են Արկտիկայից մինչև Մեքսիկական ծոց: Դրանք ընդգրկում են Կանադական վահանի մեծ մասը, պլատֆորմի իջեցման շրջանները (սալը) և հերցինյան ծալքավոր գոտու ցածր մասերը: Տեկտոնական տեսակետից սրանք մայր ցամաքի համեմատաբար կայուն հատվածն էն: Միայն նրա եզրային որոշ մասեր իշխում են (Մեքսիկայի ան ծովափնյա շրջան), որոշ մասեր՝ բարձրանում (Կանադական վահան, Մեծ հարթավայրեր):

Այս տարածքի համեմատաբար խոշոր միավոր է Լավրենտյան բարձրությունը, որն ընդգրկում է Կանադական վահանի մայրցամաքային հատվածը: Այն իրենից ներկայացնում է մինչքեմբրյան ծալքավոր հիմքով պալեոզոյան մի պենեպլեն: Սակայն իդեալական հարթություն չէ, նրանում կան մինչև 100 մ-ի հասնող բարձրություններ, առանձին բլրաշարեր, որոնք ունեն գմրեթաձև կատարներ: Այդ ալիքավոր մակերևույթում զգալի տարածում ունեն ջրասառցաղաշտային գոյացությունները՝ մորենները, օղերը, դրումլինները: Այդ գոյացությունների հզորության փոքրության շնորհիվ առանձին հատվածներում դրանց տակից մայր ապարները մերկանում են՝ առաջացնելով խոյի ճակատներ, գանգրահեր ժայռեր: Զգալի տարածում ունեն լճերը, որոնք կազմում են տարածքի 1/3 մասը:

Լավրենտյան բարձրության միջին բարձրությունը կազմում է 300—400 մ: Այս բարձրության անբաժանելի մասերն են Հուդակոնի ծոցի իջվածքը և Մակենզիի հովիտը, որտեղ մինչքեմբրյան հիմքը թաղված է պալեոզոյան հասակի կրաքարային շերտախմբերի տակ: Վերջիններս ունեն հարթ, խստ ճահճապատ մակերևույթ և հետսառցաղաշտային շրջանում ենթարկվել են ծովային տրանսգրեսիայի: Հավերժական սառցույթի և փուխր նստվածքների տարածման հետևանքով Հուդակոնի ծոցի և Մակենզիի իջ-

վածքների շրջաններում զգալի տարածում ունեն թերմոկարստացին երևությները:

Լավրենտյան բարձրությունից հյուսիս ժամանակակից ու լիեֆի ձևավորման գործում զգալի դեր են խաղացել նեռտեկտոնական շարժումները, որի շնորհիվ Վիկտորիա, Բանք կղզիներում և Մելքիլ ու Բութիա թերակղզիների շրջանում հարթություններն ընդմիջվում են ցածրություններով ու 500 մ բարձրության հասնող սարավանդներով:

Կենտրոնական հարթավայրեր.— Տարածվում են Լավրենտյան բարձրությունից հարավ, ԱՄՆ-ի տարածքում: Ունեն 200—250 մ բարձրություն և համապատասխանում են Հյուսիսամերիկյան պլատֆորմի հարավային մասին: Կազմված են հիմնականու պալեոզոյան հասակի նստվածքային ապարներից: Վերջիններս ունենալով ոչ միայն հորիզոնական, այլև փոքրաթեք դասավորություն, առաջացրել են տեկտոնական գմբեթներ՝ անտեկլիզներ՝ ցածրություններ՝ սինեկլիզներ: Անտեկլիզները համապատասխանում են մակերեսույթին մոտ գտնվող կարծր, իսկ սինեկլիզները՝ հեշտ լուծվող փուխր ապարների տարածման վայրերին: Կենտրոնական հարթավայրերի հարավային մասում մինչքեմքրյան կարծր հիմքը մերկանում է Օզարկի 760 մ.-ի հասնող բարձրությունում, իսկ նրանից հարավ գտնվում են դեռևս կրաքարային ավազաքարային կառուցվածք ունեցող Ուոշիթոփի ոչ բարձր (88 մ) լեռները:

Հարթավայրերի տարածքում Ապալաչյան լեռներից արևմուտք ձգվում սիլուրյան դոլոմիտներից կազմված կուեստային ելուստը՝ հյուսիսում հասնելով մինչև Միչիգանի սինեկլիզը, որի բարձրությունը առանձին հատվածներում հասնում է 300 մ.-ի: Էրի Օնտարիո լճերի միջև այդ ելուստի վրա է գտնվում հանրահայտ նիագարայի ջրվեժը:

Կենտրոնական հարթավայրերի հյուսիսային մասի ուղիեցիում մեծ տարածում ունեն եղրամորենային կուտակումային ձեվերը՝ մորենային թմբաշարերը, զանդրային դաշտերը, կամերի կուտակումները, որոնք հարավից եղրավորում են Մեծ լճերի ափերը: Հյուսիսային լայնության 42° -ից հարավ սառցադաշտայի նստվածքները ծածկված են լցուսի շերտերով, որոնց վրա գոյացած հողերը բավականին բերդի են և կազմում են ԱՄՆ-ի գյուղատնտեսական կարևոր շրջանը: 45° -ից հարավ ուղիեցիում տիրապետող են կարբոնի հասակի կրաքարային ապարները, որտեղ

Էրողիոն մասնատվածության մեծացման հետ միասին լայնորեն զարգացած են ոելիեֆի կարստային ձևերը: Կենտրոնական հարթավայրերի հարավ-արելքում են գտնվում հայտնի Մամոնտի քարայրները, որոնց երկարությունը հասնում է 225 կմ-ի:

Հյուսիսամերիկյան պլատֆորմի արևմտյան մասն իր վրա ունի ծովային ու ցամաքային հզոր շերտախմբեր և նեռտեկտոնական շարժումների շնորհիվ բարձրացել է: Դա Մեծ հարթավայրերի շրջանն է, որը դեպի Կորդիլիերներ բարձրանում է աստիճանաձև և նախալեռներում հասնում 1500—1600 մ բարձրության ու աննկատելի ծովզում Կորդիլիերներին:

Մեծ հարթավայրերի ոելիեֆի մեծ մասն աշքի է ընկնում էրոցիոն մասնատվածությամբ, զրբաժանային հատվածները հարթ են՝ կազմված կավճի, պալեոգենի ու նեոգենի ավազաքարերից, որոնք ծածկված են չորրորդականի լցոսանման ավազակավերով, իսկ հյուսիսում՝ սառցադաշտային նստվածքներով:

Հյուսիսից հարավ Մեծ հարթավայրերը ձգվում են մոտ 4000 կմ: Միսսուրի գետից հյուսիս ոելիեֆում մեծ տարածում ունեն սառցադաշտային կուտակումային ձևերը: Հարթավայրերի միջին մասում զգալի տարածում ունեն լցոսային ավազակավերոց կազմված հզոր շերտախմբերը, որոնք մասնատված են գետային էրողիայի հետևանքով:

Հյուսիսային լայնության 34° -ից հարավ մակերևույթը կազմված է վերին պալեոգոյան ապարներից, որտեղ գետերն ստեղծել են խոր՝ 200—300 մ-ի հասնող կանիոնաձև հովիտներ: Այս շրջանը հարուստ է ոելիեֆի կարստային ձևերով:

Կենտրոնական և Մեծ հարթավայրերից հարավ են գտնվում Մերձափնյա դաշտավայրերը (Մերձալանտյան և Մերձմեքսիկական): Այս տարածքի կառուցվածքում մեծ տարածում ունեն կավճի, պալեոգենի ու չորրորդականի հասակի 8—10 հազար մետր հզորության շերտախմբերը, որոնք ծածկում են հերցինյան հիմքը: Դաշտավայրերն ունեն թույլ թեքություն դեպի հարավ, որտեղ նկատելի են խիստ ճահճացված ծովային դարավանդները՝ եղրավորված լագուններով, մարշերով: Դեպի հյուսիս դաշտավայրերը կուեստային թմբաշարերով միանում են Կենտրոնական հարթավայրերին: Ֆլորիդայի մակերևույթում զարգացած են ոելիեֆի կարստային ձևերը: Դաշտավայրերի ոելիեֆը մասնատված է գետային խիտ ցանցով: Դետերի ստորջրյա հովիտները շարունակվում են դեպի ծով՝ առաջացնելով կանիոններ: Միսսիսիպի գետի

Հովտով Մերձափնյա գաշտավայրերը բաժանվում են արևմուտքում՝ Մերձմեքսիկականի, արևելքում՝ Մերձատլանտյանի:

Վերածնված լեռնային շրջան.— Զբաղեցնում է Հյուսիսային Ամերիկայի հյուսիսարևելյան մասը: Երկրաբանական տեսակետից նման է Նախորդ շրջանին, սակայն նեռտեկտոնական ակտիվ շարժումների շնորհիվ վայրը բարձրանալով ձեռք է բերել երիտասարդ լեռնային տեսք (Բաֆինի Երկիր կղզում նույնիսկ հասել է 2500 մ բարձրության):

Կավճի և նեռգենի գարաշրջանների ուղղաձիգ բարձրացումների ժամանակ վայրն ուղեկցվել է ինտենսիվ հրաբխականությամբ: Ավելի ինտենսիվ են բարձրացել Արևելագրենդական լեռները (3700 մ), որոնք ուժեղ մասնատված են սառցադաշտերի կողմից: Լեռնային մյուս գոտին ձգվում է համարյա Արևելագրենդական լեռներին ուղղահայաց: Գրենլանդիայի հյուսիսային ափերին զուգահեռ շարունակվելով դեպի էլսմիր և Մելվիլ կղզիները, հասնելով մինչև 3000 մ բարձրության: Այս լեռները կազմըված են ստորին-վերին պալեոզոյան և մեզոզոյան ծալքավորումներից: Սրանց շարունակությունն են կազմում կոմոնոսովի լեռնաշղթան և Ասիայի հյուսիսարևելյան լեռները:

Լեռնային այս շրջանն աշքի է ընկնում ժամանակակից սառցապատմամբ: Գրենլանդիայում սառցադաշտային վահանը գրավում է շուրջ 1726 հազար հառ կմ մակերես: Սառցադաշտեր կան նաև Կանադական Արկտիկական կղզիախմբի արևելյան կղզիներում: Արևմտյան կղզիների շրջանում կիմայի ցամաքայնության շնորհիվ սառցադաշտեր համարյա չկան, սակայն այնտեղ մեծ տարածում ունեն սառնամանիքային հողմահարության ձևերը՝ թերմոկարստային, սոլիֆլուկցիոն և Արկտիկային յուրահատուկ ռելիեֆի ձևերը:

Ապալաշներ.— Միջին բարձրության լեռներ են և ձգվում են Հյուսիսային Ամերիկայի հարավ-արևելքով: Ապալաշները Մոխոկի իշվածքով և Հուդզոն գետի հովտով բաժանվում են հյուսիսային ու հարավային մասերի: Նրա հյուսիսը նյութառնդենդ կրղզու հետ ունի կալեղոնյան հասակ, իսկ հարավը՝ կալեղոնյան-հերցինյան բարդ կառուցվածք: Մինչև մեզոզոյի վերջը Ապալաշները ենթարկվել են դենուգացիայի ու ձեռք բերել ցածր, հարթ մակերեսությով, քայլայված ուղիեցով լեռների տեսք, միայն կավճում և կայնողոյում բարձրանալով դարձել են միջին բարձրության լեռներ: Ապալաշները ծալքաբեկորավոր, խիստ քայլայված լեռ-

ներ են, միայն առանձին կարծր ապարներից կազմված լեռնագագաթներ հասնում են 2000 մ բարձրության (Միտչել գագաթը Կապույտ լեռներում՝ 2036 մ):

Հարավային Ապալաշներում առկա են երեք լեռնագրական գոտիներ. 1) արևմտյան, որ կազմված է հիմնականում ավագագարներից ու կրաքարներից, որտեղ ծալքավոր շերտախմբերը լվացվել ու տեղատարվել են՝ մակերևույթին տալով 800—1000 մ բարձրության սարավանդի տեսք; 2) Կենտրոնական մետամորֆային ապարներից կազմված գոտի, որում գտնվում են Կապույտ լեռները; 3) Արևելյան բյուրեղային (գրանիտագնելյացին) գոտի (Պիդմոնտի սարավանդը), որը թեքված է դեպի Մերձատլանտյան դաշտավայր և գոյացնում է այսպես կոչված «Ճրվեծների գիծը»: Բացի այդ, Հարավային Ապալաշներին են դասում նաև նախապալաշյան սարավանդը, որի մասերն են Ալեգանի լեռները և Կամբերենդի ոչ մեծ սարավանդը:

Հյուսիսային Ապալաշները կազմված են հիմնականում բյուրեղային ու մետամորֆիկ (բյուրեղային թերթագարներ, կվարցիտներ) ապարներից, նրա արևելքում են Սպիտակ լեռները՝ Վաշինգտոնու գագաթով (1916 մ), Կանաչ լեռներն ու Աղիրոնդակ ավելի ցածր լեռները: Հյուսիսային Ապալաշները խիստ մասնատվել են ննջափես շորրորդական սաղցապատման, այսպես էլ ժամանակակից էրողիոն ազդակների պատճառով: Հարավային Ապալաշները են սաղցապատվել, այստեղ զգալի տարածում ունեն ռելիեֆի կարստային ու էրոզիոն ձևերը:

Երիտասարդ լեռնային շրջան (Կորդիլիերներ).— Սրանք իւնցից ներկայացնում են մեզոկայնոզոյան ծալքավոր մի բարձրադադիր, միջօրեականի ուղղությամբ ձգվող (մոտ 9000 կմ), լեռային համակարգ (խսպաներեն կորդիլիեր նշանակում է ձգվածարը):

Կորդիլիերները բարդ լեռնային համակարգ են և բաժանվում ներեք մորֆոստրուկտորային գոտու. 1. արևելյան լեռնային, 2. ներքին սարահարթերի ու սարավանդների, 3. արևմտյան լեռային:

Արևելյան գոտին կոչվում է Լարամյան, քանի որ այն գոյացել է արամյան ծալքավորության ժամանակ: Այս գոտու հյուսիսում ն Բրուքսի, դեպի հարավ՝ Մակենզիի, Փայուտ, իսկ ծայրը հարաւում՝ Արևելյան Սիեռա Մադրե լեռները (Մեքսիկայում): Տեկո-

նական տեսակետից այս գոտում կարելի է անշատել երեք տիպ՝ լեռնաշղթաներ.

1. Քեկորածալքավոր. առաջացել են կամարածե բարձրացման մասնատման շնորհիվ, կազմված են պալեոլոյան և մեզոլոյան ստվածքային ապարներից, աշքի են ընկնում վրաշարժերու Այսպիսի լեռներ են Բրուգսի, Մակենզիի, Փայոոտ լեռների արևյան շղթաները, ինչպես նաև մասամբ Արևելյան Սիեռա Մադրի որոնք հասնում են 3000—4000 մ բարձրության և մասնատված են խոր հովիտներով։ Սառցադաշտային էկզարացիայի շնորհի գոտու հյուսիսային լեռնաշղթաներն ունեն ալպյան տիպի ոելին։

2. Մալքարեկորավոր և անտիկլինալային կարամյան գոռաշղթաներ. սրանք կարճ, տարրեր ուղղություններով ձգված, բականին բարձր (մինչև 4000 մ) լեռնաշղթաներ են (Առաջապի Ուինդ Ռիվեր, Աբսարոնկա, Սավաշ և այլն)։ որոնք միմյանց բաժանվում են լայն սինկլինալային գոգավորություններով։ Այսպիսին են նաև Փայոոտ լեռների հարավային մասերը, որք շեն սառցապատվել, այդ պատճառով էլ գագաթներում պահպանվում են հյուսիսային մակերևույթները։

3. Բեկորավոր և ծալքարեկորավոր լեռնաշղթաներ և նևսյան բաթոլիտների տարածման զանգվածներ։ Սրանք բարձր (մինչև 3500 մ) ալպյան ոելիեֆի ձևերով, բարդ լեռնագրությամբ լեռնազանգվածներ են, որոնք տարածվում են Կանադայի հարավում և ԱՄՆ-ի հյուսիսում, Փայոոտ լեռների արևմտյան մարտում և կապող օղակ են արևմտյան լեռնային գոտու միջև։

Ներքին սարավանդների և սարահարթերի գոտին ընդգրկում է Յուկոնի սարահարթը, Ստիկին, Նեչակո, Ֆրյեզերի և Կոլորադոյի սարավանդները, Մեծ Ավազան սարահարթը, Կոլորադո սարավանդը և Մեքսիկական բարձրավանդակի կենտրոնում տարածված սարահարթը։ Սրանց հարթ մակերևույթը մասամբ լցատրվում է երկրաբանական գործոնով։ Յուկոնը պալեոզոյական մնացորդային, հարթ մի զանգված է, որը խիստ մատված է էրոզիոն գործոններից, նրա արևմուտքում տարածված է Յուկոն գետի կողմից գոյացած ակումբլյատիվ ընդարձակ դաշտավայրը։ Ֆրյեզերի, Կոլորադոյի սարավանդները և Մեքսիկական սարահարթի հարավը ծածկված են երիտասարդ լավա ծածկոցով։ Ցամաքային կիմայական պայմանների հետևան հողմահարված նյութերը Մեծ Ավազան սարահարթից դուրս գալիս, այլ տարածվում են այնտեղ՝ ծածկելով միջլեռնային գոտին։

գավորությունները, որի շնորհիվ սարահարթի մակերևույթը հարթվում է: Նման հողմահարման նյութերով ծածկված ռելիեֆ ոմի նաև Մեքսիկական բարձրավանդակի կենտրոնը:

Կոլորադոյի սարավանդը Հյուսիսամերիկյան պլատֆորմի հարավարևմտյան եզրն է, ծածկված նստվածքային շերտախմբերով, որի ինտենսիվ բարձրացման շնորհիվ Կոլորադո գետը առաջացրել է մոտ 1800 մ խորությամբ կանիոն:

Արևմտյան լեռնային գոտին ընդգրկում է Խաղաղ օվկիանոսին հարող բոլոր լեռնաշղթաները, որոնք ունեն նևադայի ծալքավորություն (յուրա): Այն կազմված է երկու զուգահեռ լեռնաշղթաներից, որոնք իրարից բաժանվում են տեկտոնական իջվածքով: Արևելյան շղթաներն ավելի բարձր են, դրանցից են՝ Ալյասկայի, Կանադական, Առափնյա, Կասկադյան, Սիեռա նևադայի, Արևմտյան Սիեռա Մադրեի և հարավում՝ հրաբխային Սիեռայի լեռնաշղթաները: Լեռնային այս գոտին հաճախ անվանում են նեվադյան, քանի որ գոյացել է համանուն լեռնակազմական պրոցեսների շնորհիվ:

Նևադյան լեռներից արևմուտք ընկած սինկլինորիումն ընդգրկում է Կուկի ծոցը Ալյասկայում, Կանադական իջվածքը, Ուփլամետ գետի հովիտը, Կալիֆոռնիայի հովիտը և Կալիֆոռնիայի ծոցը:

Արևմտյան լեռնային գոտին կազմում են՝ Ալեռության, Չուգաչ, Սուրբ Եղիա, Կանադական կղզիների շղթաները, ԱՄՆ-ի Մերձափնյա լեռնաշղթան և մասսամբ Կալիֆոռնիա թերակղզին: Այս գոտին գոյացել է ալպյան լեռնակազմական պրոցեսների շենորհիվ և ունի ավելի երիտասարդ ռելիեֆի ձևեր:

Ալպյան և նևադայի ծալքավոր գոտուն բնորոշ են բարձր դիրքը, ներծին և արտածին հրաբխային երկույթները: 60° հյուսիսային լայնությունից հյուսիս լեռնագագաթներում մեծ տարածում ունեն ժամանակակից սառցադաշտերը, իսկ Ալյասկայի լեռներում սառցադաշտերը լեզվակներով իջնում են նույնիսկ մինչև ծովագի:

Օգտակար հանածոները.— Հյուսիսային Ամերիկան հարուստ է օգտակար հանածոների շատ տեսակներով, որոնք կարելի է ստորաբաժանել չորս խմբի: Առաջին խմբի մեջ դասվում են այն օգտակար հանածոները, որոնցով նա հարուստ է. դրանք են՝ բընական գազը, քարածովիսը և գորշ ածովիսը, ցինկը և մոլիբդենը: Երկրորդ խմբի մեջ են երկաթը, պղինձը, կապարը, նիկելը: Եր-

բորդ խումբը ներկայացնում են նավթը և կոբալտը: Վերջին խումբը կազմում են մնացած օգտակար հանածոները, որոնցով նա այնքան էլ աշքի շի ընկնում՝ մանգան, քրոմ, ալյումինի հումք, վոլֆրամ, անագ և այլն:

Օգտակար հանածոների տեղաբաշխումը սերտորեն կապված է տվյալ շրջանի տեկտոնական կառուցվածքի հետ:

Կանադական վահանը (մերկացած արխեյան, պրոտերոզոյան ապարներում) հարուստ է երկաթով, ոսկով, նիկելով, պղնձով, ուրանով, արծաթով, մոլիբդենով և այլ մետաղային հանածոներով:

Պլատֆորմի սինեկլիզային շրջանները հարուստ են նստվածքային ծագման հանածոներով՝ քարածխով, գորշ ածխով և լիգնիտներով (Մեծ և Կենտրոնական հարթավայրեր): Հարավային մերձափնյա դաշտավայրերը հարուստ են նավթով և բնական գազով: Այս շրջաններում կան նաև կապարի, ցինկի, բարիտի հանածոներ, որոնք գոյացել են նստվածքային շերտերում ներարկված ինտրուզիվ մարմիններից:

Կալեդոնյան ծալքավորության շրջանները հարուստ են երկաթով, բազմամետաղներով, աղբեստով (Ապալաչներ, Նյուֆաունդլենդ):

Հերցինյան ծալքավոր գոտին հարուստ է քարածխով (Ապալաչների նախալեռներ), գազով և նավթով:

Կորդիլիերյան ծալքավոր գոտին հարուստ է բազմապիսի մետաղային օգտակար հանածոներով, որոնք կապված են հիմնականում յուրայի և կավճի հասակի թթու գրանիտոհային ինտրուզիաների հետ: Այստեղ կան զգալի քանակությամբ ոսկու, պղնձի, ցինկի, կապարի, վոլֆրամի, պաշարներ, որոնք հիմնականում ընկած են ԱՄՆ-ի հյուսիսում և Կանադայում: Հարավում տարածված են պղնձամոլիբդենային, արծաթի, ուրանի և տիտանի հանքավայրերը, նաև որոշ քանակությամբ ածխի ու նավթի պաշարներ:

Ալիման

Հյուսիսային Ամերիկան հյուսիսից հարավ ձգվում է մոտ 7000 կմ և ընկած է հինգ կլիմայական գոտիներում՝ արկտիկական, մերձարկտիկական, բարեխառն, մերձարևադարձային և ա-

բևաղարձային: Տարածքի մեծ մասը գտնվում է մերձարկտիկական, բարեխառն և մերձարեադարձային գոտիներում:

Հյուսիսից հարավ մեծ ձգվածության պատճառով ուղիացիոն պայմանները և հատկապես օդի շրջանառության առանձնահատկությունները բավականին տարբեր են: Ցամաքի հյուսիսային մասում տարեկան գումարային ռադիացիան կազմում է 30 կկ/սմ², իսկ հարավ արևմուտքում՝ 180 կկ/սմ²: Ռադիացիայի հաշվեկշռը համապատասխանաբար՝ 20 կկ/սմ² և 60 կկ/սմ² է: Գրենլանդիայում ամբողջ տարին ռադիացիայի հաշվեկշռը բացասական է:

Հյուսիսային Ամերիկայում լեռները ձգվում են միջօրեականի ուղղությամբ արևմուտքում և արևելքում, կենտրոնը ցածր է, այդ պատճառով էլ նպաստավոր պայմաններ են ստեղծվում արկտիկական օդային զանգվածների դեպի հարավ ներխուժելու համար, իսկ արևելադարձայինը, ընդհակառակը՝ հարավից դեպի հյուսիս:

Ցամաքի արևելքը նպաստավոր է Ատլանտյան օվկիանոսի կողմից օդային զանգվածների ներթափանցման համար, իսկ Խաղաղ օվկիանոսյան օդային զանգվածների աղղեցությունը խիստ սահմանափակ է Կորդիլիերների պատճառով:

Բացի վերոհիշյալ գործոններից, Հյուսիսային Ամերիկայի կլիմայի ձևավորման գործում զգալի դեր են խաղում օվկիանոսային հոսանքները: Հարավից գոլֆստրիմ տաք, իսկ հյուսիսից լաբրադորյան ցուրտ հոսանքները նյուֆառմուլենդ կղզու մոտ միմյանց հանդիպելով՝ պայմաններ են ստեղծում ցիկլոնային և անտիցիկլոնային գործոններության համար: Խաղաղ օվկիանոսում հյուսիսային լայնության 40° -ից հյուսիս թափանցող խաղաղօվկիանոսյան տաք հոսանքը նույնիսկ ձմեռը թույլ չի տալիս օդի շերմաստիճանի բացասական անոմալիա, սակայն ոչ այնքան զգալի, որքան հյուսիսատլանտյան տաք հոսանքն Արևմտյան Եվրոպայի ափերի մոտ: 40° հյուսիսային լայնությունից դեպի հարավ շարժվող Կալիֆոռնիայի սառը հոսանքը իր հետ տանում է սառը ջրեր, որի շնորհիվ հյուսիսային լայնության $20-40^{\circ}$ -ում օվկիանոսի 1 ժառ սմ² մակերեսը կորցնում է տարեկան գումարային ռադիացիայի մոտ կեսը ($50-60$ կկ/սմ²):

Մինուրտի շրջանառության ընթացքը Հյուսիսային Ամերիկայում նմանվում է Եվրասիային, սակայն ցամաքի փոքրության և լեռնագրական գործոնների տարբերության պատճառով Հյուսիսային Ամերիկան տարբերվում է Եվրասիայից, հետեւաբար

տարբեր են նաև մթնոլորտի շրջանառության օրինաշափություն-ները:

Հյուսիսային Ամերիկայում օդի հիմնական շրջանառությունը կատարվում է արևմուտքից արևելք ներթափանցումների շընորդիվ, սակայն բարձր լեռների պատճառով օվկիանոսի ազդեցությունը հիմնականում ի հայտ է գալիս Խաղաղ օվկիանոսի ափամերձ շրջանի լեռնալանջերում։ Մայր ցամաքի կենտրոնական մաս խաղաղօվկիանոսյան օդը թափանցում է լեռնանցքներով ու լայնակի հովիտներով արդեն տրանսֆորմացիայի ենթարկված շոր օդի ձևով։ Այդ պատճառով էլ ցամաքի կենտրոնական շրջաններում գերիշխում են ցամաքային օդային զանգվածները։ Իհարկե, դրանք ավելի հզոր չեն, քան Ասիա մայրցամաքում, հետեւաբար չեն գոյացնում բարձր ճնշման կենտրոն, ինչպես ասիական անտիցիկլոնն է։

Հյուսիսային Ամերիկայի արևելյան շրջանին կլոր տարին բնորոշ է ցիկլոնային գործունեություն, հատկապես բարեխառն գոտու սահմաններում։

Կենտրոնական Ամերիկան, ինչպես նաև մայր ցամաքի հարավ-արևելքը ընկած են հյուսիսատլանտյան (Ազորյան) բարձր ճնշման կենտրոնի ազդեցության տակ, իսկ արևմտյան մերձափնյա շրջանները (40° հյուսիսային լայնությունից հարավ) խաղաղօվկիանոսյան (Հավայան) բարձր ճնշման գոտու ազդեցության տակ։ Ցամաքի ծայր հարավային շրջաններն ամառը ընկած են հասարակածային մուսոնների ազդեցության տակ։ Հյուսիսից հարավ մեծ ձգվածության պատճառով Հյուսիսային Ամերիկայում տարբա տարբեր եղանակներին դիտվում են մթնոլորտային տարրեր երևութներ։

Զմունը հյուսիսային լայնության $40-44^{\circ}$ -ից հյուսիս ուղղացիայի հաշվեկշիռը դառնում է բացասական։ Ցամաքն արագ սառչում է, մինչդեռ հարեւան օվկիանոսների վրա օդը լինում է տաք։ Անցնելով ցամաք նա նույնպես սառչում ու խտանում է՝ առաջացնելով բարձր ճնշման կենտրոն, որն ընկած է Կանադայի հյուսիս-արևմուտքում (Կանադական մաքսիմում), որտեղ մթնոլորտային ճնշումը հասնում է 1022 մբ-ի։ Բարձր ճնշման երկրորդ կենտրոն է ստեղծվում մի քիչ հարավում՝ Մեծ Ավազան սարահարթի տարածքում (Հյուսիսամերիկյան մաքսիմում)։ Այդ նույն ժամանակ բարեխառն լայնություններում հյուսիսաղաղօվկիանոսյան և հյուսիսատլանտյան տաք օվկիանոսային հո-

սանքների շնորհիվ առաջանում են երկու ցածր ճնշման կենտրոններ՝ Խոլանդական և Ալեռության։ Խոլանդական մինիմումի շրջանից տաք ու խոնավ օդային զանգվածները ցիկլոնների ձևով թափանցելով Բաֆինի ծովի վրայով դեպի արևմուտք Կորդիլիերյան լեռների ստորոտներում առաջացնում են առատ տեղումներ։

Հյուսիսխաղաղօվկիանոսյան տաք հոսանքի ներգործությամբ Ալեռության մինիմումը Խոլանդականի համեմատությամբ (որը պայմանավորված է գոլֆստրիմի առկայությամբ) ավելի թույլ է արտահայտվում։ Այդ պատճառով էլ ցիկլոնային գործունեությունը տարածվում է միայն արևմտյան մերձափնյա շրջանները՝ անցնելով Կորդիլիերյան բարձրությունը, նրա արևելքում հանդես է գալիս որպես ցամաքային օդային զանգված։

Մայր ցամաքի հարավ արևելքում մերձարևադաշտային բարձր ճնշման (Ազորյան մաքսիմում) կենտրոնը ձմեռը տեղաշարժվում է դեպի հարավ և լինում է ավելի թույլ քան ամառը։ Այդ պատճառով էլ ճնշումն Ատլանտյան օվկիանոսի վրա լինում է ավելի ցածր, քան ցամաքի վրա. ցամաքային օդը շարժվում է դեպի Ատլանտյան օվկիանոս։ Սակայն այդ տեղաշարժը (ցամաքից դեպի Ատլանտյան օվկիանոս) ավելի թույլ է, քանի որ ցամաքի բարձր ճնշման կենտրոնը անկայուն է լինում։

Ձմեռը ցամաքի հյուսիսից ցուրտ օդային զանգվածները, չհանդիպելով լեռնագրական ոչ մի արգելքի, ցամաքի կենտրոնով թափանցում են մինչև հարավային լայնություններ, ընդհուպ մինչև Մեքսիկական ծոց և Ֆլորիդա թերակղզի՝ իշեցնելով օդի շերմաստիճանը 0-ից ցածր։ Մյուս կողմից, տաք օդային զանգվածները, որոնք ձևավորվում են Կարիբյան ծովի և Մեքսիկական ծովի վրա, երբեմն անարգել տարածվում են դեպի հյուսիս և կենտրոնական հարթավայրերում հանդիպելով ցուրտ օդային զանգվածների առաջացնում են առատ տեղումներ ու անկայուն եղանակ։

Մայր ցամաքի հարավ-արևմուտքում գերիշխում են տաք արեադաշտային օդային զանգվածները, որոնք այդտեղ են թափանցում Հավայան մաքսիմումի շրջանից։ Կալիֆոռնիական սառը հոսանքի շնորհիվ ձմեռը Կալիֆոռնիայի և Մեքսիկական բարձրավանդակի արևմտյան մասերը տեղումներ չեն ստանում։

Տաք, չոր օդային զանգվածներով աշքի է ընկնում նաև Ֆլորիդա թերակղզու հարավային մասը, իսկ արևելյան Սիեռա Մադ-

թեի արևելյան լանջերը և նրան հարող Մեքսիկական դաշտավայրի զգալի մասն ստանում են առատ տեղումներ:

Զմեռվա միջին ջերմաստիճանները հյուսիսի ու հարավի միջև մեծ տատանումներ են տալիս. այսպես, Կանադական Արկտիկական արշիպելագի կղզիներում այն լինում է $-25-30^{\circ}$, Գրենլանդիայի կենտրոնում՝ $-40-44^{\circ}$, իսկ Մեքսիկական բարձրավանդակի հարավում և Ֆլորիդա թերակղզում՝ $+20^{\circ}$: Ամենացածր ջերմաստիճաններ նկատվել են Գրենլանդիայի կենտրոնում՝ -70° , Յուկոնի սարահարթում՝ -65° : Ցամաքի մնացած շրջաններում օդի ջերմաստիճանը բարեխառն գոտում տատանվում է $0-20^{\circ}$ -ի, մերձարևադաշտային գոտում՝ $+10-5^{\circ}$ -ի միջև, իսկ արևադարձային գոտում համարյա թե 0 -ից ցածր ջերմաստիճաններ չեն նկատվում:

Զմեռը տեղումների առավելագույն քանակ նկատվում է Խաղաղ օվկիանոսի հյուսիսային շրջանների բարեխառն և մերձարևադաշտային մասերում, ատլանտյան ափամերձ շրջանների 40° -ից հյուսիս ընկած հատվածներում. Հյուսիսային, կենտրոնական ու հարավային շրջանների համար ձմեռն ունի համեմատաբար ցամաքային բնույթ, բացառությամբ ծայր հարավ-արևելքի, որտեղ հյուսիսարևելյան պասատները բերում են առատ տեղումներ:

Զմռանը Հյուսիսային Ամերիկայի մեծ մասը ծածկվում է ձյունով: Լավրենտյան բարձրության, Կենտրոնական հարթավայրերի հյուսիսում, Ապալաչներում ձյունածածկույթի տևողությունը 4-5 ամիս է, Մեծ հարթավայրերի և Կենտրոնական հարթավայրերի հարավում՝ 1-2 ամիս: Լաբրադոր թերակղզու հարավում և հյուսիսային Ապալաչներում, ուր ձմեռը ակտիվ են գործում ցիկլոնները, ձյան ծածկույթի հզորությունը հասնում է 2 մետրի: Ձյունածածկույթն առավելագույն հզորության հասնում է ցամաքի արևմտյան խաղաղօվկիանոսահայաց լեռնալանջերում (Սիեռա Նևադայի բարձր մասերում այն հասել է նույնիսկ $8-10$ մետրի): Հարավարևմտյան ծովափնյա դաշտավայրերում և Կորդիլիերյան սարահարթերում ձյունածածկույթ համարյա թե չի գոյանում: Ձյունածածկույթի հալքն սկսվում է հարավում փետրվարին, իսկ հյուսիսում՝ մայիսին:

Ամռանը Հյուսիսային Ամերիկայի մեծ մասն ուժեղ տաքանում է, այդ պատճառով ցամաքի վրա մթնոլորտային ճնշումը նվազում է, որի կենտրոնն ընկած է հարավ-արևմուտքում: Բարձրագույնը

ճնշման կենտրոններին օվկիանոսների վրա ուժեղանում են և տեղաշարժվում դեպի հյուսիս, հատկապես խաղաղօվկիանոսայինը, որն ընդգրկում է ԱՄՆ-ի արևմտյան ծովափը՝ մինչև հյուսիսային լայնության $35-40^{\circ}$ -ը:

Ամռանն Արկտիկական կղզիների շրջանում տիրապետող է սառը եղանակը: Ցածր ջերմաստիճանների և հետևաբար թույլ գոլորշիացման պատճառով ջրային գոլորշիների կոնդենսացման մակարդակը ցածր է, նույնիսկ բարձր ամպամածության առկայության պայմաններում տեղումներ շատ քիչ են գոյանում: Միայն Կորդիլիերների արևմտյան հողմակողմ լանջերում թափվում են առատ տեղումներ: Ալյասկայի ծովափին և Կանադական Կորդիլիերների արևմտահայաց լանջերում ապրիլից հոկտեմբեր ընկած ժամանակաշրջանում թափվում են $1000-1500$ մմ տեղումներ: Առատ տեղումների և ուժեղ քամիների հետևանքով արևմուտքում տաք ամսվա ջերմաստիճանը տատանվում է $+12 +15$ -ի միջև: Սառուցյալ օվկիանոսի ափամերձ շրջաններում հուլիսյան միջին ջերմաստիճանները չեն հասնում $+10$ -ի, որը պայմանափորված է Հունվոնի ծոցի սառցակալման և Լաբրադորյան սառը հոսանքի միջոցով այսքերգների տեղափոխմամբ դեպի հարավ:

Մայր ցամաքի հարավ-արևմուտքն ընկած է հյուսիսիաղովկիանոսյան (Հավայան) անտիցիկլոնային կենտրոնի ազդեցության տակ. այդ պատճառով էլ հյուսիսային լայնության 40° -ից մինչև Կալիֆոռնիա թերակղզին ներառյալ ամառը շատ քիչ տեղումներ են լինում: Այսպես, օրինակ, ապրիլից հոկտեմբեր ընկած ժամանակաշրջանում Սան Ֆրանցիսկոյում թափվում են ոչ ավելի 100 մմ տեղումներ, որը կազմում է տարեկան տեղումների $1/5$ մասը: Բացի այդ, արևմտյան ծովափի քիչ տեղումներն արդյունք են նաև Կալիֆոռնիայի սառը հոսանքի: Ամառը լինում է պարզկա, չոր ու զով եղանակ: Սան Ֆրանցիսկոյում միջին հուլիսյան ջերմաստիճանը $+14 +15^{\circ}$ է, կու Անգելոսում՝ $+20 +21^{\circ}$: Միևնույն ժամանակ Ատլանտյան օվկիանոսի բարձր ճնշման կենտրոնը (Ազորյան մաքսիմում) ընդգրկում է ընդարձակ մի շրջան՝ իր մեջ առնելով մայր ցամաքի հարավարեկելյան մասը, ընդհուպ մինչև Կորդիլիերյան լեռների արևելյան լանջերը: Հարավ-արևելքից Մեքսիկական ծոցի վրայով տաք, խոնավ արևադարձային օդը շարժվում է դեպի ցամաքի հարավարևմտյան ցածր ճնշման շրջան: Այդ օդը փաստորեն մուտքային հոսանք է, որը ցամաքի հարավում գոյացնում է առատ տեղումներ: Ապրիլից

Հոկտեմբեր մուսոնների շնորհիվ այդ շրջանները ստանում են 600—800 մմ տեղումներ: Օդի ջերմաստիճանը հուլիսին և օգոստոսին հասնում է $+25 + 28^{\circ}$ -ի:

Ցամաքի հարավ-արևելքում երբեմն նկատվում է շոր եղանակ, որն արդյունք է Խաղաղ օվկիանոսի շրջանից շոր օդայի զանգվածների ներթափանցման:

Ամռանը Մեծ հարթավայրերում երբեմն քամիների շնորհի գոյանում են փոշու ամպեր, որոնք հասնում են մինչև արևելյան ծովափ:

Հյուսիսային Ամերիկա մայր ցամաքում ամենաբարձր ջերմաստիճաններ նկատվում են Բարիկական ցածր ճնշման մարդում Կորդիլիերների հարավում, Մեոյալ հովտում դիտվել $\xi + 57^{\circ}$ ջերմություն, որն ամենաբարձրն է ամբողջ արևելյան կիսագնդում:

Հյուսիսային Ամերիկայում տարեկան տեղումները տեղաբաշխված են անհավասարաշափ: Առավելագույն տեղումներ դիտվում են ցամաքի հյուսիսարևմտյան խաղաղօվկիանոսահայաց լեռնալանջերում, որտեղ մերձափնյա լեռների և վանկուվեր կը զու առանձին հատվածներ ստանում են 6000 մմ-ից ավելի տեղումներ, իսկ լեռներից արևելք տեղումների քանակը խիստ նվազում է: Խոնավության տեսակետից մյուս շրջանը ցամաքի հարավ-արևելքն է, որտեղ թափվում են մինչև 2000 մմ տեղումներ, որն արդյունք է Մեքսիկական ծոցի շրջանից ներթափանցող խոնավ օդային զանգվածների: Մոտ 1500—2000 մմ տեղումներ է ստանում Մեքսիկական բարձրավանդակի հարավ-արևելքը: Տեղումների տարեկան քանակը ինչպես դեպի Կենտրոնական հարթավայրեր, այնպես էլ դեպի արկտիկական շրջանները նվազում է: Միջին հաշվով ամբողջ ցամաքի մեծ մասն ստանում է ավելի քան 500 մմ տեղումներ: Ամենաշոր շրջանը Մեծ ավազան սարահարթի հարավն է և Կոլորադոյի ստորին հոսանքի շրջանը, որտեղ թափվում են ոչ ավելի 250 մմ տեղումներ:

Տեղումները Հյուսիսային Ամերիկայում կրում են սեզոնային բնույթ: Զմռանը տեղումների առավելագույն քանակ նկատվում է $32-48^{\circ}$ հյուսիսային լայնության տակ: Կենտրոնական հարթավայրերի 33° -ից հարավ տեղումների մեծ մասը թափվում է գարնանը, հյուսիսում՝ ամռանը: Բնեռային շրջաններում տեղումների զգալի մասը թափվում է ամառվա վերջին և աշնան սկզբին: Տեղումները տարվա մեջ հավասարաշափ են բաշխված հյուսիսարևմբույն ծովափերին և հատկապես հարավ-արևելքում:



1. Կլիմայական գոտիների և մարզերի քարտեզ-սխեմա:

Կլիմայական գոտիները.— Մայր ցամաքի հյուսիսային ծովամերձ շրջանները, Կանադական Արկտիկական կղզիախումբը և Դրենլանդիան մտնում են արկտիկական կլիմայական գոտու մեջ, որտեղ կլոր տարի գերիշխում են արկտիկական օդային դանդվածները: Այս գոտու արևելյան շրջանները, պայմանավորված Ատլանտյան օվկիանոսի տաք հոսանքների ներգործությամբ, ավելի մեղմ կլիմա ունեն, քան արևմուտքը: Զմռան ամենացածր

միջին զերմաստիճաններ (-45 — -50°) նկատվում են Գրենլանդիայում, իսկ մնացած շրջաններում՝ -35 — -40° -ից ցածր չի լինում:

Ամառը համարյա ամենուրեք օդի զերմաստիճանը լինում է բացասական կամ մոտենում է 0° -ի: Արկտիկական գոտում ամբողջ տարին նկատվում են բարձր ամպամածություն, մառախուղներ և ձնաբքեր: Բևեռային գիշերները գոտում տևում են մոտ 5 ամիս: Գոտու արեւելյան շրջանները, մասամբ և Գրենլանդիան, ամբողջությամբ ծածկված են ժամանակակից սառցադաշտերով:

Մերձարկտիկական գոտի.— Ընդգրկում է մայր ցամաքի հյուսիսը, համարյա ամբողջ Ալյասկան (բացի հարավային ծովափից), Հուդզոնի ծոցի մեծ մասը և Լաբրադորի հյուսիսը:

Այս գոտու Ալտլանտյան և խաղաղօվկիանոսյան ափամերձ շրջաններն ունեն օվկիանոսային տիպի կլիմա, իսկ կենտրոնական մասը՝ ցամաքային:

Կենտրոնական ցամաքային կլիմայական տիպն աշքի է ընկնում դաժան ձմեռներով, միջին հունվարյան շերմաստիճաններն իշնում են մինչև -30° -ի, իսկ օվկիանոսային շրջաններում՝ -16 , -20° : Տաք ամսվա միջին շերմաստիճանները տատանվում են $+5$ — $+10^{\circ}$ -ի միջև: Միջին տարեկան տեղումները չեն անցնում 300 — 350 մմ-ից: Զնածածկույթն ունի թույլ հզորություն. մեծ տարածում ունի բազմամյա սառածությունը:

Բարեխառն գոտի.— Հարավային սահմանն արևմուտքում անցնում է Կոլումբիա գետի գետաբերանից հյուսիս, իսկ արևելքում՝ հյուսիսային լայնության 40° -ով: Դոտին աշքի է ընկնում կլիմայական մեծ բազմազանությամբ: Նրա արևելյան մասն ունի Արևելյան Ասիայի նման տիպիկ մուսոնային կլիմա, երբ ձմեռը դիտվում է -8 , -10° շերմություն, իսկ հյուսիսային մասերում՝ նույնիսկ -15 , -20° : Տեղումների քանակն զգալիորեն քիչ է, քան ամռանը, սակայն ցիկլոնային գործունեության շնորհիվ գոյանում է բավականին կայուն ու հզոր ձնածածկություն: Արևելյան ափով հյուսիսից եկող լաբրադորյան սառը հոսանքի պատճառով ամռային շերմաստիճանները $+20^{\circ}$ -ից չեն անցնում: Բացի այդ, սառը ծովային հոսանքի շնորհիվ ամառը մերձափնյա հատվածները միշտ լինում են մառախլապատ:

Բարեխառն գոտու կենտրոնական շրջանները ձմեռն ունեն անտիցիկլոնային խիստ ցուրտ ցամաքային կլիմայական պայմաններ, սակայն արկտիկական օդի ներթափանցման ժամանակ

նկատվում են փոթորիկներ և ձյուն։ Ամառային ջերմաստիճանները շափավոր են (միջինը մինչև $+20^{\circ}$), սակայ ներքեմն Մեքսիկական ծոցի շրջանից արևադարձային օդի ներխուժման պատճառով օդի ջերմաստիճանը բարձրանում է $+40 - +45^{\circ}$ -ի, առաջացնելով երաշտներ ու խորշակներ։ Ցամաքային կլիմա ունեցող կենտրոնական շրջաններում, վայրի ցածր ու հարթ լինելու պատճառով, ինչպես ձմռանը, այնպես էլ ամռանը եղանակն անկայուն է լինում։ Տեղումների առավելագույն քանակ նկատվում է ձմռանը։ Հողում խոնավությունը բավարար է։

Բարեխառն գոտու Կորդիլիերյան համակարգի ներքին սարավանդներն ու սարահարթերն ընկած են արևմտյան օդային զանգվածների ազդեցության տակ և ունեն օվկիանոսայինից գեպի ցամաքային կլիմայի անցողիկ տիպ, սակայն ավելի խոնավ և փոքր ջերմաստիճանային տատանումներով, քան մայր ցամաքի կենտրոնական շրջանները։

Բարեխառն գոտու արևմուտքն ունի օվկիանոսային կլիմա, ուր կլոր տարին գերիշխում են արևմտյան ցիկլոնները, որոնք դեպի ափամերձ շրջաններ են բերում ձմեռը տաք, իսկ ամռաը՝ սառը խաղաղօվկիանոսյան օդը։ Արևմտյան ծովափում ձմռանը օդի ջերմաստիճանները լինում են 0° -ին մոտ, իսկ ամռանը՝ $+12, +14^{\circ}$ ։

Տարվա ընթացքում տեղումները կազմում են $3000 - 4000$ մմ (առավելագույնը՝ 6000 մմ) և բաշխված են հավասարաշափի։ Տեղ-տեղ նկատելի է խոնավության ավելցուկ։

Մերձարևադային գոտի.— Ընդգրկում է արևելքում Ֆլորիդա թերակղզուց արևմուտք մինչև Կալիֆոռնիա թերակղզին։ Գոտու հարավ-արևելքին բնորոշ է մերձարևադարձային մուսոնացին շրջանառությունը։ Ամռանը Ատլանտյան օվկիանոսի կողմից այստեղ է թափանցում ծովային արևադարձային օդը՝ բերելով առատ տեղումներ, իսկ ձմռանը գերիշխում են համեմատաբար ցուրտ ցամաքային օդային զանգվածները, որոնք այստեղ են թափանցում Հյուսիսամերիկյան մաքսիմումի շրջանից։ Օդի ջերմաստիճաններն այդպիսի ներխուժումների հետևանքով կտրուկ նրվագում են, հասնելով մինչև $-8, -10^{\circ}$ -ի, ուղեկցվելով ձյունով։ Մերձարևադարձային գոտու կենտրոնական մասը (Միսսիսիպիի գաշտավայր) ունի հավասարաշափի խոնավ ու տաք կլիմայական պայմաններ։ Ամռանն այնտեղ գերիշխում են արևադարձային օդային զանգվածները, որոնք Մեքսիկական ծոցի շրջանից բերում

են առատ տեղումներ: Ամառային ցիկլոնների ներխուժման ժամանակ հաճախ աղետային փոթորիկներ են գոյանում, որն անվանում են տորնադո: Տաք ամսվա միջին ջերմաստիճանները հասնում են $+25$, $+30^{\circ}$ -ի: Զմունն այդ շրջանում գերիշխող է ցամաքային օդը, ցուրտ ամսվա միջին ջերմաստիճանը 0° -ից բարձր է, իսկ ծայր հարավում՝ $+10$, $+15^{\circ}$: Չնայած դրան, երբեմն հյուսիսից թափանցող ցուրտ օդային զանգվածների հետեւանքով ձմռանը օդի ջերմաստիճանը կտրուկ իշնում է 0° -ից ցածր, նույնիսկ՝ -10 , -15° :

Մերձարևադարձային գոտում գտնվող Կորդիլիերյան համակարգի ներքին սարահարթերն ու սարավանդներն աշքի են ընկնում չոր, շոգ ամառներով և համեմատաբար ցուրտ ձմեռներով, անբավարար խոնավությամբ ($200-300$ մմ): Կլիմայի տիպով ներքին սարահարթերն ու սարավանդները նմանվում են Առաջավոր Ասիայի բարձրավանդակներին:

Արևմտյան խաղաղօվկիանոսյան ափամերձ շրջաններն ու Կորդիլիերյան միջեռնային իշշագագաներն ունեն մերձարևադարձային՝ միջերկրածովային կլիմա՝ խոնավ ձմեռով և չոր ամառով: Ամռանը այդ շրջանն ընկած է խաղաղօվկիանոսյան մաքսիմումի ազդեցության տակ, լինում է կայուն չոր, պարզկա եղանակ: Սակայն երբ այս շրջանի կլիման համեմատում ենք միջերկրածովային (Եվրոպայում) շրջանի կլիմայի հետ, նկատում ենք, որ ամառն այստեղ ավելի զով է՝ Կալիֆոռնիայի սառը հոսանքի շնորհիվ, քան Եվրոպայում: Զմեռը մերձարևադարձային արևմտաքնն ընկնում է գոտու ցիկլոնների ազդեցության տակ, ուստի այստեղ թափկում են առատ տեղումներ:

Արևադարձային գոտի.— Ընկած է հյուսիսային լայնության 30° -ից հարավ: Այստեղ կլիմայական պայմանները բնորոշվում են խաղաղօվկիանոսյան և Ատլանտյան մաքսիմումներով: Մեքսիկայի հյուսիս-արևմտաքնն է Կալիֆոռնիա թերակղզին խաղաղօվկիանոսյան մաքսիմումի շնորհիվ ունեն իսկատ ցամաքային Արևմտյան Սահարայի նման կլիմա: Չնայած կլոր տարին շատքից տեղումներ են թափկում ($100-200$ մմ), այնուամենայնիվ Կալիֆոռնիայի սառը հոսանքի շնորհիվ նկատվում է բարձր հարաբերական խոնավություն ($70-80\%$), ջերմաստիճանային տարեկան տատանումները մեծ են: Արևադարձային գոտու արևելյան շրջաններն ամռանն ընկած են Ատլանտյան օվկիանոսի բարձր ձնշան գոտու ազդեցության տակ և ստանում են առատ տեղում-

իսր, իսկ ձմռանը մասամբ ընկնում են Խաղաղօվկիանոսյան մաք-սիմումի ազդեցության տակ և ավելի քիչ տեղումներ են ստանում: Օդի ջերմաստիճաններն ինչպես ամռանը, այնպես էլ ձմռանը $+20^{\circ}$ -ից ցածր չեն:

Ներքին ջրերը

Տարեկան հոսքի ծավալով (մոտ 8000 խոր կմ) Հյուսիսային Ամերիկան գերազանցում է Ավստրալիային, Անտարկտիդային և Աֆրիկային, իսկ հոսքի հավասար բաշխվածությամբ զիջում է միայն Հարավային Ամերիկային:

Հյուսիսային Ամերիկայի գետերի մեծ մասը պատկանում են Ատլանտյան օվկիանոսի ավազանին, ավելի քիչ՝ Խաղաղ և Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսների ավազաններին: Խաղաղ ու Ատլանտյան օվկիանոսների ավազանների միջև ջրբաժանն անցնում է Ժայռոտ լեռներով, իսկ Ատլանտյան և Սառուցյալ օվկիանոսների ավազանների միջև ջրբաժանը կտրուկ կերպով չի արտահայտված, այն անցնում է մոտ 49° հյուսիսային լայնությամբ և Կենտրոնական հարթավայրերի հյուսիսային ու Լավրենտյան բարձրության հարավային հատվածներով:

Հյուսիսային Ամերիկայի հյուսիսը, պայմանավորված ոչ վաղ անցյալի սառցապատմամբ, ունի երիտասարդ ջրագրական ցանց, իսկ ցամաքի հարավում գետահովիտները լավ են մշակված, որն արդյունք է ջրագրական ցանցի հին լինելու: Հյուսիսային Ամերիկայի գետերն օժտված են հսկայական էներգոսեռլրով, որի գգալի մասը յուրացված է: Գետերն ունեն տրանսպորտային կարևոր նշանակություն, դրանց մեծ մասը ջրանցքներով միացված է միմյանց հետ:

Գետերի գգալի մասն ունի անձրևային սնուցում. դա հատկապես վերաբերում է մայր ցամաքի հարավարևելյան և մասամբ կենտրոնական շրջաններին, որտեղ կամ բոլորովին ձյուն չի գալիս, կամ շատ կարճ ժամանակ է տևում: Այդ պատճառով էլ գետերի սնուցումը հիմնականում անձրևային է:

Հարավ-արևելքում տեղումների մեծ մասը թափվում է ամռան սեզոնում, սակայն ձմեռն էլ այնտեղ խոնավության պակաս չի զգացվում: Ապալաչյան լեռների արևելյան լանջերում հոսքի շերտի բարձրությունը կազմում է մոտ 1500 մմ: Ապալաչներից դեպի Ատլանտյան օվկիանոս հոսող գետերը կարճ են, սակայն հորդառատ և արագահոս, հարուստ սահանքներով ու ջրվեժնե-

բով։ Թոլոր գետերը, դուրս գալով մերձափնյա դաշտավայր, էս տուարային ափերով թափվում են օվկիանոս։ Հարավ-արևելք համեմատաբար խոշոր գետերից են՝ Հուղղոնը, Դելավերը, Սակուեհանան, Պոտոմակը և Սավանան։

Ապալաշներից դեպի հարավ-արևմուտք հոսող Միսսիսիպի ձախակողմյան վտակ Օհայոն իր թեննեսի վտակով տարվա մեջ մասը ջրառատ է և ունի հիդրոէներգիայի մեծ պաշարներ։

Հյուսիսային Ամերիկա մայր ցամաքի կենտրոնով է հոսող բավականին բարդ ջրագրական ցանց և խառը սնուցում ունեցող աշխարհի խոշորագույն գետերից մեկը՝ Միսսիսիպին։ Միսսիսիպիի աջակողմյան վտակները (Միսսուրի, Պլաթ, Կանզաս, Արկանզաս, Ռիեդ-ռիվեր) հիմնականում ունեն անձրեային և մասամբ ժայռոտ լեռներից ծյունահալոցքային սնուցում։ Գարնանը և ամառվա սկզբին վերոհիշյալ գետերը անձրեների և հալոցքային ջրերի շնորհիվ խիստ հորդանում են, իսկ տարվա մնացած ժամանակ ծանծաղում են, առանձին դեպքերում՝ չորանում։ Հորդացած ժամանակ գետերը մեծ քանակությամբ բեկորային նյութ են դուրս բերում դեպի Մեծ հարթավայրերի արենելյան շրջանները, իսկ ծանծաղ ժամանակ երբեմն կորչում իրենց իսկ նստվածքների մեջ։ Այդ գետերի ջրերը մեծ մասամբ օգտագործում են ոռոգման նպատակներով։

Հարավ-արևմուտքը և Մեքսիկայի հյուսիսը ցամաքային կլիմայի պատճառով համարյա թե զուրկ են մշտական հոսքից եթե չհաշվենք մի քանի գետեր, որոնք սնվում են լեռներում կուտակված ձյան հալոցքային ջրերից։ Այդ շրջաններում հիմնականում տարածված են ժամանակավոր ոչ մեծ գետերը, որոնք, իշնելով լեռներից, կորչում են գոգավորություններում կուտակված փուլիր բերվածքներում կամ թափվում են Մեծ Ավազանի տարածքում գտնվող աղի լճերի մեջ։ Հոսքի շերտի բարձրությունը 5 մմ-ից շի անցնում։

Միջերկրածովային տիպի կլիմայական պայմանների շնորհիվ հարավ-արևմուտքի մի շարք գետեր հորդառատ են ձմռանը, իսկ ամռանը դառնում են խիստ սակավաջուր։

ԱՄՆ-ի հյուսիսի, Կանադայի և Ալյասկայի գետերը մեծ մասմբ սնվում են ձյան և սառցադաշտային հալոցքային ջրերով կամ գրանց հոսքը կարգավորվում է լճերով։

Հյուսիսի և արևմուտքի գետերի զգալի մասը սկիզբ է առնաւ Կորդիլիերներից, հորդանում հալոցքային ջրերի հաշվին։ Սրանք

տիպիկ ալպյան ռեժիմի ամառային վարարման գետեր են (Կուլումբիա, Ֆրեզեր): Հյուսիսարևմտյան՝ Խաղաղ օվկիանոս թափվող գետերին բնորոշ է հոսքի շերտի մեծ բարձրություն (1500—1600 մմ):

Հյուսիսային Ամերիկայի ամենագլխավոր ջրային զարկերակը Միսսիսիպին է իր համակարգով, որն ունի 6420 կմ երկարություն: Բուն Միսսիսիպին երկարությամբ զիջում է Միսսուրի վտակին: Միսսուրիի երկարությունը 4720 կմ է, իսկ Միսսիսիպիինը՝ 3950 կմ: Միսսիսիպիի ջրահավաք ավազանը կազմում է 3238 հազար քառ կմ, միջին տարեկան ծախսը գետաբերանում՝ 19000 խոր մ/վրկ: Միսսիսիպի՝ Հնդկացիների լեզվով նշանակում է «ջրերի հայր»: Միսսիսիպիի ռեժիմը խիստ բարդ է, որ բացատրվում է գետի ավազանի մեծությամբ և բազմազան բնական պայմաններով: Գետն սկիզբ է առնում Այտասկա ոչ մեծ լճից: Նրա վերին հոսանքում կան մի շարք սահանքներ: Անցնելով Կենտրոնական հարթավայրերով, նա ընդունում է մի շարք վտակներ: Առաջին խոր վտակը Միսսուրին է, որը, չնայած իր մեծ երկարության, ջրառատ չէ: Միսսուրին սկիզբ է առնում Ժայռոտ լեռներից: աշքի է ընկնում տարվա ընթացքում մակարդակի զգալի տատանմամբ ու անհավասար հոսքով: Միջին տարեկան ծախսը 2000 խոր մ/վրկ է, իսկ առավելագույնը՝ 17000 խոր մ/վրկ, նվազագույնը՝ 150 խոր մ/վրկ: Հորդառատ անձրևների շնորհիվ Միսսուրին մեծ քանակությամբ կախված նյութեր է տեղափոխում դեպի ստորին հոսանքները, իսկ երբեմն էլ հովտով հոսում են միանգամայն ցեխաջրեր: Զմեռը Միսսուրին վերին հոսանքում սառչում է, իսկ գարնանային հալքի և ինտենսիվ հորդացման ժամանակ մեծ վնասներ է պատճառում ափամերձ շրջաններին:

Միսսիսիպիի ձախակողմյան խոշոր վտակն է Օհայոն, որի երկարությունը 1580 կմ է: Օհայոն հորդառատ գետ է. միջին տարեկան ծախսը կազմում է 7500 խոր մ/վրկ: Գետը հատկապես հորդառատ է դառնում ամառային մուսոնային անձրևների ժամանակ, սակայն առավելագույն հոսքը նկատվում է գարնանը, երբ անձրևաջրերին գումարվում են նաև մնացած ջրերը: Գարնան վերջին ու ամռան սկզբին (կապված Օհայոյի վարարման հետ) Միսսիսիպին ստորին հոսանքներում դուրս է գալիս իր ափերից և հսկայական վնաս պատճառում գյուղատնտեսական ցանքատարածություններին: Այդ պատճառով էլ Միսսիսիպիի ստորին հոսանքն այժմ արգելապատված է: Միսսիսիպին ստորին հոսանքը

շրջանում բաժանվում է վեց բազուկների ու թափվում Մեքսիկական ծոց՝ առաջացնելով խոշոր դելտա, որը ժողով հաշվին տարեկան ընդարձակվում է մոտ 100 մետրով:

Միսսիսիպիի համակարգն ունի կարևոր էներգետիկ ու հատկապես տրանսպորտային նշանակություն: Նա նավարկելի ջրանցքով միացած է Հյուսիսամերիկյան Մեծ լճերի համակարգին: Այսպես, Միչիգան լճին է միացած Իլինոյս, իսկ էրի լճին՝ Օհայո վտակներով: Նրա համակարգի նավարկելի հատվածների երկարությունը հասնում է մոտ 25 հազար կմ-ի: Միսսիսիպիի ջրերով ոռոգվում են Կենտրոնական, Մեծ հարթավայրերի և Միսսիսիպիի դաշտավայրի ցանքատարածությունները:

Կարևոր գետերից է նաև Հյուսիսամերիկյան Մեծ լճերից սկիզբ առնող Ս. Լավրենտիոս գետը, որն ունի մոտ 3130 կմ երկարություն: Միջին տարեկան ծախսը կազմում է 6637 խոր մ/վրկ: Քանի որ գետն սկիզբ է առնում լճերից, հետևաբար կլոր տարին ունի կայուն ռեժիմ: Դեկտեմբերի կեսերից մինչև ապրիլի կեսերը սառչում է: Ս. Լավրենտիոս գետը, Մեծ լճերի հետ, կարևոր տրանսպորտային ուղի է, որի երկարությունը կազմում է մոտ 3000 կմ:

Խոշոր գետերից հիշատակության արժանի է Մակենզին, որի վերին հոսանքը կոչվում է Աթաբասկա: Այն սկիզբ է առնում Ժայռոտ լեռներից և թափվում Աթաբասկա լճի մեջ, որտեղից դուրս գալով գետը կոչվում է Ստրկական գետ՝ մինչև Մեծ Ստրկական լճի մեջ թափվելը: Մեծ Ստրկական լճից դուրս գալով՝ գետը կոչվում է Մակենզի: Գետի երկարությունը 4600 կմ է, թափվում է Բոֆորտի ծովը՝ առաջացնելով խոշոր դելտա: Մակենզիի վերին հոսանքը սահանքավոր է, հարուստ էներգառեսուրսներով, որի զգալի մասը յուրացված է: Հոկտեմբերից ապրիլ ամիսներին գետը սառչում, իսկ գետաբերանային հատվածում սառցակալումից ազատվում է միայն մայիսին: Գետի վերին հոսանքն ավելի շուտ է ազատվում սառցակալումից, քան ստորինը, այդ պատճառվ էլ ստորին հոսանքի շրջանում ամեն տարի սառուցներն ստեղծում են զատորներ՝ զգալիորեն վնաս պատճառելով հովտում տարածված անտառներին: Մակենզին կարևոր ջրային ուղի է: Այն միակն է, թերևս, որ Կանադայի հյուսիսը կապում է հարավի հետ: Նրանով գեղի հարավ են տեղափոխում Մեծ Արջի լճի շրջանի օգտակար հանածոները և միջին հոսանքների շրջանի անտառանյութը:

Ծայր Հյուսիս-արևմուտքի՝ Ալյասկայի յուրացման համար կարեոր նշանակություն ունի Յուկոն գետը: Այն նույնպես սկիզբ է առնում Ժայռոտ լեռներից և այնուհետև հոսում համանուն սարահարթով: Գետի երկարությունը 3180 կմ է, ավազանի մակերեսը՝ 855000 քառ կմ: Սնվում է հիմնականում ձնհալքի ջրերով. առավելագույն վարարումը նկատվում է Հուկիսին: Գետը սառցակալվում է 7 ամսից ավելի: Յուկոնը ստորին հոսանքի շրջանում սահանքավոր է, այդ պատճառով էլ նրա գերը բեռներ տեղափոխելու գործում այնքան էլ մեծ չէ, դրա փոխարեն հարուստ է ձկներով:

Հարավ-արևմուտքի խոշոր գետերից է Կոլորադոն, որը նույնպես սկիզբ է առնում Ժայռոտ լեռներից: Նրա երկարությունը 2740 կմ է, ավազանի մակերեսը՝ 635000 քառ կմ: Գետը սնվում է անձրևներից և ձյան հալոցքային ջրերից: Առավելագույն ծախսը լինում է Հունիսին, միջին հոսանքում այն կազմում է 508 խոր մ/վրկ: Ինչպես Կոլորադոն, այնպես էլ նրա վտակները տեղափոխում են մեծ քանակությամբ բեկորային ու կախված նյութեր, որոնք ջրին տալիս են կարմրավուն գույն, այդ պատճառով էլ իսպանացիները գետն անվանել են Կոլորադո (ներկված): Կոլոր նյութերի շնորհիվ գետը տարեկան տասնյակ մետրերով ավելացնում է իր գելտան Կալիֆոռնիայի ծոցի հաշվին: Միջին հոսանքի շրջանում գետը կտրում է համանուն սարավանդը՝ առաջացնելով աշխարհում ամենամեծ՝ 1800—2000 մ խորության Մեծ կանիոնը: Գետի միջին և ստորին հոսանքների շրջանում կառուցված են խոշոր հիգրոէլեկտրակայաններ, նրա ջրերն օգտագործում են ռոռոգման և կու Անժելես ու այլ քաղաքների ջրամատակարարման համար:

Լեռք.— Հյուսիսային Ամերիկայում լճերը մեծ մասամբ տեղաբաշխված են հնագույն սառցապատման տարածման վայրերում, կավրենտյան բարձրության և Մեծ հարթավայրերի շրջաններում: Կարեոր նշանակություն ունեն Մեծ Լճերը (Վերին, Միջիգան, Հուրոն, Սենտ Կլեր, Էրի, Օնտարիո), որոնք կազմում են աշխարհի քաղցրահամ ամենախոշոր ջրային ավազանը: Այս լճերից Վերինի, Միջիգանի, Հուրոնի և Օնտարիոյի հատակները ծովի մակարդակից էլ ցածր են ընկած:

**Մեծ Լճերի տարածությունը, խորությունը և հայելու
բարձրությունը**

Լճերի անվանումը	Տարածու- թյունը (հա- զար քառ. կմ)	Բարձրությունը ծովի մակարդագիծ (մ)	Առավելագույն խորությունը (մ)
Վերին	82,4	183,5	393
Հովրոն	59,6	177,1	228
Միջինան	58,0	177,1	1281
Էրի	25,7	174,7	62
Օնտարիո	19,5	75,3	235
Սենտ Կլեր	1,2	175,0	7

Լճերի ընդ. տարածութ. 246,4

Հյուսիսամերիկյան Մեծ Լճերը դեպի արևելք ընդհանուր թեքություն ունեն: Նման թեքությունը մեծ հարմարություններ է ըստեղծում հիդրոէլեկտրակայանների կառուցման, սակայն գծվարություններ՝ նավագնացության համար: Հատկապես մեծ է էրիից Օնտարիո ընկած բարձրությունների տարրերությունը, որն ստեղծել է սիլուրի կրաքարերից կազմված կուէստային աստիճան, որտեղից նիագարա գետը թափվում է Օնտարիո լճի մեջ՝ առաջացնելով 50 մ բարձրության մի հզոր ջրվեժ: Հյուսիսամերիկյան Մեծ Լճերի գոգավորությունների առաջացման վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ լճերը տեկտոնական ծագում ունեն, սակայն այդ կարծիքը ճիշտ ու վերջնական է միայն Վերին լճի համար: Ուրիշների կարծիքով լճերը գոյացել են սառցադաշտերի և հոսող ջրի գործունեության, ինչպես նաև սառցադաշտերի իզոստատիկ ճնշման շնորհիվ: Կարծիք կա նաև, որ լճային գոգավորություններն առաջացել են վերին պալեոզոյան հասակի նստվածքային շերտերի մեջ գտնվող քարաղի լուծման շնորհիվ: Ամերիկյան հետազոտողները գտնում են, որ լճերը գոյացել են չորրորդական սառցադաշտերի էկզարացիոն գործունեության հետևանքով:

Լճերի ջուրը մաքուր է, թափանցիկ, տարեկան տատանումները 0,6 մետրից չեն անցնում, սառցակալվում են կարճատե, այն էլ ափամերձ հատվածներում: Սառցակալմանը խոչընդոտում են ուժեղ փոթորկային քամիները և կոնվեկցիոն պրոցեսի տեսական լինելը: Մեծ է լճերի տնտեսական նշանակությունը որ-

պես ջրային կարևոր մայրուղի. նրանց համակարգում կառուցվել են մի շարք հիդրոէլեկտրակայաններ:

Բացի Մեծ Լճերից, մի շարք խոշոր լճային ավազաններ կան Լավրենտյան բարձրության և Կենտրոնական հարթավայրերի տարածքում: Դրանց զգալի մասը գոյացել են սառցադաշտերի հալվելուց հետո: Այդ լճերից են՝ Վիննիապեզր, Վիննիապեզոսիսը, Մանիթորան, Մեծ Ստրկական, Մեծ Արչի և այլն:

Մեծ Ավազան սարահարթում կան մի շարք մնացորդային լճեր, որոնք ոչ վաղ երկրաբանական ժամանակաշրջանում՝ պլիստոցենում, եղել են ավելի մեծ ջրային ավազաններ: Դրանցից ամենամեծն է Մեծ Աղի լիճը, որի ջրի աղիությունը հասնում է 137—300% -ի: Զգալի տարածում ունեն խառնարանային և արգելափակման լճերը հրաբխային կոների ու լավաների տարածման վայրերում, ինչպես նաև լագունային լճերը ծովափերին:

Կլիմայական առանձնահատկություններով պայմանավորված՝ Հողաբուսական տիպերի և կենդանական աշխարհի զարգացումն ու տեղաբաշխումը Հյուսիսային Ամերիկայում կրում են զոնայական բնույթ:

Հողեր

Մայր ցամաքի հողերի պատմական զարգացումը սերտորեն կապված է կլիմայական ու բուսական պայմանների հետ: Հյուսիսային լայնության 50° -ից հյուսիսի հողերի տիպերը Ամերիկայում համարյա թե շեն տարբերվում են լուսայի հողերից: Հյուսիսում տարածված են տունդրագլեյան հողերը, որոնք աշքի են ընկնում փոքր հզորությամբ, ցածր շերմաստիճաններով, գերխոնավությամբ: Փշատերև անտառների տակ լայն շերտով ձգվում են տայգայի գոնային հատուկ պողպղային հողերը, որոնց մեջ առանձնացնում ենք գեյապողպղային, տիպիկ պողպղային և ճմապողպղային տիպերը. դրանց հատուկ են խոր շերտով լվացվածությունը և հումուսի ոչ մեծ պարունակությունը: Նման հողեր տարածված են նաև բարեխառն գոտու խաղաղօվկիանոսահայաց լեռնալանջերում: Հյուսիսային լայնության 50° -ից հարավ հողերի տարածումը լայնակի գոնայականություն չունի: Ըստ ի. Պ. Գերասիմովի և Մ. Ա. Գլազովսկայայի, խոնավության փոփոխմանը զուգընթաց կարելի է անշատել երկու հատուկ ստրուկտուր հողային պրովինցիաներ: Առաջին՝ Մերձատլանտյան պրովինցիան աշքի է ընկնում խոնավ կլիմայով: Այստեղ հյուսիսից

Հարավ միմյանց փոխարինում են պողպոլային և գորշ անտառային հողերը:

Երկրորդը ներքին մայրցամաքային գոտու հողայի պրովինցիան է, որը ձգվում է միջօրեականի ուղղությամբ և հաջորդաբար փոխվում արևելքից արևմուտք՝ գորշ անտառային հողերից (Ապալաշների շրջան) պրերիաների սևահողակերպ սևահողերի, շագանակագույնի, գորշ և մոխրագորշ կիսաանապատային հողերի:

Հյուսիսային լայնության $40-36^{\circ}$ մերձարևադարձային գոտում հողերի տիպերը նույնպես փոխվում են արևելքից արևմուտք: Այստեղ բոլոր հողատիպերն աշքի են ընկնում ալիսի զացիայի պրոցեսներով (Հարստացում երկաթի և ալլումինի հիդրօքսիդներով), որի պատճառով հողերն ստանում են կարմիր երանգ: Մերձարևադարձային գոտու հարավ-արևելքի անտառայի կարմրահողերն ու գեղնահողերը Միսսիսիպիից արևմուտք փոխվում են պրերիաների կարմրասև հողերի, որոնք Տեխասի և Նյու Մեքսիկայի նահանգներում անցնում են մոխրադարչնագույն մոխրահողերի, իսկ ծայր արևմուտքում՝ Կալիֆորնիայում, տիպի դարչնագույն հողերի:

Արևադարձային գոտու հողերը նույնպես փոխվում են արևվելքից արևմուտք: Ֆլորիդայի հարավում և Մեքսիկայի արևելքում բարձր խոնավության շնորհիվ տարածված են կարմրահողերը: Մեքսիկական բարձրավանդակում զարգացած են կարմրագորշ և մոխրադարչնագույն հողերը, իսկ Կալիֆորնիայի ափամերձ շրջաններում տիրապետող են անապատային գորշահողերը:

Հյուսիսային Ամերիկայի հողային ծածկը ուժեղ կերպով ենթարկվում է քամու և ջրային էրոզիայի: Ջրային էրոզիայի շնորհիվ հողի վերին բերրի շերտերը լվացվում են ու տեղատարագում տեղի տալով մայր ապարների նորանոր շերտերի մերկացման: Արևմտյան շոր շրջաններից քամու առաջացրած փոշու ամեպերը հասնում են մինչև ԱՄՆ-ի արևելյան նահանգները: Հողերի ինտենսիվ էրոզիայի պատճառները բազմազան են, սակայն գորշ խավորը դրանց մասնավոր սեփականությունն է, անտառների գիշատչորեն հատումը, արոտների անկանոն օգտագործումը տեսական ժամանակով՝ միատիպ կուլտուրաների մշակումը նույն հողահանդակում:

Թուսականությունը

Ինչպես հողերը, այնպես էլ բուսականությունը, կլիմայով պայմանավորված, կրում են զոնայական բնույթի Միկնույն ժամանակ Հյուսիսային Ամերիկայի բուսականության տեղաբաշխումը, բացի զուտ կլիմայական պայմաններից, դգալիորեն կախված է նաև նրա երկրաբանական զարգացման պատմությունից, հատկապես պլիոցեն-շորրորդականից։ Հենց երկրաբանական զարգացման պատմությունն է այն կարեռ պատճառներից մեկը, որի շնորհիվ Հյուսիսային Ամերիկայի արևելքում ավելի շատ տարածված են լայնատերև, իսկ արևմուտքում՝ փշատերև անտառները։ Ըստ Ե. Վ. Վուգֆի (1944), Հյուսիսային Ամերիկայում կավճի վերջում և պալեոգենում մինչև Ալյասկա տիրապետող է եղել բարեխառն գոտու մերձարևադարձային ֆլորան։ Նույն ժամանակ մայր ցամաքի կենտրոնը ծածկված է եղել ծովով, իսկ արևմտյան և արևելյան եզրերը թերակղզու նման ձգվելով, միացած են եղել իրար հյուսիսում։ Կորդիլիերների ցածր լինելու պատճառով Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների միջև ընկած ցամաքում կլիմայական մեծ տարբերություն չի եղել։ Այդ պատճառով անտառային բուսականությունը համարյա թե եղել է նույնը։


Հարավային նեղ պարանոցային շերտն ունեցել է արևադարձային և հատկապես Հարավային Ամերիկայի տաք գոտուն յուրահատուկ ֆլորա։

Նեղունում, հատկապես պլիոցենում տեղի ունեցող ակտիվ տեկտոնական բարձրացումների շնորհիվ սկսել են ձեավորվել ժամանակակից լանդշաֆտները։ Լեռնային արևմուտքի ակտիվ բարձրացման շնորհիվ լայնատերև անտառներն իրենց տեղը հետրզհետե զիջել են փշատերևներին, իսկ արևելքի խոնավ ու տաք կլիմայական պայմանները նպաստավոր են եղել լայնատերևն, նույնիսկ մշտադալար անտառների պահպանման համար։ Հյուսիսային շրջանների ցրտեցման շնորհիվ ջերմասեր բուսականությունն իր տեղը զիջում է ցրտասեր տայգային։ Բացի այդ, մայր ցամաքի կենտրոնում տարածված ծովի ետ քաշվելու հետևանքով կլիման ցրտում է և դառնում նպաստավոր միայն խոտային բուսականության համար։

Չորրորդականի սառցապատումը հյուսիսի լայնարձակ տափածքներում ոչնչացրել է նախկին ֆլորան և նպաստել տունդրացի բուսականության զարգացմանն ու տարածմանը դեպի հարավ։

Սակայն հարավում անտառային ֆլորան չի ոչնչացել և սառցադաշտերի նահանջից հետո վերադարձել է իր նախկին շրջանը:

Ժամանակակից հողաբուսական ծածկույթի ձևավորումը տես է ուսնենում հետսառցադաշտային ժամանակաշրջանում (6—12 հազար տարի առաջ): Չորրորդականի սառցապատման տարածեներում տարածվել են տունդրայական ֆլորայի ներկայացուցիչները, որոնք էլ ավելի դեպի հյուսիս են մղվել փշատերև անտառների կողմից, կլիմայական պայմանների հետզհետե տաքանակատճառով: Այդ երևույթը Հյուսիսային Ամերիկայում նկատվուէ ներկայումս, տունդրան նահանջում է դեպի հյուսիս, մի բան, ուսիսայում չի նկատվում:



2. Բուսաշխարհագրական մարզերի և
ենթամարզերի քարտեզ-սխեմա:

Ժամանքի արևմտյան ու արևելյան եզրերում անտառային ֆլորան պահպանվել է, սակայն այստեղ նույնպես հին զերմասերներն իրենց տեղը զիշել են ցրտադիմացկուններին, բացառոթյամբ մի քանի տեսակների, որոնք ներկայումս համարվում են ացորդներ (ռելիկտներ):

Այսպիսով, պատմական զարգացման, ինչպես նաև ժամանակակից բնական պայմանների առանձնահատկությունների շընորհիվ Հյուսիսային Ամերիկայի բուսականությունը բաժանվում է երկու ֆլորիստիկական խոշոր մարդերի՝ հոլարկտիկական և նեոտրոպիկական:

Հոլարկտիկական մարզ.— Ընդգրկում է ցամաքի Հյուսիսային և կենտրոնական մասերը: Ֆլորայի հիմնական կազմը տունդրայի, անտառային և տափաստանային տեսակներն են և քանի որ ոչ վաղ անցյալում կապ է ունեցել Եվրասիայի հետ, ուստի հոլարկտիկական մարզի ֆլորան շատ քիչ է տարբերվում վերջինից: Մարդի տարածքում առանձնացնում են հետևյալ ենթամարդկան:

1. Արկտիկական ենթամարզը բնորոշ է տունդրայի տիպի բուսականությամբ: Ալյասկայի և Հյուսիսային Կանադայի տունդրան Սիբիրական տունդրայից տարբերվում է քարաքոսերի առատությամբ: Մեծ տարածում ունի եղջերամամուռը, որի հետ զգալի տարածք են գրավում թփերը՝ հավամրգին, մրտավարդը, էնդեմիկ՝ լեռնային դափնին և գիհին: Խոտածեսակներից ամենուրեք տարածված են լեռնային սպիտակածաղիկը և արկտիկական ողբագեղը:

2. Հյուսիսաղաղօվկիանոսյան մարգագետնային ենթամարզը ընդգրկում է Ալեռության կղզիները և աշքի է ընկնում բարձրախոտ մարգագետիններով, բարձր բոշխերի, եղեգնախոտերի, ցորնուկների և այլախոտերի տեսակներով:

3. Կանադական փշատերևանտառային ենթամարզն աշքի է ընկնում ավելի հարուստ ծառային ու թփային տեսակներով, քան Եվրասիական փշատերև անտառների ենթամարզը: Մեծ տարածություն է գրավում «Հուղղոնյան» փշատերև անտառը, որն Ատլանտյանի ափերից ձգվում է մինչև Փայոոտ լեռները: Այս անտառում հիմնական ծառատեսակներից են սև և սպիտակ եղենին, եղեինը, իսկ անտառի հյուսիսային սահմանում՝ ամերիկյան խեծափիճին ու թղթակեղև կեշին: Անտառի հարավային սահմանում հսկայական զանգվածներով տարածված են կաղամախու անտառները, իսկ լարրադորի հարավում՝ բանկսի սոճին, բարդին, կեշին, նույնիսկ լորենին: Անտառներում հարուստ են թփային խմբավորումները՝ մասրենին, հաղարջենին, մոռենին, գերիմաստին և այլն: Ալյասկայում՝ Ցուկոնի հովտային մասերում, տարածված են եղեննու, կեշու, իսկ ջրբաժաններում՝ սպիտակ

և կանադական եղենին, ճահճութ վայրերում՝ սև եղենին, լեռներում տարածված են թղթակեղև կեշին և կաղամախատիպ բարդին։ Ալյասկայի, Ս. Եղիայի, Չուգաչի և Առափնյա լեռնաշղթաների լանջերում տարածված են ավելի ջերմասեր, խոնավասեր ծառատեսակներ՝ սիխտինյան եղենին, նուտկանյան նոճին, արևմըտյան հեմլոկը, իսկ գեպի հարավ՝ լաստենին, եղկինը։

Բրիտանական Կոլումբիայի լեռնային անտառներում տարածված են կենսածառը, հսկա հեմլոկը, դուզլասյան եղենինը և գեղին սոճին։ Ժայռութ լեռների արևելյան ենթալպյան գոտում (800—2000 մ) տարածված են էնդելմանի եղենին, մերձալպյան եղենինը, սոճին, ավելի քիչ՝ լեռնային հեմլոկը, խեժափիճին և սպիտակաբուն սոճին։

Հարավ-արևելքում, Մեծ Լճերի շրջակայքում տարածված է խառն անտառը։ Լճերի հարավային ափերին աճում են ավելի ջերմասեր ծառատեսակներ՝ կենսածառը, հեմլոկը, սոճին, թրդկին, ամերիկյան հացենին, կնճնին, հաճարենին, կաղնին և այլն։ Ներկայումս այդ անտառների դգալի մասը հատված է, որոնց տեղն աճել են հաղարջի, գերիմաստու, թխենու և այլ թփուտներ։

4. Ապալաչյան լայնատերև անտառների ենթամարզն զբաղեցնում են Ապալաչյան լեռները և նրանից արևմուտք ընկած հարթավայրերը։ Տերևաթափ այս անտառները հարուստ ֆլորիստիկական կազմ ունեն։ Այս ենթամարզի ծառատեսակները մասմբ նմանվում են եվրոպական ծառատեսակներին։ Հիմնականում տարածված են կաղնու, հաճարենու, շագանակենու, թղկու, հացենու, լորենու, թեղու, շինարի անտառները։ Սակայն կան նաև տեսակներ, որոնք Եվրոպայում չեն հանդիպում, օրինակ, վարդակակաչը, որը հասնում է 60 մ բարձրության, խոշոր տերեներով ու կարմիր ծաղիկներով, սմախոր, նազվարդը, եղրևանին և այլն։ Այստեղ նույնպես գյուղատնտեսության զարգացման շնորհիվ անտառը խիստ տուժել է՝ տեղի տալով մացառուտային բռնականությանը։ Ենթամարզի արևմտյան հարթավայրային շրջանում տարածված են կաղնու բազմատեսակ անտառները, որոնք հանդես են գալիս սև ընկուղենու և թղենու ուղեկցությամբ։

5. Մերձատլանտյան մերձարևադարձային անտառների ենթամարզն ընդգրկում է ԱՄՆ-ի հարավարևելյան շրջանի խառն անտառները, որոնցում հիմնական ծառատեսակներն են կաղնին, բնեկնախնձին, վիրգինյան կարճասեղ սոճին։ Արևելյան՝ ատլանտյան մասում հիմնականում տարածված են կարմիր կաղնին

և շագանակենին, իսկ Միսսիսիպիի հովտում՝ մերիլենդյան և խողորատերև կաղնին։ Դեպի Հարավ Մերձմեքսիկական դաշտավայրի հիմնականում չոր ավազային հատվածներում տարածված է երկարասեղ սոճին, իսկ խոնավ ավազային հատվածներում՝ բերվեկնախեժին և կարիբյան սոճին, որոնք աշքի են ընկնում արագ աճով ու որակյալ փայտանյութով։ Այստեղ հանդիպում են մշտագալար կաղնի, մագնոլիա, վարդակակաչ և այլն։ Մերձափնյա ձահճուտ վայրերում տարածված են ճահճային նոճին, բարդին, ու հացենին, բամբակածառը և այլն։

6. Կալիֆոռնիայի մերձարևադարձային անտառների ենթամարզը ընդգրկում է նեղ խաղաղօվկիանոսյան մերձափնյա գոտին և լեռների ստորին լանջերը։ Հյուսիսային լայնության 40° -ից հյուսիս կասկադյան լեռների արևելյան լանջերը ծածկված են լեռնային ղեղին սոճու անտառներով, կենսածառի, հսկա մայրու, արևմտյան հեմլոկի և եղեինու խառնուրդով։ Կասկադյան լեռների արևմտյան լանջերում և Օրեգոնի լեռներում տիրապետող է դուգլասյան եղեինը, որի հետ աճում են հեմլոկը, կենսածառը և այլն։ Այս անտառները տալիս են մեծ քանակությամբ թանկարժեք, արդյունաբերական նշանակություն ունեցող փայտանյութ։ Խաղաղօվկիանոսյան ափամերձ շրջանները բռնված են եղենու, հեմլոկի, ինչպես նաև խոշորատերև թղկու, կաղնու, ելակածառ անտառներով։

Հյուսիսային լայնության 40° -ից հարավ անտառն ավելի բազմազան է դառնում։ Ծովափի երկայնքով համարյա մինչև Սան Ֆրանցիսկո ձգվում են «կարմիր անտառները»՝ կազմված մշտագալար սեկվոյայից։ Այդ հսկա ծառերը միոցինյան ժամանակաշրջանի մնացորդներ են, ունեն կարմիր կեղե և հասնում են $80-100$ մ բարձրության։

Փայտանյութի քանակով սեկվոյան աշխարհում գրավում է առաջին տեղը։ Բացի սեկվոյայից, արևմտյան այդ անտառներում աճում են նաև դուգլասյան եղեին, սպիտակ եղեին, ելակածառ, լաստենի և այլն։

Սիեռա Նեադա լեռների արևմտյան լանջերը ծածկված են հսկա սեկվոյայի (մամոնտի ծառ), ղեղին սոճու, դուգլասյան եղեինի, Կալիֆոռնիայի մայրու և ու կաղնու անտառներով։

Սան Ֆրանցիսկոյից հարավ և Սիեռա Նեադայի հարավային լանջերում տարածված են միջերկրածովային տիպի խմբավորումներ, շապարալ (կոշտատերև, մշտագալար, 1—3 մ բարձրու-

թյան թփեր): Զապարալի կազմում հաշվվում են մոտ 100 տեսակ, այդ թվում կաղնի, հավամրգի, սմախ, եղբանի, նույնիսկ սալորենի և այլն:

7. Հյուսիսամերիկյան տափաստանային ենթամարզն ընդգրկում է Կենտրոնական Հարթավայրերի արևմուտքը և Մեծ Հարթավայրերը: Հիմնական բուսականությունը տափաստանայինն է, սակայն արեելյան և հյուսիսային մասերում հանդիպում են նաև անտառներ: Բարձրախոտ տափաստանը Հյուսիսային Ամերիկայում կոչվում է պրերիա, որտեղ բնական խոտածածկի բարձրությունը համար է 1 մ-ի: Պրերիաներն ունեն բազմերանգ բուսականություն, որոնց մասին ոռւս աշխարհագրագետ Ա. Ն. Կրասնովը գրել է. «Վաղ գարնանից մինչև աշնան առաջըն ցրտերը Մանիսորայի պրերիաները իրենցից ներկայացնում են բնական ծաղիկների այգի, որտեղ կարելի է տեսնել զույնզգույն ծաղիկների հերթափոխ ամբողջ վեգետացիոն շրջանում: Նույնիսկ անգլիական մարգագետինները չեն կարող մրցել պրերիաների հետ իրենց գեղեցկությամբ»:

Պրերիաների հիմնական բուսատեսակներն են փետրախոտը, սիզախոտը, խորդենին, մատնունին, զանգակածաղիկը, վիկան, աստղածաղիկը և այլ խոտեր: Դեպի հարավ պրերիաներում աճում են նաև բարձր միրուքաբույսը, փետրախոտը, կելերիան և այլն: Սառատեսակներից հյուսիսում աճում են բարդու և կեշոնոսր անտառներ, իսկ արեելքում՝ խոշորապտուղ կաղնին, լորենին: Բուն պրերիաներից արևմուտք տարածված են տիպիկ սուսական տափաստանները: Տափաստանների խոտածածկն ավելիցած է, քան պրերիաներինը: Այստեղ տարածված են քնախոտը, փետրախոտը, մարգարտածաղիկը, վայրի սոխը և այլն:

Արկանզաս գետի հովտից հարավ տափաստանը նմանվում է մերձարևադարձի, խոտածածկը նոսրանում է: Այստեղ զգալի տարածում ունեն սուկուլենտ-տատասկաթզենին, փշոտ կիսաթփուտները, բիզոնախոտը և այլ չորասիր բույսեր:

8. Հյուսիսամերիկյան անապատային և կիսաանապատային ենթամարզն ընդգրկում է Կոլումբիայի, Կոլորադոյի սարավանդները և Մեծ Ավագան սարահարթի ու Մեքսիկական բարձրավանդակի հյուսիսը: Այստեղ հիմնականում տարածված են թփուտային և կիսաթփուտային բույսերը, որոնք հյուսիսից հարավ դժվարեն փոփոխվում են: Հյուսիսը, Կոլումբիայի սարավանդի կիսաանապատները, ծածկված է նոսր՝ բոշիսային փետրախոտային,

կելերային խոտերով ու կիսաթփուտներով։ Դեպի հարավ՝ Մեծ Ավազան սարահարթում, բուսածածկը կաղմում են բոշխային ու մոխրաթելուկային խոտերը, ծառանման սկ բոշխերը։ Վերջիններս հասնում են երկու մետր բարձրության, ունեն մոտ 5—6 մ երկարության արմատներ։ Բոշխային թփուտները գարնանը թողնում են անտառի տպավորություն, իսկ ամառվա վերջում տերեվաթափելով՝ նրանց ճյուղերը սևավուն գույն են ստանում։ Սարահարթի հարավը ծածկված է մոխրաթելուկային և բորբոսապեսուկային, ցածր բոշխային, իսկ ցածրությունները՝ մացառային բուսականությամբ։

Կոլորադոյի սարավանդը ծածկված է կրեոզոտի թփերով, որի հետ հանդես են գալիս սուկուլենտները (կակտուսները, աղամի ամեղը՝ յուկին)։ Կոլորադո գետից հարավ փշոտ ակացիան, ագավները և կակտուսներն ստեղծել են անանցանելի մացառուտներ։

Նեոտրոպիկական մարզ.— Ընդգրկում է Ֆլորիդայի հարավը և Մեքսիկայի տարածքը, որի ֆլորան ավելի նման է Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի ֆլորային։

Մեքսիկայի տարածքը կոչվում է Մեքսիկական քսերոֆիտ ենթամարդ, որտեղ լայնորեն տարածված են կակտուսների բազմաթիվ տեսակներ (Մեքսիկան իրավամբ կոչվում է կակտուսների հայրենիք), ագավաներ, շուշանազգիներ, կարմրանի բազմաթիվ տեսակներ, լորազգի թփեր և այլն։

Անձրևների ժամանակ Մեքսիկական քսերոֆիտ ենթամարզը համատարած ծածկվում է միամյա խոտատեսակներով, որոնք ամառը լրիվ շրանում ու ոշնչանում են։ Մեքսիկական բարձրավանդակը եղրավորող լեռները ծածկված են կաղնու, սոնու անտառներով, որոնց հետ հանդես են գալիս նոճին և գիշին։ Մեքսիկայի ծովափնյա շրջանը և Արևելյան Սիեռա Մադրե լեռների արևելահայաց լանջերը ծածկված են մշտադալար արևադարձային անտառներով, իսկ արևմտյան՝ խաղաղօվկիանոսյան մերձափնյա շրջանները՝ տերևաթափ անտառներով ու սավաններով։ Արևելյան մշտադալար անտառները կազմված են կարմիր, բրազիլական ծառերից, մագնոլիայից, շքանարգիզներից և այլ ծառերից։ Արևմտյան տերևաթափ անտառները կազմված են ակացիայի, մագնոլիայի, կաղնու ծառատեսակներից և ինդիգոյի թթվերից, որը տալիս է որակյալ կապույտ ներկանյութ։ Բարձր մասերում տարածված են կաղնու-սոնու անտառները։

Հյուսիսային Ամերիկայի բնական բուսականությունը մարդու տնտեսական գործունեության շնորհիվ խիստ փոխվել է: Բը նական պրերիաների տեղն այժմ զբաղեցրել են ցորենի, եգիպտացորենի և այլ կուլտուրաների ցանքերը, իսկ չոր տափաստաններն անկանոն արածեցնելու հետևանքով դարձել են քամահարված և էրողացված լերկ տարածքները: Անտառները տուժում են նաև հրդեհներից՝ Ալյասկայում հրդեհները ոչնչացնում են տարեկան տասնյակ հեկտար անտառները: Սկզբնական անտառները լավահապանված են Կորդիլիերների արևմտյան լանջերում:

Կենդանական աշխարհը


Հյուսիսային Ամերիկայի տարածքի մեծ մասը կենդանաաշխարհագրական տեսակետից նմանվում է Եվրասիային և մտնուէ Հոլարկտիկական ֆաունիստական մարզի մեջ: Այդ նմանությունը պայմանավորված է ոչ վաղ երկրաբանական անցյալում Եվրասիայի և Հյուսիսային Ամերիկայի միջև (Բերինգի նեղուցի տեղը) ցամաքային կապով:

Ցամաքային երկարամյա կապի պատճառով է, որ մի շարք կենդանաաշխարհագրագետներ դրանք միացնում են մեկ՝ Հոլարկտիկայի մարզի մեջ: Միևնույն ժամանակ հետազողների զգալի մասը Հյուսիսային Ամերիկայում անջատում են նեոարկտիկական ֆաունիստիկական մարզ, կամ Հոլարկտիկական մարզի տարածքում նեոարկտիկական բաժին, ինչպես նաև Հյուսիսային լայնության 20° հարավ նեոտրոպիկական ֆաունիստական մարզ:

Նեոարկտիկական մարզի ֆաունան պալեոարկտիկականից տարբերվում է մի շարք էնդեմիկ կենդանիներով, ինչպիսիք են լեռնային կուղբը, պարկավոր առնետը, ճյուղաեղջյուր այծքաղը և այլն: Թուշումներից էնդեմիկ են մարդագետնային ցախաքլորք վայրի հնդուհավը և այլն:

Նեոտրոպիկական մարզի հյուսիսային մասի կենդանականաշխարհի շատ տեսակներ նման են Եվրասիայի, իսկ հարավային մասինը՝ Հարավային Ամերիկայի տեսակներին: Հարավային Ամերիկայից դեպի հյուսիս են թափանցել (հետպլոցենյան ժամանակաշրջանի կապով) հովազները, պուման, գարշակենդանին, զրահակիրը և այլն:

Նեոարկտիկական մարզը ընդգրկում է համարյա ամբողջ Հյուսիսային Ամերիկայի տարածքը, բացառությամբ Մեքսիկայի 42



3. Կենդանաշխարհագրական մարկերի և ենթամարզերի քարտեզ-սխեմա:

ծայր հարավի: Նա բաժանվում է երեք ենթամարզի՝ արկտիկական, կանադական և սոնոռայի:

Արկտիկական ենթամարզը համընկնում է արկտիկական անապատների և տունդրայի բնական զոնաների տարածքին և ընդգրկում է Կանադական Արկտիկական կղզիախումբը, Գրենլանդիան և Լավրենտյան բարձրությունը: Խոշոր կաթնասուններից ենթամարզում տարածված են մշկացուլը, ամերիկյան հյուսիսային եղջերու կարիբուն, որը ձմեռը տեղափոխվում է գեպի անտառատունդրա և նույնիսկ անտառային զոնայի բացատները: Վերջին ժամանակներս Ալյասկայում և Արևմտյան Կանադայում այնորեն տարածվել է Սիբիրից բերված ընտանի եղջերուն: Գիշատիչներից ենթամարզում տարածված են՝ սպիտակ արջը, բեռնային գայլը, բեռնային աքիսը, որը մեծ վնասներ է տալիս այս տեղ տարածված սպիտակ նապաստակներին, կրծողներին, բեռնային աղվեսը, թոշուններից հայտնի են սպիտակ կաքավը, ձնա-

բուն, իսկ ամռանը ենթամարդի շրջան են չվում անհամար թրուշուներ:

Կանադական ենթամարգն ընդգրկում է Կանադական տայգայի և խառն անտառների զոնաները: Չնայած անկանոն ու գիշատչային որսին, տայգայում են կենտրոնացած Հյուսիսային Ամերիկայի թանկարժեք մորթատու կենդանիները: Խոշոր կճղակավորներից հայտնի են ամերիկյան որմղեղը, կանադական եղջերուն, գիշատիչներից՝ գորշ արջը, գայլը, չուսանը, շատկերիկը: Փոքր թանկարժեք մորթատու կենդանիներից բնորոշ են ամերիկյան սամույրը, ջրասամույրը, կղաքիսը, ջրաքիսը, աթիսը, ջըրարջը, կարմիր և արծաթագույն աղվեսն ու մի շարք մորթատու կրծողներ, հատկապես կանադական կուղբը, առնետը: Ենդիմիկ են խոզուկը, ասեղնաբուրդը, որը հիմնականում ծառաքնակ կենդանի է: Թոշնաշխարհը ներկայացնում են խլահավերը, փայտփորիկները, եղնակաքավները և բուերը:

Սոնուրայի ենթամարգն ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի հարավային կեսը: Կենդանական աշխարհի տեսակետից սաշատ բաղմազան է, շատ տարածված են նեոտրոպիկական մարգին բնորոշ տեսակները: ԱՄՆ-ի արևելյան լայնատերև անտառներում տայգային բնորոշ կենդանիների կողքին հանդիպում են նաև կենդանիներ, ինչպես են՝ վիրգինյան եղջերուն, գարշակենդանին, մոխրագույն աղվեսը, խլուրդը, կարմիր լուսանը, սկունսը, գորշ սկյուռը, թոշուններից՝ եղանապոչ մկնաբազեն, վազրի հընդուհավը, մի քանի տեսակ կոլիբրի թոշուններ, որոնք այստեղ են թափանցել նեոտրոպիկական մարզից:

Մերձարևադարձային անտառներում հանդիպում են ջերմասեր, արևադարձային զոնային հատուկ ֆաունայի տեսակներ՝ պարկամուկը, Միսսիսիպիի ալեգատորը, խոշոր կրիան, փիղ-գորտը (20 սմ երկարութ.), թոշուններից՝ կարմրաթերը, հավալուսնը, նեղոսահավը, թագավորական թութակը, կոլիբրին և այլն:

Հյուսիսային Ամերիկայի բաց տարածքների, պրերիաների ֆաունան հարուստ է խոշոր կենդանիներով: Մինչև եվրոպացիների գալը մեծ տարածում ունեին բիզոնները, որոնց հոտերը հաշվվում էին հազարավոր գլուխներով: Եվրոպացիներն այդ կենդանիներին գիշատիչ կերպով ոչնչացրին, հատկապես թանկարժեք մորթու և մսի համար: 19-րդ դարի վերջում մնացին մի քանի հարյուր գլուխ բիզոններ, որոնք էլ պահպանվում են հատուկ արգելանոցներում: Բացի բիզոններից, պրերիաներում տարած-

ված են քիչ քանակությամբ ճյուղեղյուր եղքերուն, իսկ ավելի շատ կրծողներ՝ մարգագետնային շնիկը, սպիտակ առնետը, գետնաւկյուր և մի շարք դաշտամկներ։ Շատ են սողունները՝ մողեսները, օձերը, հատկապես շառաշող թունավոր օձը։

Եվրոպացիների կողմից բերված ձին տափաստաններում առագ բազմացավ և հսկայական վնաս պատճառեց ցանքերին։ Վայրի ձիերին բռնելը համարվում էր կարևոր մասնագիտություն (մուստանգեր), որով զբաղվում էին զգալի թվով մարդիկ։ Ներպայումս վայրի ձիեր համարյա թե չկան։ Մինչև այժմ էլ պրեդիաներում ամենատարածված գիշատիչը համարվում է տափաստանային գայլը, որը մեծ վնասներ է պատճառում այստեղ ապրող փոքր կենդանիներին։

Սոնորայի ենթամարգի Կորդիլիերյան արևմուտքն աշքի է ընկնում բազմազան ֆառնայով, լեռնանտառային, անապատառափառատանային և նույնիսկ հարավային տաք արևադարձային զոնային բնորոշ կենդանատեսակներով։ Լեռներում ապրում են հաստեղյուր ոչխարը, ձյունային այծը, մեքսիկական լեռնաշխարհին բնորոշ հսկա գորշ արջը, գրիզլի արջը, պուման, ենոտը, գայլը, լուսանը և այլն, թոշուններից հատկապես կալիֆոռնիան կաքավը, կալիֆոռնյան գառնանգղը, կալիբրի թոշոնը։ Շատ ին կրծողները՝ կուզը, խողուկը, նապաստակը, սողուններից՝ մողեսները, հատկապես թունավոր թունատամ մողեսը և շատ օձեր։

Նեռարոպիկական մարզն ընդգրկում է միայն Մեքսիկական բարձրավանդակի հարավը, որտեղ հիմնականում հանդիպում են հարավամերիկյան ֆառնայի ներկայացուցիչներ։ գիշատիչներից՝ պուման, ամերիկյան հովազը, սմբակավորներից՝ եղքերուն, տապիրը, մշկախոզը, լայնքիթ կապիկներ, մրջնակերներ, պարկավոր առնետներ, զրահակիրներ, թոշուններ և սողուններ։

ՖԻԶԻԿԱՍԵԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ


Հյուսիսային Ամերիկան ծգվում է հյուսիսից հարավ համարյա բոլոր կլիմայական գոտիներում և նրա տարածքում կարելի անջատել բոլոր լանդշաֆտային զոնաները՝ սկսած սառցայինից մինչև խոնավ արևադարձային անտառներ։ Սակայն մայր ցամաքի բնական պայմանների շաբթում կարևոր դեր են խաղացել միայն կլիմայական ու լանդշաֆտային, այլև երկրաբանական գեոմորֆոլոգիական պայմանները։

Հյուսիսային Ամերիկան կազմված է երկու խոշոր բնական շրջաններից՝ ոչ Կորդիլիերյան արևելքից ու Կորդիլիերյան արևելքից։

Մայր ցամաքի արևելյան շրջանը ամբողջ երկրաբանական պատմության ընթացքում եղել է պլատֆորմային բնույթի։ Երբ տասարդ տեկտոնական շարժումները արևելքում ունեցել են մեծ ուժգնություն, չեն ստեղծել բարձր լեռնային ռելիեֆի ձևեր այդ պատճառով էլ ոչ Կորդիլիերյան արևելքը հիմնականու հարթավայրային է։

Կորդիլիերյան շրջանը բարձր լեռնային մի երկիր է, բացառությամբ մի քանի սարավանդների և սարահարթերի, որտեղ ֆիզիկաաշխարհագրական պրոցեսները միանգամայն այլ ընթացունեն, քան ոչ Կորդիլիերյան արևելքում։ Կորդիլիերյան շրջանը աշքի է ընկնում լանդշաֆտային ուղղաձիգ գոտիականությամբ։

Բացի երկու խոշոր ֆիզիկաաշխարհագրական շրջաններից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է երկրների, մարզերի և հնթամարզերի։



4. Ֆիզիկաաշխարհագրական շրջանացման
քարտեզ-սխեմա:

Ոչ Կորդիլիերյան արևելք

Ոչ Կորդիլիերյան արևելքի մեջ մտնում են Գրենլանդիան, Կանադական Արկտիկական կղզիախումբը, Լավրենտյան բարձրությունը, Կենտրոնական հարթավայրերը, Մեծ հարթավայրերը, Ապալաչյան լեռները և Մերձափնյա դաշտավայրեր-երկրները:

Գրենլանդիան աշխարհի ամենամեծ կղզին է, զբաղեցնում
է 2176 հազ քառ կմ տարածություն։ Նրա 4/5 մասը ծածկված է
սառցային վահանով։

Գրենլանդիան առաջին անգամ հայտնագործել են նորմանները, 9-րդ դարի վերջում, սակայն կղզու իսկական ուսումնասիրություններն սկսվել են 18-րդ դարի սկզբին, դանիական գաղութարարների կողմից։ 19-րդ դարի սկզբին հետազոտություններ են կատարել անգլիացիները, իսկ այնուհետև՝ Սկանդինավյան երկրների գիտնականները։ 1930 թ. Գրենլանդիայի կենտրոնական մասում ձմեռել է գերմանացի գիտնական Ա. Վեգեները, որը և հավաքել է մի շարք կարևոր օդերևութարանական ու սառցույթաբանական տվյալներ։ Ներկայումս ծավալուն ուսումնասիրություններ են կատարվում հատկապես ամերիկյան գիտնականների կողմից։

Երկրաբանական տեսակետից Գրենլանդիայի մեծ մասը պլատֆորմային է՝ կազմված մինչքեմբրիան բյուրեղային ապարներից։ Նրա հյուսիսով ու արևելքով ձգվում են կալեգոնյան հասակի Արևելագրենլանդական ծալքավոր լեռները, որոնք հին և ժամանակակից սառցադաշտային էկզարացիայի շնորհիվ ձեռք են բերել ալպյան լեռների տեսք։ Կղզու հարավում հին բյուրեղային կառուցվածք ունեցող լեռները հասնում են 1600 մ.-ի, իսկ արևելքում՝ 3700 մ.-ի (Գոմբիյորն գագաթը)։

Գրենլանդիայի ափերը (հատկապես արևմտյան և հարավարևելյան) ֆյորդային են, խիստ կտրտված, որտեղ առանձին ֆյորդների երկարությունը հասնում է 150—180 կմ-ի, խորությունը՝ 500 մ.-ի։

Օգտակար հանածոներից Գրենլանդիան հայտնի է երկաթաքարով, գրաֆիտով, կրիոլիտով, տորֆով, հավանական են համարում, որ կա նաև ուրանի հանքավայր։

Գրենլանդական սառցադաշտի մակերևույթը բավականին հարթ է։ Այն եղբերից հետզհետե բարձրանում է դեպի կենտրոն, որտեղ գոյանում են երկու բարձրադիր գմբեթներ, որոնք հասնում են շուրջ 3200 մ բարձրության։ Սառցադաշտի առավելագույն

Հօռությունը կղզու կենտրոնական մասում հասնում է 3400 մ-ի, իսկ ծավալը՝ 2,7 միլ խոր մ-ի: Եթե ամբողջ սառուցները հալվեն, ապա համաշխարհային օվկիանոսի մակարդակը կբարձրանա 7 մետրով: Կղզու ցամաքի մակերեսույթը սառցադաշտի ծանրության շնորհիվ դարձել է ափսեածե, կենտրոնում այն ցածր է նույնիսկ օվկիանոսի մակարդակից:

Արևելքում, հյուսիսում և հյուսիս-արևելուտքում սառցադաշտերը կախված պատերի նման մտնում են ծովի մեջ: Առանձին հատվածներում սառցադաշտային «գետերը» օրական 20—40 մ արագությամբ թափվում են ծով, որպես այսքերգեր: Այսքերգերի հզորությունը հաճախ հասնում է 120—130 մ-ի: Գրենլանդիայից տարեկան գոյանում է 10—15 հազար այսքերգ, մեծ մասամբ կղզու արևմուտքում:

Գրենլանդիայի սառցավահանը կլոր տարի ծածկված է ձյունով, այդ պատճառով էլ մեծ է ճառագայթարձակումը (սառցադաշտի մակերեսույթը կլանում է արեգակից եկող ջերմության միայն 18—20 տոկոսը): Կղզու կենտրոնական մասերում օդն ուժեղ սառչելով գոյացնում է բարձր ճնշման կենտրոն, սակայն այդ անտիցիկլոնը բավականին անկայուն է, և եզրային օվկիանոսյան շրջաններից ներթափանցող ցիկլոնների շնորհիվ հեշտությամբ, անհետանալով տեղիք է տալիս ձյունաբքերի: Եզրային բարձր լեռներից դեպի ծովափի իջնում են ֆյոնային քամիներ, որոնց հետեւանքով բարձրանում է օդի ջերմաստիճանը՝ տեղիք տալով ձյան և սառցադաշտերի բուռն հալքի: Հալված ջրերը սառցադաշտի մակերեսույթում առաջացնում են առանձին լճակներ, կամ հոսելով դեպի հզրային ցածր շրջանները, գոյացնում են 30—40 մ խորության կանիոններ:

Գրենլանդիայի կլիման դաժան է: Նրա կենտրոնական մասում ամբողջ տարին օդի ջերմաստիճանը տատանվում է -10° մինչև -55° : Զմեռը հաճախ օդի ջերմաստիճանն իջնում է -60° -ի, իսկ ամառը կարելի է նկատել մինչև $-28-30^{\circ}$: Գրենլանդիայի արևմտյան ափերը ողողում են Բաֆինի ծովի ջրերը, ուր հաճախ թափանցաղ ցիկլոնները մեղմացնում են վայրի եղանակը՝ առաջացնելով առատ ($1000-1200$ մմ) տեղումներ: Զմեռը ծովափում լինում է 0° -ից քիչ ցածր, իսկ ամառը՝ մոտ $+10^{\circ}$: Կղզու ծայր հարավում, իրմինգերի տաք հոսանքի շնորհիվ, ձմռանը որոշ տեղեր ջերմաստիճանը 0° -ից բարձր է լինում: Հյու-

սիսում, արևելքում և կենտրոնական մասերում կլիման ավելի դաժան է, տեղումները՝ 100—300 մմ:



Գրենլանդական սառցադաշտերի մակերևույթի միկրոռելիեֆը:

Սառցադաշտերից ազատ տարածությունները ծածկված են հիմնականում մարգագետնային և տունդրային բուսականությամբ: Ամռանը այդ վայրերը ծածկվում են ծաղկող բուսերով՝ զանգակիկներով, եղեգնախոտերով, դաշտավլուկներով, մարգագետնախոտերով, փայլուկներով և այլն:

Ուժեղ քամիների և ցածր ջերմաստիճանների պատճառով ծառային բուսականությունը լինում է ցածր, ծուռումուռ բներով, կեշու, արոսենու, գիհու, ուռենու, լաստենու թփերի տեսքով, որոնց տակ ձեւավորվում են տորֆածմային մերձարկտիկական հողեր: Զգալի տարածություն են գրավում մամուռներն ու քարաքուրը:

Գրենլանդիայում խոշոր կաթնասուն կենդանիներից հայտնի

են մշկացուլը, կարիբու-եղջերուն, իսկ մերձափնյա շրջաններում՝ սպիտակ արջը: Մերձափնյա շրերը հարուստ են ձկներով ու ծովային գագաններով:

Կանադական Արկտիկական կղզիախումբ

Կանադական Արկտիկական կղզիախումբն զբաղեցնում է մոտ 1,3 միլ քառ կմ տարածություն: Ամենախոշոր կղզիներն են Բաֆինի երկիրը (512 քառ կմ), Էլսմիրը (200,5 հազ), Վիկտորիան (212 հազ) և այլն: Կղզիների մեծ մասը մայր ցամաքի մասեր են, որից անջատվել են ոչ վաղ երկրաբանական անցյալում:

Կղզիները հիմնականում ունեն հարթ, լճային գոգավորություն-ներով հարուստ ոելինք, որոնք ոչ վաղ անցյալում եղել են օվկիանոսի հատակ: Բաֆինի երկիր կղզու արևելքը, Էլսմիրի հարավ-արևելքը հին բյուրեղային, 1500—2000 մ բարձրության սարավանդներ են, որոնք գառիթափի լանջերով իջնում են դեպի ծով: Էլսմիր կղզու հյուսիսը և Ակսել-Հեյբերգ կղզիների լեռներն ունեն պալեոզոյան հասակ, իսկ կղզիախումբի մնացած մասերը կաղմում են Կանադական պլատֆորմի հյուսիսային շարունակությունը:

Կանադական Արկտիկական կղզիախումբը սեյսմիկ շրջան է, որի վկայությունն են հաճախակի տեղի ունեցող երկրաշարժերը և մի քանի կղզիներում հայտնաբերված տաք ջրերի ելքերը:

Ամառային ցածր ջերմաստիճանների և առատ տեղումների հետևանքով կղզիախումբի զգալի մասը (արևելյան և հյուսիսային) ծածկված է սառցադաշտերով: Սառցադաշտերը կազմում են մոտ 154.000 քառ կմ տարածք, որը երեք անգամ ավելի շատ է, քան սովորական Արկտիկայինը: Խոշոր սառցադաշտեր են տարածված Բաֆինի երկրում (83 հազ քառ կմ), որոնք երբեմն կլորավուն տեսք ունեն, կամ էլ լեռներից այսբերգերի ձևով իջնում են դեպի արևելք՝ թափվելով Բաֆինի ծով: Խոշոր սառցադաշտեր կան Էլսմիր և Ակսել-Հեյբերգ կղզիների վրա, որոնք տարածվում են հյուսիսում մինչև ծովափնյա գոտի:

Այս կղզիախումբի արևմտյան կղզիներում, ցամաքային կլիմայի և վայրի ցածրության հետևանքով, սառցադաշտեր չկան: Կլիման ցուրտ ցամաքային է: Միջին հունիսյան ջերմաստիճանները 10-ից շեն անցնում, սակայն ցերեկն առավելագույնը կարող է հասնել նույնիսկ $24-25^{\circ}$ -ի: Ցուրտ ամսվա միջին ջերմաստի-

Հանները հասնում են -35° -ի, նվազագույնը՝ -53° -ի: Զմեռը համեմատաբար տաք է Բաֆինի ծրկրի հարավում, որն ընկած է արդեն մերձարկտիկական գոտում և հաճախ ողողվում է ատլանտյան տաք ջրերով: Կղզիախմբի տարածքում թափվում են 200—250 մմ տեղումներ, միայն Բաֆինի ծրկիր կղզու արևելահայաց լանջերն ստանում են 600—800 մմ:



Արկտիկական տունդրայի բնապատկեր:

Կանադական Արկտիկական կղզիախմբի տարածքում հայտնի են մոտ 340 բարձրակարգ բույսեր, որոնք հիմնականում տարածված են հարավային և արևմտյան կղզիներում: Հիմնական բուսատեսակներից են հավամրգին, գառնառվույտը, թթուհատին, մատնոմին, շատ են մամուռներն ու քարաքոսները:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից հայտնի են հյուսիսային եղջերուն, բնեռաղվեսը և զրային կաթնասունները:

Կանադական Արկտիկական կղզիախմբը շատ թույլ է բնակեցված: Կան էսկիմոսների մի քանի ոչ մեծ բնակավայրեր, որի բնակիչներն զբաղվում են որսորդությամբ ու ձկնորսությամբ:

Լավրենտյան բարձրություն և կից դաշտավայրեր

Այս երկիրն զբաղեցնում է մայր ցամաքի հյուսիսարևելյան ասը. րնդգրկում է նաև Մակենզիի և Հուդզոնի ծոցի մերձափյա դաշտավայրերը:

Ամբողջ երկիրը հիմնականում ունի հարթավայրային ռելիֆ, որտեղ թարմ կերպով պահպանվում են սառցադաշտային և լինեֆի ձևերը՝ խիստ կլիմա, տունդրային և տայգային հողատասական ծածկոց: Ամենուրեք տարածված է բազմամյա սառուցիթը. գետային ցանցը թույլ է զարգացած, շատ են լճերն ու աճիճները:

Լավրենտյան բարձրության զգալի մասն է կազմում Կանական վահանը, որն ունի բավականին բարդ երկրաբանական առուցվածք: Մեծ տարածում ունեն արխեյան հասակի գրանիտերն ու գնեյսները, որոնք եղրային մասերում իրենց տեղը զիւմ են պրոտերոզոյան ապարներին՝ մարմարներին, բյուրեղահին թերթաքարերին և գրանիտներին: Վերին լճի արևմտյան ափի Լաբրադոր թերակղզու կենտրոնում պրոտերոզոյան թերթաքարերը պարունակում են երկաթի հարուստ պաշարներ: Արխեյան պրոտերոզոյան ինտրուզիաների հետ են կապված բազմամեռադների խոշոր հանքավայրերը Սաղերիի, Ֆլին-Ֆլոնի, Նորանի, Թոմսոնի մոտ, ինչպես նաև ուրանի, ոսկու, արծաթի հանավայրերը Ատաբեսկա, Հուրոն, Մեծ Արջի լճերի մոտ:

Պրոտերոզոյան ապարները քիչ են մետամորֆացված, քան որինեյանը, որով և պայմանավորված է ռելիֆի տարածված ները, որոնք աշքի են ընկնում ավելի հարուստ բուսականույամբ, քան կարծր արխեյան հասակի ապարները:

Ռելիֆի ավելի խոշոր ձևերը կապված են նորագույն տեկունական շարժումների հետ: Առաջին հերթին դրանց են վերաբերում Լաբրադորում տարածված լեռնային բարձրացումները, որտեղ Միլի լեռը հասնում է 1200^յ իսկ Տորնդատը՝ 1620 մետրի: Դրանց գոյացումը հավանաբար կապված է վերին կավճում Գրենանդիայի և մայր ցամաքի միջև ընկած հատվածի իշեցման հետ, որի ընթացքում առանձին հատվածներ, ինչպես Լաբրադորը, արձրացել են:

Ռելիֆի խոշոր ձևերից է նաև Հուդզոնի սինեկլիզային իշածքը, որն ունի մինչև 200 մ բարձրություն և լցված է ավելի ուժիւր նստվածքային ապարներով: Հուդզոնի իշվածքի հարավում


բարձրանում են օրդովիկի և սիլուրի հասակի ապարներից կազմակերպությունները: Հուդգոնի ծոցի իջվածքին մեջ գոյացությունն է նաև Մակենզիի իջվածքը, որում նստվածքայիշերտախմբերը բավականին հզոր են, սակայն Կորդիլիերների հոսող գետերը նպաստում են վայրի ինտենսիվ լվացմանն տեղատարմանը: Լայն ու հարթ իջվածքը եղբավորված է 300-400 մ բարձրության սարավանդածե մնացորդային լեռնաբռնիկներով:

Լավրենտյան բարձրության ռելիեֆի ժամանակակից ձևերը պայմանավորված են սառցադաշտային վալունները, խիճը, ավազը, կավը, որոնց հզորությունը տեղ-տեղ հասնում է 40—50 մ. Զորրորդականի հասակի ապարների տարածման մակերեսը կազմում է մոտ 70 տոկոս: Այդ շերտախմբերի տակից մերկանում կարծր մայր ապարների ելքեր, որոնց վրա պարզորոշ երեսում սառցադաշտերի հետքերը: Զգալի տարածում ունեն դրումլինները, որոնց երկարությունը հասնում է մոտ 100, իսկ բարձրությունը՝ 10—15 մ-ի: Ավելի մեծ տարածում ունեն օգերը. դրանք սանձին նեղ թմբաշարեր են, որոնց բարձրությունը հասնում 49—50 մ-ի, իսկ երկարությունը՝ մինչև հարյուր կմ-ի: Ոգերը մեծ տարածում ունեն հատկապես Հուդգոնի ծոցի արևմուտքում, որտեղ ամենաերկար օգը հասնում է 200 կմ-ի: Դրումլիները կազմված են խառը՝ բեկորային և ավելի մանր նյութերից իսկ օգերը՝ հիմնականում փուխր մանրահատիկ գոյացություններից և աչքի ևն լնկնում շերտախմությամբ, որոնց առաջացմանը ըստ երեսույթին նպաստել են նաև հալոցքային զրերը:

Սառցադաշտային ռելիեֆի խոշոր ձևերը, ինչպիսիք են կըրկեսները, զգալի տարածում ունեն արևելյան շրջաններում՝ Լարրագորում, որ քայքայելով, լեռներին տվել են տիպիկ ալպան բարձրալեռնային տեսք: Կանադական վահանի մնացած ցածրադիր մայր ապարների մերկացման վայրերում սառցադաշտերը ռելիեֆի բացասական խոշոր ձևեր չեն գոյացրել, այլ հարթեցնելով՝ երբեմն ստեղծել են գանգրահեր ժայռեր և խոյի ճակատներ:

Մայր ապարների քերծվածքներով հնարավոր է լինում որպես շել սառցադաշտերի շարժման ուղղությունը: Հենց այդ ուղղություններով էլ Հյուսիսային Ամերիկայում որոշվել են երկու խոշոր սառցապատման կենտրոններ՝ Լաբրադորյան (համանուն

թերակղզում) և Կիվատինյան (Հուդզոնի ծոցից արևմուտք): Ապացուցված է, որ Հյուսիսային Ամերիկայում վերջին՝ Վիսբոն-սինի սառցադաշտն անհետացել է 6—10 հազար տարի առաջ:



Լիճ-ամբարտակ Կանադայի հյուսիսում:

Վերջապես, Լավրենտյան բարձրության ոելիեֆը սառցապատումից ժառանգել է անթիվ լճային գոգավորություններ: Սառցադաշտերի նահանջից անմիջապես հետո լճերն ավելի շատ են եղել: Խոշորներից են եղել այսպես կոչված Բարյոու-Օջիբուլը, որն ընկած է եղել Հուդզոնի ծոցի և Մեծ լճերի միջև, իսկ Մեծ Արջի, Սենտ-Ջոն, Աթաբասկա, Մեծ Ստրկական և այլ լճեր ավելի մեծ մակերես են ունեցել, քան ունեն այժմ: Էստ կանադացի գեո-մորֆոլոգ Դ. Բիրդի, Մակենզի գետի հովիտը մինչև Աթաբասկա լիճը եղել է ծովածոց՝ իր մեջ առնելով Մեծ Արջի և Մեծ Ստրկական լճերը: Լճերից ազատված տարածքները ծածկված են հարուստ բուսականությամբ և ունեն գյուղատնտեսական կարևոր նշանակություն:

Լավրենտյան բարձրության կլիման ամբողջությամբ կրում է Արկտիկայի ազդեցությունը. այն ցուրտ է և դաժան, քիչ շափով կրում է Հուդզոնի ծոցի և Մեծ լճերի մեղմացնող ազդեցությունը: Նրա արևելյան ափերով անցնում է լաբրադորյան ցուրտ հոսանքը:

Զմեռը ոչ միայն ցուրտ է, այլ նաև խիստ քամուտ, քանի որ այն ամբողջովիշյամբ ընկած է Հյուսիսամերիկյան մաքսիմումի և Խոլանդական մինիմումի միջև։ Ցուրտ ամսվա միջին ջերմաստիճանները նվազում են հարավից հյուսիս և հյուսիս-արևմուտքից հարավ-արեւելք։ Մեծ էճերի հյուսիսում հունվարի միջին ջերմաստիճանը կազմում է $-10-12^{\circ}$, Հուդզոնի ծոցի շրջանում՝ $-25-26^{\circ}$, նվազագույնը՝ -50° ։ Զմեռն ամենուրեք ձյունառատ է։ Միայն կաբրադոր թերակղզին ունի տիպիկ օվկիանոսային կլիմա։ Այստեղ կլոր տարին խոնավ է, ձյան շերտի հզորությունը հասնում է $2-3$ մ-ի։

Հուդզոնի ծոցից արևմուտք, պայմանավորված արկտիկական օդային զանգվածների ներթափանցմամբ, ձմեռը սասափկ ցուրտ է և անձյուն։ Ամբողջովիշյամբ վերցրած Հուդզոնի ծոցից արևմուտք կլիման խիստ ցամաքային է, աշքի է ընկնում ջերմաստիճանային մեծ տատանումներով և քիչ՝ $250-350$ մմ տեղումներով։ Անսառնամանիքային օրերի թիվը Հուդզոնի ծոցից արևմուտք կազմում է $60-65$ օր, իսկ մնացած շրջաններում՝ $40-50$ օր։ Արդեն սեպտեմբերի վերջից մերձափնյա շրերը և գետերն սկսում են սառցակալվել, իսկ հոկտեմբերի վերջին բոլոր շրավագանները ծածկվում են սառուցով։

Լավը ենտյան բարձրության վրա Արկտիկայի աղղեցությունն զգացվում է միայն հյուսիսային մերձափնյա շրջաններում։ Արկտիկական օդային զանգվածների ներթափանցման շնորհիվ ամառը լինում է ցուրտ։ Սարահարթի հարավում հուլիսյան միջին ջերմաստիճանը լինում է $+16$, $+18^{\circ}$, իսկ մնացած շրջաններում՝ $+13$, $+14^{\circ}$, կաբրադորի արևելքում՝ նույնիսկ $+10$, $+12^{\circ}$ ։ Ամռանը լինում են հորդառատ անձրևներ ու մառախուզներ։

Լավը ենտյան բարձրության տարածքը համարյա թե ամբողջությամբ ընկած է բազմամյա սապուցիթի գոտում։ Գործող շերտի հզորությունը հյուսիսում կազմում է $15-10$ սմ, իսկ հարավի ավագային հողերում՝ $2-3$ մ։

Պայմանավորված ցուրտ կլիմայական պայմաններով, բազմամյա սապուցիթով և երիտասարդ գլացիալ ուլիեֆով՝ լավը ենտյան բարձրության գետային ցանցը թույլ է զարգացած, դեռևս շեն մշակված գետի երկայնակի պրոֆիլները։ Գետերը կարծր ապարների մերկացումների շրջանում աշքի են ընկնում սահանքներով, որոնք դժվարություններ են ստեղծում նավարկության

Համար, սակայն նպաստավոր են հիդրոկայանների կառուցման համար:

Ի հակագրություն թույլ զարգացած գետային ցանցի, կավ-րենտյան սարահարթն աշքի է ընկնում քաղցրահամ լճային գոգա-վորություններով, որով նա աշխարհում իրավամբ գրավում է ա-ռաջին տեղերից մեկը: Բոլոր լճերը հոսք ունեն և հանդիսանում են կարևոր տրանսպորտային ուղիներ:

Ուսումնասիրվող շրջանի մոտ 1/3-ը զբաղեցնում է տունդ-րան, նույնքան էլ՝ անտառատունդրան և 1/3-ից մի փոքր ավելին՝ տայգան: Տունդրայի զոնայում մեծ տարածում ունեն կապույտ հապալասին, թթուհատին, մամուռները և կիսաթփերը: Իջվածք-ներում զգալի տարածում ունեն ուռենու և լաստենու թփուտները: Հուդգոնի ծոցի և մյուս իջվածքները մեծ մասամբ զբաղեցված են ճահճային բուսականությամբ: Տունդրայի հարավային սահ-մանում արդեն հանդես են գալիս սև եղևնու թփուտները, որոնք աննկատ կերպով անցնում են անտառատունդրային: Անտառա-տունդրայում, բացի թփուտային բուսականությունից, գետահո-վիտներով զեպի հյուսիս են տարածվում սև եղևնու, խեժափիճու անտառները, որոնք արդյունաբերական կարևոր նշանակություն ունեն և կազմում են ենթագոտու 10 տոկոսը:

Տայգան ամբողջությամբ ծածկված է փշատերև ծառատեսակ-ներով, որտեղ, բացի սև եղևնոց, զգալի տարածում ունեն եղևնը, արևմտյան կենսածառը, իսկ Մակենզիի իջվածքում անտա-ռագոյացնող կարևոր ծառատեսակներից են սպիտակ եղևնին բանկսի սոճին: Մեծ լճերից հյուսիս քիչ քանակությամբ հանդես է գալիս նաև խառն անտառը:

Տայգան Կանադայի կարևոր հարստությունն է, սակայն նրա տարածքում (հատկապես ամռանը, արևմտյան շոր ու տաք շըր-շանում) հաճախակի են բոնկվում հրդեհներ ու մեծ վնասներ պատճառում ժողովրդական տնտեսությանը:

Կանադական տայգան հարուստ է թանկարժեք մորթատու գազաններով, հատկապես կուղբերով, ջրաքիսներով, մշկամկնե-րով ու աղվեսներով: Լճերում ու արևեստական ավազաններում ա-ճեցնում են արդյունաբերական նշանակություն ունեցող ձկներ՝ սիգ, իշխան, գայլածուկ, տառեխ և այլն:

Լավքենտյան բարձրությունը արևմուտքից արևելք ձգվում է մոտ 4000 կմ, հետեաբար այսպիսի մեծ տարածքն ունի ներքին զգայի տարբերություններ, հատկապես կլիմայական տեսակետից՝

արևմուտքն աշքի է ընկնում ցամաքայնությամբ, իսկ արևելք ավելի խոնավությամբ: Նման բնական տարբերությունները թուեն տալիս այս խոշոր երկրում առանձնացնել մի քանի բնական արգելու:

Լաբրադոր թերակղզի.— Աշքի է ընկնում առաջին հերթի տեղումների մեծ քանակով: Զափակոր ամառային ցածր ջերմաստիճանների պատճառով լանդշաֆտային զոնաները այստեղ ձը վում են ավելի հարավ: Բացի հարավային՝ Ս. Լավրենտիոս ծոց շրջանից, մնացած մասերն էկոլոգիական տեսակետից նպաստավոր չեն բուսականության զարգացման համար: Ցածր ջերմաստիճանները և առատ՝ մինչև 1000 մմ տեղումները պատճառ են դառնում վայրի ճահճացման և աղքատ թփուտային բուսականության տարածման համար: Լաբրադորյան մարզն աշքի է ընկնում երկաթաքարի հանքերով ու ջրային ռեսուրսներով:

Լավրենտյան բարձրուրյան հարավային մարզ.— Ընկած Մեծ Հների և Հուդզոնի ծոցի միջև: Իր հարավային դիրքի պահանջով ունի տաք կլիմայական պայմաններ: Վայրի ռելիեֆն աշխետ է ընկնում սառցադաշտա-էկզարացիոն և ակումուլացիոն թմբավոր, հարթ զանդրային իջվածքներով: Լանդշաֆտում գերակշռություն բավականին խիտ, արդյունաբերական նշանակություն ունի ցող փշատերև անտառները, որտեղ հիմնական ծառատեսակը եղենին է, առանձին զեպքերում հանդիպում են ուրիշ փշատերեր: Նույնիսկ լայնատերեններ:

Կիլատինյան մարզ.— Զբաղեցնում է երկրի հյուսիսարևելյան մասը, որը կանադայի ամենաթույլ ուսումնասիրված յուրացված մասն է: Ուժեղ և տեսական հյուսիսային քամիներն ու ցածր ջերմաստիճաններն այդ մարզի ձմեռները դարձնում են խիստ դաժան: Համարյա ամբողջ տարածքը ծածկված է նուտունդրայական կամ ճահճային բուսականությամբ ու թփուտներով:

Հուդզոնի ծոցի ափամերձ դաշտավայր.— Աշքի է ընկնում բավականին հարթ ռելիեֆով և թույլ մակերնությամբ հոսքում է ության դամբարձությունը է, որ տեղ առանձին ոչ մեծ կուէստային թմբաշարեր են բարձրանուած Հուդզոնի ցուրտ ծոցի հարեանությամբ ունի ամառային ցածր ջերմաստիճաններ: Ինչպես կիվատինյան մարզը, այս մարզն ույնպես աղքատ է բնական ռեսուրսներով:

Մակենզիի իջվածք.— Ընկած է ծայր հյուսիս-արևմուտքում:

նի համեմատաբար շոր ու տաք ամառ, չոր և ցուրտ ձմեռ: Մարտում մայր ապարների ելքերը իսպառ բացակայում են: Ռելիեֆն զքի է ընկնում հարթ ալյուվիալ շերտախմբերով, որի մեջ իանդրելով հոսում է Մակենզի գետը:

Ցամաքային կլիմայի պատճառով այս վայրը ծածկված է ուսավոր փշատերև անտառներով, որոնք կազմված են սպիտակ ղննու և բանկսի սոճու ծառատեսակներից, իսկ գետնամերձ շերտը՝ ծածկված է մամուներով ու քարաքոսերով: Դետի հովտով անտառը շարժվում է դեպի հյուսիս՝ հասնելով մինչև ստորին հուանք: Մակենզիի դելտան ծածկված է տունդրայական տիպի նարգագետիններով: Անտառն ունի անտեսական կարևոր նշանաւություն:

Կենտրոնական հարթավայրեր

Կենտրոնական հարթավայրերը տարածվում են Լավրենտան բարձրությունից հարավ, Ապալաչյան լեռներից արևմուտքի դրանք ձգվում են Միսսիսիպի գետի երկու կողմերով՝ հարավում հասնելով մինչև հյուսիսային լայնության 32°:

Բնական պայմանների ու տնտեսական յուրացման տեսակետից Կենտրոնական հարթավայրերը հիշեցնում են Ռուսական հարթավայրը: Այն ԱՄՆ-ի, ինչպես նաև Կանադայի հացահատիկային կուլտուրաների, հատկապես ցորենի, եգիպտացորենի մշակության կարևոր շրջանն է: Երկրի հյուսիսային՝ Մեծ լճերի շրջանը կաթնատու անասնապահության և խողաբուժության հիմնական վայրն է:

Երկրաբանական տեսակետից Կենտրոնական հարթավայրերը շյուսիսամերիկյան պլատֆորմի հարավային շարունակությունն ան՝ ծածկված պալեոզոյան հասակի հզոր նստվածքային շերտախմբերով: Վերին պալեոզոյան նստվածքները հարուստ են քառածի պաշարներով, քարաղով, իսկ նախապալաչյան իշվածքային գոտին՝ նավթի պաշարներով:

Ռելիեֆը, ինչպես Ռուսական հարթավայրինը, հարթ ալիքավոր է, թմբավոր, խիստ մասնատված ձորակային ցանցով, տեղ-տեղ բարդացված առանձին բարձրություններով: Բացի այդ, Կենտրոնական հարթավայրերի ռելիեֆը, հատկապես նրա հյուսիսը, կրել է չորրորդական սառցապատման ազդեցությունը: Մեծ լճերից հարավ թարմ կերպով պահպանվում են վերջնամորենները, որոնք այստեղ են տեղափոխվել կաբրադորյան սառցադաշտի

Կողմից: Մորենային թմբաշարերը տարածված են Միսսիսիպի միջին հոսանքի շրջանում մինչև Օհայոյի միացման վայրը։ Սա ցաղացերի եզրերից հալոցքային ջրերը կենտրոնական հարթավայրերի տարածքով հոսել են դեպի հարավ՝ թողնելով մեծ քանակությամբ փուխր նստվածքներ։ Ուժեղ քամիները ջրբաժանային հատվածներում նստեցրել են մանր փոշին՝ առաջացնելով մեծ հզորության ավազակավային նստվածքներ՝ լցոս, որոնք ծածկել են մայր ապարներում առկա գոգավորությունները։

Հին գետահովիտներն այժմ լավ պահպանվում են որպես դարավանդներ՝ կազմված փուխր ավազային հողերից և ծածկված սոճու անտառներով։

Կենտրոնական հարթավայրի հյուսիսում սառցադաշտերի նախանձի ժամանակ գոյացել է խոշոր լճային մի ավաղան (Ազասից լիճը), որը գտնվել է Ներկայիս Կանադական Ալբերտ և Մանիթոբա պրովինցիաների տեղում, ունենալով շուրջ 285 հազ քառակմ տարածք։ Ազասից լիճը Միսսիսիպիի միջոցով հոսք է ունեցել դեպի հարավ, իսկ հետագայում նելսոն գետի միջոցով դեպի արեվելք։ Հուդգոնի ծոց։ Այս հսկա լճից մեր օրերում պահպանվել են ծանծաղ, բայց բավականին խոշոր Վիննիպեգ, Մանիթոբա և Վիննիպեգոսիս լճերը։

Մեծ լճերի տեղում սկզբում գոյություն են ունեցել մի շաբաթ ոչ մեծ լճեր, որոնք հոսք են ունեցել դեպի Միսսիսիպի և Օհայո, ինչպես և Հուդգոնի ծոց։ Մոտ 7000 տարի առաջ համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացման շնորհիվ ծովը ծածկել է Ս. Լավրենտոս գետի իջվածքը՝ առաջացնելով մի խոշոր այսպես կոչված Շանպլիյան ծովը։ Այդ ծովը գոյություն է ունեցել շուրջ 3000 տարի։ Հետագայում ծովը նահանջել է, որի հետևապատճեն փոքրացել են նաև հյուսիսամերիկյան Մեծ լճերի գոգավորությունները։

Միսսիսիպիի ձախ ափին, Օհայոյի գետաբերանից հարավ մակերեսում մերկանում են կարրոնի հասակի կրաքարային մոնոկլիալ շերտախմբեր, որոնք մակերեսուց հանդես են գալիք որպես ոչ բարձր ուղիեթի կարստային ձներով հարուստ սարավանդներ։ Այս շրջանն աշխարհում հայտնի է դասական կարստային ուղիեթի ձներով՝ պոլյաներով, կարբերով և հատկապես քարայրներով։ Այստեղ է գտնվում աշխարհում ամենախոշոր՝ Մամոնտի բարայրային համալիրը։ Քարայրի երկարությունը 240 կիլոմետր, ունի 225 անցքեր, 47 բարձր գմբեթաձև սենյակներ, 23 քա-

րանձավներ և բազմաթիվ ոչ մեծ խորշեր, ինչպես նաև ստորերկերյա գետեր ու կարստային լճեր:


Ամբողջությամբ վերցրած Կենտրոնական Հարթավայրերի ռելիեֆը հյուսիսում աչքի է ընկնում թմբավոր մորենային, իսկ հարավում՝ ավելի հարթ և մասնատված էրոզիոն ձևերով:

Կլիմայական պայմանների տեսակետից Կենտրոնական Հարթավայրերի և Ռուսական հարթավայրի միջև ևս կա որոշ նմանություն: Կենտրոնական Հարթավայրերին բնորոշ են ձյունառատ ցուրտ ձմեռները և տաք, երբեմն շոգ, անձրևոտ ամառները: Բոլոր եղանակներին օդի ջերմաստիճանը հյուսիսից հարավ բարձրանում է: Հյուսիս-արևմուտքում միջին հոնվարյան ջերմությունը $-18-22^{\circ}$ է, իսկ ժայր հարավում՝ $-0+3^{\circ}$, հունիսին համապատասխանաբար՝ $+18$, $+19^{\circ}$: Եթե Ռուսական հարթավայրի տարածքում տեղումների քանակը հյուսիս-արևմուտքից գեպի հարավ-արևելք նվազում է (Մերձբալթիկայում 700 մմ է, Մերձկասպյան իջվածքում՝ 250 մմ), ապա Կենտրոնական Հարթավայրում ընդհակառակը՝ հյուսիս-արևմուտքում թափվում են 450 մմ, իսկ հարավ-արևելքում՝ 1100 մմ: Զնայած տեղումներն ավելի շատ են, այնուամենայնիվ, Կենտրոնական Հարթավայրերը իրենց հարավային դիրքի պատճառով ավելի խոնավ չեն, քան Ռուսական հարթավայրը: Կենտրոնական Հարթավայրերի տարածքը իր ցածր ռելիեֆի պատճառով հաճախ է ենթարկվում հյուսիսային և հարավային օդային զանգվածների ներթափանցման, որի շնորհիվ էլ ունի անկայուն եղանակ: Համեմատաբար կայում եղանակ նկատվում է միայն աշնանը:

Կենտրոնական Հարթավայրի կլիմայական պայմանները նըպաստավոր են հողագործության համար: Անսառնամանիք օրերի թիվը նրա հյուսիսում կազմում է $100-120$ օր, իսկ ժայր հարավում՝ $200-210$ օր: Մշակում են հացահատիկային և տեխնիկական կոլտուրաներ, իսկ ժայր հարավում՝ նույնիսկ բամբակ:

Կենտրոնական Հարթավայրերը մասնատված են խիտ գետային և ջրանցքների ցանցով: Ինչպես Լավրենտյան սարահարթը, սա նույնպես աչքի է ընկնում քաղցրահամ լճային գոգավորություններով: Գետերը պատկանում են Մեծ լճերի և Միսսիսիպիի ավազաններին, սնվում են ձյան հալոցքային ջրերից, անձրևներից և քանի որ նրանց մեծ մասը սկիզբ է առնում լճերից, ապա աչքի են ընկնում հորդառատությամբ և տարվա ընթացքում կայում ունենալով: Գետային հոսքը ձևավորվել է նախկին սառցա-

դաշտային հալված ջրերի շարժման ուղղությամբ և հին գոգավորությունները խորացնելով վերածել է խսկական հովիտների: Կարեոր նշանակություն ունի Մեծ Լճերի համակարգը, որը էժան ջրային ուղի է անտառանյութի, օգտակար հանածոների և այլ ապրանքների տեղափոխման համար: Երի լճից ղեպի Օնտարիո լիճ է հոսում Նիագարա գետը՝ աշխարհահոչակ Նիագարա ջրվեժով: Ջրվեժի բարձրությունը 50 մ է: Այն Այծի կղզով բաժանվում է երկու բազուկի, փոքրը՝ ԱՄՆ-ի, մեծը՝ Կանադայի Յուրաքանչյուր վայրկյանում ջրվեժներով թափվում է 5900 մ³ ջուր, որի առաջացրած աղմուկը լսվում է 25 կմ հեռավորությունից: Հենց դրա հետ էլ կապված է Նիագարա անունը, որը հնդկացիների լեզվով նշանակում է «շառաշող ջուր»: Նիագարայի ջրվեժի վրա ԱՄՆ-ի և Կանադայի համատեղ ջանքերով կառուցված է խոշոր հիդրոէլեկտրակայան:



Նիագարայի ջրվեժը համանուն գետի վրա:

Մեծ Լճերի հարավում կան մի շարք խոշոր քաղաքներ և արդյունաբերական ձեռնարկություններ, այդ պատճառով էլ բնական լանդշաֆտը շատ ուժեղ փոխվել է մարդու կողմից:

Կենտրոնական հարթավայրեր երկրի մեծ մասն ընկած է խառն ու լայնատերև անտառների զոնաներում, սակայն անտառները կազմում են տարածքի 6—9 տոկոսը, այն էլ հիմնականում ընկած են արևելքում, գետերի ողողահովիտներում ու քարքարոտ

անբարենպաստ հողային տարածքներում։ Հին անտառները վերացվել են, իսկ նրանց տեղը գոյացած երկրորդային անտառը համարյա արդյունաբերական նշանակություն չունի։

Կենտրոնական հարթավայրերում տարածված են գորշ անտառային պողողացված և մոխրագույն անտառային հողերը՝ թացի դրանցից, երկրի հյուսիսում տարածված են նաև ճմապողզալյին, ճմագլեյան և ճմակարրոնատային հողերը։ Թոլոր հողատեսակներն էլ պիտանի են դյուղատնտեսական կուլտուրաների մշակության համար, սակայն մի կողմից՝ առատ տեղումներն ու մակերեւության հոսքը, մյուս կողմից՝ բարձր հերկածությունն ու անկարգ արածեցումը հողերի մի մասը դուրս են բերել օգտագործելի վայրեր։

Ապալաշյան լեռներ

Լնոնային այս երկիրը ձգվում է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք 2600 կմ, ԱՄՆ-ի Ալաբամա նահանգից մինչև Վ. Լավրենտիոսի ծոց, որի շարունակությունն է կազմում նաև նյուֆառնոլենդ կղզին։ Ապալաշներին բնորոշ են միջին բարձրության լեռնային ռելիեֆի ձևերը, էրոզիոն մասնատվածությունը, հարուստ օգտակար հանածոները, հիդրոենուրումները, տեսակներով հարուստ խիտ անտառային ծածկությը։ Ապալաշները Հյուսիսային Ամերիկայի խիտ բնակեցված շրջաններից են, այդ պատճառով էլ բնական լանդշաֆտն ավելի է տուժել։ Դեռ 18-րդ դարում հողագործության և հատկապես նավաշինության զարգացման պատճառով Ապալաշների շրջանում տարածված բարձրութակ անտառները խիստ տուժեցին։ Լանդշաֆտը փոխվեց նաև լեռնահանքային արդյունաբերության զարգացման հետևանքով, որը հիմնվեց այստեղ հայտնաբերված բարձրորակ քարածխի, նավթի, երկաթաքարի ու գունավոր մետաղների հանքավայրերի շահագործմամբ։

Երկրաբանական տեսակետից Ապալաշներն ունեն բարդ կառուցվածք։ Դրա ձևավորմանը մասնակցել են ինչպես ստորին (կալեղոնյան), այնպես էլ վերին (հերցինյան) պալեոզոյան տեղադրութական պրոցեսները։ Պալեոզոյի վերջում եղել են բարձր լեռներ, իսկ արդեն ստորին մեզոզոյում դարձան տիպիկ պենեպլեն-

Միայն մեզողոյի վերջում տեղի ունեցած ուղղաձիգ բարձրացում ները Ապալաշներին տվել են ժամանակակից տեսքը:

Ապալաշյան երկրում անջատում են երեք բնական մարզեր Հարավային Ապալաշներ, Հյուսիսային Ապալաշներ և Նյուֆառնդ լենդ կղզի:

Հարավային Ապալաշներ.— Բնութագրվում են բարդ ռելիեֆով, տաք ու խոնավ կլիմայական պայմաններով, լայնատեր անտառների գերակշռությամբ և գորշ անտառային հողերով։ Լեռների արևելյան թեր կազմված է քեմբըրի հասակի բյուրեղային ապարներից, որոնք ծալքավորվել են կալեղոնյան լեռնակազմական պրոցեսների ժամանակ։ Այդ պատճառով էլ արևելյան թեր Պիդմոնտ սարավանդի հետ կոչում են «Հնագույն լեռներ»։ Հարավային Ապալաշների ամենաբարձր գոտին կալեղոնյան հասակ կարծր ապարներից կազմված Կապույտ լեռներն են, որոնք Միչչել զանգվածում հասնում են 2037 մ բարձրության և դառնու շրբաժան Ալտանտյան օվկիանոսի և Միսսիսիպիի ավագանի միջև։ Ռելիեֆի զգալի թերությունների պատճառով Կապույտ լեռները թույլ են բնակեցված, հետեւաբար լեռնալանջերը ծածկված են լայնատերև ու փշատերև խիտ անտառներով։ Անտառի վերի սահմանում քիչ տարածում ունի նաև մերձալպյան բուսականությունը։

Հնագույն լեռներից արևմուտք տարածված է ռելիեֆի ինվերսիոն ձեւերով հարուստ, այսպես կոչված, «լեռների և հովիտների» գոտին, որն ունի արդեն վերին պալեոկոյան՝ հերցինյան հասակ։ Արևմտյան թեր լեռների բարձրությունը չի անցնում 1000—1200 մետրից և խիստ մասնատված է երկայնակի հովիտներով։ Լեռները հիմնականում կազմված են ավագաքարերից կավային թերթաքարերից, իսկ հովիտները՝ կրաքարերից և դոլոմիտներից։ Մայր արևմուտքում է գտնվում Ապալաշյան սարավանդը, որն ավելի բարձր է (500—1200 մ) արևելյան Պիդմոնտ սարավանդից (400—500 մ)։ Ապալաշյան սարավանդը դեպի արևմուտք թույլ թերություն ունի, որտեղով հոսող գետերն ստեղծել են համեմատաբար խոր հովիտներ։ Ջրբաժանները հարթ են, որոնց տարածված կրաքարային նստվածքներում մեծ զարգացում են գտել ռելիեֆի կարստային ձևերը։

Արևելյան թեր բյուրեղային ապարներից կազմված Պիդմոնտ սարավանդը ավելի թույլ է մասնատված։ Այն ոչ մեծ (400 մ) բարձրության մի պենեպլեն է, որտեղով հոսող գետերը ծայր արե-

վելքում ստեղծել են, այսպես կոչված, «ջրվեժների գիծը»։ Դեպի Ատլանտյան օվկիանոս հոսող գետերն ունեն հարուստ հիդրո-ռեսուրսներ, որոնք և օգտագործվում են։ Հարավային Ապալաշ-ները հարուստ են քարածխով, երկաթաքարով ու բազմամետաղ-ներով։

Հարավային Ապալաշների կլիման տաք, չափավոր ցամաքային է։ Թեև մոտ է Ատլանտյան օվկիանոսին, բայց այդ լայնություններում տիրապետող արևմտյան օդային զանգվածները խիստ սահմանափակում են օվկիանոսի ազդեցությունը։ Այդ պատճառով էլ տարվա մեծ մասը Հարավային Ապալաշներում տիրապետող են բարեխառն լայնությունների ցամաքային օդային զանգվածները։ Զգալի է նաև Մեքսիկական ծոցի կողմից փլող ամառային մուսոնների ազդեցությունը, որը, սակայն, հասնելով Հարավային Ապալաշներ, մասամբ կորցրած է լինում խոնավությունը։ Ամբողջ տարվա ընթացքում, այնուամենայնիվ, նկատելի է ցիկլոնային շրջանառություն, որով պայմանավորված են անկայուն եղանակը, հաճախակի անձրևները, մշտական ամպամած երկինքը, ուժեղ քամիները։

Տեղումները թափվում են համարյա ամբողջ տարին հավասարաշափ ($1000-2000$ մմ)։ Համեմատաբար շոր սեղոնը համարվում է գարնան ու աշնան սկիզբները։ Զմեռը տաք է, միջին հունվարյան ջերմությունը տատանվում է 0 , $+4^{\circ}$ -ի միջև։ Ամառը նույնիսկ շոգ է, միջին հունվարյան ջերմաստիճանները տատանվում են $+22$, $+25^{\circ}$ -ի միջև։ Տարվա լավ եղանակն աշնան սկիզբն է, որն անվանում են «Հնդկացիների ամառ», երբ շոգերն անցնում են, իսկ անձրևները դառնում հաճախակի։

Ատլանտյան օվկիանոսի ազդեցությունը մեծ է Արևելյան Պիդմոնտ սարավանդում։ Զմեռը տաք է։ Այս տարածքը կարելի է գասել մերձարեադարձին կլիմայական գոտու շարքը։ Այդ մասին են վկայում Պիդմոնտում տարածված դեղնավուն ու կարմրավուն հողերը։

Հարուստ է Հարավային Ապալաշների ջրագրական ցանցը։ Դետերը թեև կարճ են, սակայն աշքի են ընկնում իրենց հորդառատությամբ, հիդրոռեսուրսներով ու տրանսպորտային նշանակությամբ։ Կարեռը գետերից են Օհայոյի վտակ Թեննեսին, որի ավազանում կառուցված են մոտ 40 հիդրոէլեկտրակայաններ։

Մյուս, համեմատաբար խոշոր գետերից Հիշատակովյան արժանի են Դելավերը, Ալաբաման, Պոտոմակը, Սավանան և այլն:

Ապալաչներից դեպի արևելք հոսող գետերը ստորին հոսանքներում գոյացնում են էստուարներ, որոնց պատճառով էլ դրանց ափերին, օվկիանոսից բավականին հեռու (նույնիսկ 160 կմ) ընկած են խոշոր նավահանգիստներ Ֆիլադելֆիան, Բալթիմորը Վաշինգտոնը և այլն:

Հարավային Ապալաչներն աշքի են ընկնում բազմատեսափարթամ անտառներով, սակայն դրանք ներկայումս խիստ տուժեն մարդու տնտեսական գործունեության հետևանքով: Եթե մինչ 20-րդ դարի սկիզբը անտառագոյացնող հիմնական ծառատեսակը համարվում էր շագանակենին, ապա այժմ կաղնին՝ է՛ իր քանի տասնյակ տեսակներով: Մարդի հյուսիսում ավելի շատ տարածված են շագանակատերև կաղնին, իսկ հարավում՝ սպիտակ ու կարմիր կաղնու տեսակները: Կաղնու հետ և հիմնականում ավազակավային հողերում հանդես են գալիս խոշորատեր հաճարենին, շինարին, սպիտակ և շաքարի թխկին, կակաչածառը բարդին, արծաթագույն լորենին և այլն: Երկրորդ շարահարկուաճում են մի շարք ծառեր ու թփեր, ինչպես՝ վայրի տանձենին խնձորենին, սալորենին, գերիմաստին, դժնիկը, իլենին և այլն Տաք ու խոնավ ամառը բարենպաստ սղայմաններ է ստեղծութիւնների և էպիֆիտների, վայրի խաղողի, բաղեղի, մամրիչի ծառեր մազլցող այլ բույսերի համար: Լայնատերև անտառներու հատկապես հարավի մերձարևադարձային գոտում, զգալի տարածում ունեն մշտադալար ծառատեսակները՝ մազնոլիան, դափնին, ասեղնուկը և այլ ծառեր ու խոտեր:

Չնայած ոչ մեծ բարձրությանը, Ապալաչներում առկա է ուղղաձիգ գոտիականությունը: Մինչև 500 մ բարձրություններու տև դածված են կաղնու անտառները, 500—800 մետրում՝ հաճառիկնու, 800—1200 մետրի վրա խառն անտառներն են, որտեղ լայնատերևներից շատ տարածված են թղկու մի շարք տեսակներիսկ փշատերևներից՝ սև եղենին, հեմլուկը, եղկինը, սոճին, մանրատերևներից՝ դեղին կեշին: 1200—1500 մ բարձրություններից զբաղեցված են մաքուր փշատերև անտառներով, իսկ մինչ 2000 մ բարձրություններում տարածված են մերձալպյան խոտաբույսերը՝ ուռենու, լաստենու, մրտավարդի, լեռնային թխկու թփուտները:

Անտառների անկարգ հատման հետևանքով զգալիորեն նըլագեց նաև կենդանական աշխարհը: Ներկայումս հազվագյուտ դեպքում կարելի է հանդիպել ազնիվ եղջերվի, կարմիր լուսանի, գորշ աղվեսի, թուղուններից՝ վայրի հնդկահավի: Շատ քիչ են մացել նաև մի ժամանակ Ապալաշներում տարածված գարշակենդանին, զրասամույրը և այլն: Նախկին անտառների տարածքներում ներկայումս մշակում են բազմապիսի գյուղատնտեսական կուտուրաներ, հիմնականում բարձրորակ ծխախոտ:

Հյուսիսային Ապալաշներ.— Սրանք ավելի ցածր են, քան Հարավային Ապալաշները և միատիպ երկրաբանական կառուցվածքի շնորհիվ ունեն ավելի պարզ ոելիեֆի ձևեր: Լեռները գոյացել են ստորին պալեոզոյի կալեղոնյան ժալքավորության ժամանակ, միայն Աղիրոնդակ լեռնազանգվածն է, որ պատկանում է Կանադական վահանին: Հարավայինից Հյուսիսային Ապալաշները բաժանվում են Հուլզոն գետի հովտով:

Հյուսիսային Ապալաշները մի ալիքավոր սարհարթ է, որի վրա տեղ-տեղ բարձրանում են կարծր ապարներից կազմված առանձին լեռնային դանգվածներ: Այստեղ են գտնվում Աղիրոնդակ լեռնազանգվածը, Կանաչ և Սպիտակ լեռները: Սպիտակ լեռների Վաշինգտոն գագաթը հասնում է 1916 մ բարձրության: Հյուսիսային Ապալաշների մեծ մասը 400—500 մ բարձրության բըրավոր սարավանդ է, էրոզիոն մնացորդային ոելիեֆի ձևերով: Հարավում է գտնվում Մոնադնոկ (1000 մ) մնացորդային բարձրությունը:

Չորրորդականում Հյուսիսային Ապալաշները ծածկվել են սառցադաշտերով՝ թողնելով հսկայական քանակությամբ նըստվածքներ՝ մորեններ, դրումլիններ, զգալի տեղ են գրավում ճային գոգավորությունները, տրոգային հովիտները, որոնք Ատլանտյանի ափերում ստեղծել են ֆյորդային ափեր:

Հյուսիսային Ապալաշները զուրկ են նախալեռնային գոտուց: Նրա արևելքում լեռնաբազուկները հասնում են օվկիանոս՝ գոյացնելով մի շարք ոչ մեծ թերակղզիներ, որոնք իրարից բաժանվում են ծովածոցերով: Ամենամեծերից է Ֆանդի ծոցը, որտեղ մակընթացության ալիքն աշխարհում ամենաբարձրն է՝ 18 մետր:

Կիման բարեխառն է. Ատլանտյան ափամերձ շրջանը խոնավ է, իսկ արևմուտքը՝ շափավոր ցամաքային, ձմեռը ձյունառտ է, ցուրտ, բայց ոչ դաժան, իսկ ամառը զով է, անձրեսուտ:

Միջին հունվարյան ջերմաստիճանները հյուսիսում՝ -12 , -14° , հարավում՝ 0° է, հուլիսին համապատասխանաբար՝ $+16^{\circ}$ և $+20^{\circ}$. Միջին տարեկան տեղումներն արևելքում 1300 մմ են, արևմուտքում՝ 700—750 մմ: Տեղումներով օրերի թիվը տարվա մեջ կազմում է 100—150 օր: Զմունը լեռնալանջերում գոյանում է 2—2,5 մ ձնաշերտ:

Հյուսիսային Ապալաշներում ձմունը հաճախակի են ձնաբերը, որոնք մեծ վնասներ են պատճառում ժողովրդական տընտեսությանը, հատկապես տրանսպորտին, իսկ ամունը նկատվում են արևադարձային խոնավ օդային զանգվածների ներթափանցում, ուժեղ տեղատարափ անձրևներ և ալեռտային ջրհեղեղներ: Զմունն արկտիկական օդի ներխուժումների ժամանակ օդի ջերմաստիճանը երբեմն իջնում է -20 , -30° , նույնիսկ՝ -50° :

Հյուսիսային Ապալաշների երբեմնի խիտ անտառների փոխարեն ներկայումս պահպանվում են ոչ մեծ անտառային զանգվածներ՝ կազմված սև հացենու, կարմիր թղկու, հաճարենու, ամերիկյան լորենու, բոխու, ամերիկյան ընկուզենու ծառատեսակներից: Միջին և արևմտյան լեռնային շրջանները ծածկված են փշատերև անտառներով՝ սպիտակ, սև և կարմիր եղևնու, խեժափիճու, կենսածառի և մանրատերև ծառատեսակներով: Հյուսիսային Ապալաշների ծայր հյուսիսը բարձր խոնավության շնորհիվ հարուստ է ճահճներով ու թփուտային բուսականությամբ:

Այս շրջանի խոնավ, մոխրացված և խճային մեխանիկական կազմ ունեցող հողերն այնքան էլ նպաստավոր չեն գյուղատնտեսական կոլտուրաների մշակության համար, այդ պատճառով էլ կարեւոր անասնապահական շրջաններից մեկն է Հյուսիսային Ամերիկայում:

Նյուֆառնելլենդ կղզին Ապալաշների հյուսիսային շարունակությունն է, ցամաքից բաժանված U. Լավրենտիոս ծոցով և ԲելԱյլ 20 կմ լայնության նեղուցով: Տարածությունը մոտ 111 հազար հառ կմ է: Կղզու ուղիեղիքը նման է Հյուսիսային Ապալաշներին: Սա մի պենեպլենացված սարահարթ է, որի բարձրությունը չի անցնում 850 մետրից: Կղզին տեղադրված է մայրցամաքային ծանծաղուտի վրա, ցամաքից անջատվել է շորրորդականում: Ռելիեֆում զգալի տարածում ունեն մորենային նստվածքները, ոչ մեծ լճային գոգավորությունները:

Նյուֆառնելլենդն ունի խոնավ, ծովային, քամուտ, ցուրտ

կլիմա: Ամառը կարճ է, սառը և անձրեսուտ: Միջին հովիսյան ջերմությունը կղզու հյուսիսում՝ $+10^{\circ}$ է, իսկ հարավում՝ $+17^{\circ}$: Զմեռը ցուրտ է, նրա հյուսիսում դիտվում է -12° , իսկ հարավում՝ -3° : Տարեկան միջին տեղումները կազմում են $750-1300$ մմ, ձմեռը ձյունառատ է: Նյուֆառմղենդում շատ են մառախուղները, հատկապես նրա ափամերձ ջրջանները մառախլապատության տեսակետից աշխարհում գրավում են առաջին տեղը: Դրա պատճառն այն է, որ այստեղ բախվում են ցուրտ լաբրադորյան և տաք գոլֆստրիմ օվկիանոսային հոսանքները:

Կղզու բուսական ծածկույթի մեջ զգալի տեղ են գրավում փշատերեւ անտառները, որոնք տեղադրված են գետահովիտներում և մերձափնյա վայրերում: Բնորոշ ծառատեսակներից են եղենինը, ուև և սպիտակ եղենին, սպիտակ կեշին, որոնք ծածկում են կղզու տարածքի 40 տոկոսը: Բացի անտառներից, զգալի տարածություն են գրավում թփային ու ճաճճային բուսատեսակները:

Նյուֆառմղենդի կարևոր հարստություններից հիշատակության արժանի են մերձափնյա ջրերի ձկան պաշարները: Հյուսիսից եկող լաբրադորյան սառը ջրերը, միախառնվելով Ալլանտյանի տաք ջրերին, նպաստավոր պայմաններ են ստեղծում նյուֆառմղենդյան ծանծաղուտում ձկների բազմացման համար: Կղզում բնակավայրերը տեղադրված են մերձափնյա մասերում, բնակչության գերակշռող մասն զբաղվում է ձկնորսությամբ:

Մերձափնյա դաշտավայրեր (Մերձմեքսիկական և Մերձատլանտյան)

Մերձափնյա դաշտավայրերը երկրաբանական տեսակետից ամենաերիտասարդ բնական երկիրն է, որին բնորոշ է ուժեղ ճաճճացված հարթ ուղիեֆը, օվկիանոսային տաք, խոնավ կլիման և դրանցով պայմանավորված՝ մերձարևսագարձային բուսականությունը:

Երկրի հյուսիսն ընկած է հյուսիսային լայնության 40° , իսկ հարավը՝ 26° -ի տակ: Նրա բնական պայմանների ձևավորման գործում կարևոր դեր են խաղում հարկան, հատկապես Մեծ և Կենտրոնական հարթավայրեր երկրները: Դեռ պալեոգենում Մերձափնյա դաշտավայրերի տարածքի մեծ մասը եղել է օվկիանոսի հատակ, նույնիսկ առանձին հատվածներ ցամաք են դարձել:

միայն վերջին՝ Վիսքոնսինի սառցապատման (7 հազար տարի առաջ) ժամանակաշրջանում։ Այդ պատճառով էլ երկրի մեծ մասնի միանգամայն հարթ ոելիեֆ, տեղ-տեղ, սակայն, կան գետահովիտներ և ծովափնյա դարավանդներ։

Դաշտավայրերի հիմքը կազմված է պալեոզոյան հասակի ծալքավոր կառուցներից։ Դա մի ճկվածքային տեղամաս է, որն իր վրա ունի Միսսիսիպիի բերած հզոր ալուվիալ նըստվածքները։ Ալուվիալ այդ կուտակումները պարունակում են մեծ քանակությամբ նավթի, գազի և աղի պաշարներ։

Ֆլորիդա թերակղզին կազմված է կրաքարային գոյացություններից, հարուստ է ֆուֆորիտներով, իսկ մակերեսույթն աշխի է ընկնում ոելիեֆի կարստային ձևերով։

Մերձափնյա դաշտավայրերի ոելիեֆը մեր օրերում նույնպես գտնվում է ձևավորման փուլում, որին մասնակցում են հոսող ջրերը, օվկիանոսը, ինչպես նաև տեկտոնական շարժումները։ Գետերը կատարում են հսկայական էրոզիոն և հատկապես գետաբերանային շրջաններում ակումբուցիոն աշխատանք։ Միայն Միսսիսիպին օրական գելտայի շրջան է բերում 600 հազար տոննա նստվածքներ։ Օվկիանոսի ալերախման հետևանքով ափամերձ հատվածներում գոյացել են ցամաքալեզվակներ, դյուներ, լագունային լճեր, մարշեր և մի քանի ոչ մեծ կղզիներ։

Մերձափնյա դաշտավայրերի տարածքում ցայտում արտահայտված է երկու եղանակ՝ տաք ձմեռ և շոգ ու անձրեսոտ ամառ Զմեռային ջերմաստիճանները սովորաբար $+8^{\circ}$ -ից ցածր չեն, իսկ Ֆլորիդայում նույնիսկ $+15$, $+16^{\circ}$ են լինում։ Բացառություն են կազմում առանձին օրեր, երբ նկատվում են սառնամանիքներ։ Զյուն սովորաբար չի լինում, սակայն օդի խոնավության պատճառով գոյանում է առատ եղյամ՝ ծածկելով հողի մակերեսույթը, ինչպես նաև տների տանիքներն ու ծառերի ճյուղերը։ Հաճախ հզոր եղյամի ծանրությունից ծառերի ճյուղերը ջարդվում են։ Արկտիկական ցուրտ օդի ներխուժումների ժամանակ նույնիսկ մերձափնյա մասերում, բացի Ֆլորիդայի հարավից, օդի ջերմաստիճանն իշնում է -5 , -8° և հսկայական վնասներ պատճառում մերձարևադարձային կովտուրաների ցանքերին։ Բացառությամբ այդպիսի հազվագեց ցրտերի, ձմեռն ամբողջոթյամբ մեղմ է ու տաք։ Մերձատլանտյան դաշտավայրի հյուսիսային շրջանում արեստ աշնանից հետո, դեկտեմբերին, սկսվում է անձ-

բեային սևոն, որը արևմտյան ցիկլոնների հաճախակի ներթափանցման արդյունքն է:

Մերձմեքսիկական դաշտավայրում և Ֆլորիդայում ձմեռք անձրևներ քիչ են գալիս, այդ պատճառով էլ հիշյալ շրջաններում ամենալավ եղանակը նկատվում է հենց ձմռանը: Ֆլորիդայի արեվելքով անցնող տաք հոսանքի, $+20$, $+22^{\circ}$ զերմության ու շոր եղանակի շնորհիվ այդ շրջանը համարվում է աշխարհում ամենալավ ձմեռային հանգստի վայրերից մեկը:

Ամառը շոգ է և անձրևոտ: Ամառային մուսոնային անձրևներն սկսվում են մայիսի սկզբից և համառում մինչև սեպտեմբեր: Միջին հուլիսյան զերմությունը $+25^{\circ}$ -ից ցածր չէ: Տարեկան տեղումների քանակը կազմում է $1000-1500$ մմ: Օգոստոս-սեպտեմբերին Մեքսիկական ծոցի շրջանում և Ֆլորիդայի վրա գոյանում է մթնոլորտի ցածր ճնշում, որի շնորհիվ լինում են ուժեղ փոթորիկներ և տեսական անձրևային շրջան: Այդ ընթացքում քամու արագությունը հաճախ համառում է $300-400$ կմ/ժամի:

Մերձափնյա դաշտավայրերի ջրագրական ցանցում կարենոր նշանակություն ունի Միսսիսիպիին: Գետն ստորին հոսանքում ունի շուրջ 120 կմ լայնություն: Նրա դարավանդները դարձել են բրնձի մշակության կարևոր տեղամասեր: Իսկ գետի ողողահունը ծածկված է սոճու պուրակներով ու ճահճներով: Գետի բերվածքների հզորությունը դելտայում կազմում է $8-9$ կմ: Դելտան անընդհատ աճում է, որոշ հատվածներում խորանալով ծովում տարեկան 100 մետր:

Մերձափնյա դաշտավայրերի համեմատաբար շոր, ջրբաժանային հատվածներում տարածված են դեղնավուն ու կարմրահողերը, որոնք նախկինում ծածկված են եղել սոճու և մերձարևադարձային այլ ծառատեսակներով, ինչպես նաև ամերիկյան գաճաճ արմավենու տեսակներով: Դրանց հատման հետևանքով ներկայումս մեծ տեղ են գրավում կոշտ խոտածեսակները և կուտուրական ցանքերը: Ավելի խոնավ վայրերում աճում են հացենու, լորենու, մագնոլիայի անտառներ՝ փաթաթված լիաններով ու էպիֆիտներով: Ճահճու վայրերում տարածված են նոճու տախտականման արմատներով ծառատեսակները, որից ստանում են բարձրորակ բնափայտ: Անտառային բացատներում զգալի տարածում ունեն եղեգնի մացառուտները և ճահճային այլ խոտաբույսեր:

Առատ խոնավությունն ու տաք կլիման նպաստավոր պայմաններ են ստեղծել մի շաբթ կենդանիների, ինչպիսիք են՝ կոկորդիլոսը, ալեգատորը, կրիան և հսկա գորտը, ինչպես նաև ջրային թոշունների ու անհամար միջատների համար:

Չնայած երկրի ընդհանուր գծերին, այնուամենայնիվ, առանձին հատվածներ իրենց բնական պայմաններով տարբերվում են իրարից:

Մերձալանտյան դաշտավայր.— Ամենանեղ հատվածն է, մոտ 250 կմ լայնությամբ, որի զգալի մասն զբաղեցնում են ծովային ու գետային դարավանդները՝ ծածկված սոճու նոսր անտառներով։ Եատ են ճահիճները և մերձափնյա մարշերը։ Դաշտավայրի արևմտյան հատվածներն ունեն ալիքավոր էրոզիոն ռելիեֆի ձևեր։ Կլիման ձմռանը համեմատաբար սառն է, խոնավամուռ՝ ոչ այնքան նպաստավոր ձմեռային հանգստի համար։ Ամառը շոգ է և աշքի է ընկնում խոնավ մուսոնային կլիմայական պայմաններով։

Մերձմեխիկական դաշտավայր.— Մերձալանտյանից տարբերվում է ավելի տաք կլիմայով։ Ավելի լայն տարածք ունի, աշքի է ընկնում էրոզիոն ռելիեֆով։ Միսսիսիպիի հովտից արևմուտք կլիման նույնիսկ ցամաքային է, որտեղ սոճու անտառներն իրենց տեղը զիջում են փշոտ թփուտներին (յուկի և կակտուսների) և չորասեր տափաստանային խոտերին։ Այդ վայրի լանդշաֆտը հիշեցնում է չորասեր սավաններ։ Միսսիսիպիի ձախափնյա շըրջանը և գետահովիտը տիպիկ ալյուվիալ դաշտավայր է՝ կազմված գետաբերվածքներից, մասնատված հնահուներով։ Չնայած Միսսիսիպին պաշտպանական պատնեշով եղբավորված է, այնուամենայնիվ, ուժեղ հորդացման ժամանակ դուրս է գալիս ափերից և ողողում համարյա ամբողջ դաշտավայրը՝ հսկայական վնաս պատճառելով գյուղատնտեսական ցանքերին, սակայն հողը հարստացնում է սննդարար նյութերով։ Գետի ողողատի մեծ մասը օգտագործվում է բրնձի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակության համար։

Ֆլորիդա թերակղզի.— Աշքի է ընկնում իր հիասքանչ հարավային բնությամբ։ Ֆլորիդա իսպաներեն նշանակում է ծաղկող իրոք որ տարվա բոլոր եղանակներին այստեղ բուսականությունը ծաղկած է։ Ֆլորիդայում տարածված կավճի կրաքարային ծածկոցում մեծ զարգացում են գտել ռելիեֆի կարստային ձևերը,

Հատկապես կարստային լճերը, որոնք շրջապատված են արմավենու անտառներով։ Թերակղզու հարավը ծովի մակարդակից բարձր է 6—7 մետրով։ այն լրիվ ճահճացած է, որտեղ տարածված են եղեգնի բարձր մացառուտները, ճահճախոտերը և ճահճային նոճու անտառները։

Մեծ հարթավայրեր

Մեծ հարթավայրերը մի ընդարձակ սարավանդային երկիր է, ձգվում է Հյուսիսից հարավ մոտ 4000 կմ՝ տայգայի զոնայից մինչև մերձարևադարձներ։ Երկրաբանական տեսակետից նման է Կենտրոնական հարթավայրեր երկրին։ Այն կազմում է Հյուսիսամերիկյան պլատֆորմի արևմտյան եզրը, որի մինչքեմբրյան հիմքըն ընկած է մոտ 1000 մ խորության տակ՝ իր վրա ունենալով վերին պալեոզոյան կրաքարային և մեզոկայնոզոյան Կորդիլիերներից քայլայված փուխր նստվածքներ։ Ամբողջ տարածքը բարձրացել է վերին կավճի և պալեոգենի ժամանակ (Կորդիլիերների հետ միասին), հասնելով մոտ 1500 մ բարձրության, ենթարկվելով խոր էրոզիոն մասնատման։ Ակտիվ բարձրացումների շընորհիվ մի շարք հատվածներում գոյացել են անտիկլինալային լեռնաշղթաներ, որոնք հաճախ հասնում են 2000—2200 մ բարձրության (Բլեկ-Հիլս, ունի 2200 մ բարձրություն)։ Առանձին դեպքերում ներարկվել են երիտասարդ ինտրուզիաներով, որոնք նույնպես մերկանալով, ոելիքներում ստեղծել են յուրահատուկ ձևեր։

Մեծ հարթավայրերն ընկած են խաղաղօվկիանոսյան օդային զանգվածների ճանապարհին, որոնք անցնելով Կորդիլիերյան համակարգը, կորցնում են իրենց խոնավությունը և հանդիս են գալիս որպես շոր օդային զանգվածներ, այդ է պատճառը, որ Մեծ հարթավայրերը ավելի ցամաքային կլիմա ունեն, քան Փայոռոտ լեռները կամ Կենտրոնական հարթավայրը։ Լանդշաֆտային տեսակետից Մեծ հարթավայրերի մակերեսությը շոր, ցածր խոտածածկով տափաստան է, որտեղ ամռանը խոտածածկը լրիվ շորանում է, փոքր հզորության, տեղ-տեղ քամահարված շագանակագույն հողերով։ Ոչ մեծ գետահովիտները շոր սեզոնում երթեմն դառնում են անհոսք, որտեղ զգալի տարածում ունեն հողմահարման նյութերը։

Մեծ ձգվածության պատճառով ուսումնասիրվող երկրին ուշ

Նի տարբեր մասերում տարբեր կլիմայական պայմաններ: Հյուսիսում ձմեռը խստաշում է, օդի ջերմաստիճանը հունվարին հասնում է -25 , -45° -ի, այն դեպքում, երբ հարավում այն 0° -ից բարձր է լինում: Երկրի հյուսիսում ձմեռը տևում է $4-5$ ամիս, ձյունածածկույթը լինում է կայուն, իսկ հարավում կայուն ձյունածածկույթը լինում է կատարում: Չնայած դրան, ամբողջ երկրում ձմռանն օդի ջերմաստիճանը հաճախ իջնում է $-15-20^{\circ}$ -ից ցածր, դա այն դեպքում, երբ փշում են հյուսիսարևմտյան քամիները՝ առաջացնելով երբեմն ուժեղ ձյունաբթեր: Ձմեռը արևմուտքից փշում են ֆյոնային քամիները (հնդկացիների լեզվով կոչվում է «Հինուպկ»), որոնք թափանցելով Մեծ հարթավայրերի տարածք, առաջ են բերում ջերմաստիճանի բարձրացումը: Այդ ընթացքում նույնիսկ ձմռանը ձյունն արագ հալվում է և դրանով ակտիվանում մակերեսույթի լվացումը: Ամառը շինուկ քամու դեպքում երաշտ է լինում:


Մեծ հարթավայրերը միջին հաշվով ստանում են $300-500$ մմ տեղումներ, մինչդեռ գոլորշունակությունը կազմում է $1000-1500$ մմ, այդ պատճառով էլ գյուղատնտեսական կուլտուրաները կարիք են զգում արհեստական ոռոգման:

Ցամաքային կլիմայական պայմանների հետեանքով Մեծ հարթավայրերն ունեն թույլ ջրագրական ցանց: Գետերը հիմնականում պատկանում են Միսսիսիպիի ավաղանին: Բոլոր գետերը սկիզբ են առնում Փայոոտ լեռներից: 'Իրանց մակարդակի բարձրացումը նկատվում է գարնանը, երբ Փայոոտ լեռների ձյունը հալվում է՝ ուղելցվելով անձրևներով, իսկ ամառվա երկրորդ և եսին խստ ծանծաղում են, որոշ գետեր նույնիսկ որկվում ըրից: 'Դարնանային ինաւենսիվ հոսքի ժամանակ գետերը մեծ քանակության հումարման նյութեր են տանում դեպի արևելք՝ առաջացնելով հսկայական մեծության արտաքերման կոներ: Նավագնացության համար պիտանի են միայն Միսսուրին, Արկանզասը և Ռեդ-ռիվերը, իսկ մնացածներն ունեն միայն ոռոգիչ նշանակություն:

Մեծ հարթավայրերի տարածքի մեծ մասը ծածկված է տափաստանային ու անտառատափաստանային բուսականությամբ: Նրա հյուսիսում անտառատափաստանն իր տեղը զիջում է խառն անտառներին: Խոտածածկը տափաստանում ցածր է և հիմնականում աշքի է ընկնում լեռնային շուշաններով, վայրի սոխուկներով, մարգարտածաղիկներով, այլախոտերով և ավելի շատ՝

բիզոնախոտերով, որոնք աճում են հիմնականում շագանակագույն հողերում։ Մայր հարավում տարածված են նոսր, փշոտ թրփուտները (ակացիա-կակտուս), որոնք արդեն հիշեցնում են եհսաանապատային և ոչ թե տափաստանային բուսական տիպ։

Մարդու տնտեսական գործունեության հետևանքով կենդանական աշխարհը նույնպես փոխվել է։ Մի ժամանակ տարածված խոշոր կաթնասուններն իրենց տեղը զիջել են կրծողներին, սողուններին ու միջատներին։



Բիզոնները Մեծ հարթավայրերի տափաստաններում։

Բնական լանդշաֆտը խիստ տուժել է, բուռն զարգացում է ստացել էրոզիան, որի հետևանքով անօգտագործելի հողերն զգալի տարածություններ են գրավում։ Նախալեռնային շրջաններում մեծ տարածում ունեն բեղենդները։

Հյուսիսից հարավ մեծ ձգվածության պատճառով Մեծ հարթավայրեր երկիրը բաժանվում է երեք մարզերի՝ 1. Պիս-ոփիվեր և Սասկաշեվան սարավանդներ, 2. Միսսուրիի սարավանդ և Մեծ հարթավայրեր, 3. Լյանո-էստակադո և էդուարդս սարավանդներ։

Պիս-ոփիվեր և Սասկաշեվան սարավանդներ. — Ունեն 600—900 մ բարձրություն։ Այս մարզի բնորոշ առանձնատկություններից են՝ խիստ ցամաքային ցուրտ կլիման, անտառային բու-

սականությունը և լավ պահպանված սառցադաշտային ռելիէֆի ձևերը: Ռելիէֆը ծածկված է չորրորդականի նստվածքներով, որոշ հատվածներում մերկանում են պալեողոյան և մեզոլոյան ժողովային, հատկապես կրաքարային նստվածքներ: Մակերեւութիւն մասնատումը պայմանավորված է չորրորդական սառցադաշտերի հալոցքային ջրերով, որոնք լավ արտահայտված են Սասկաշեգան, Պիս-ոփիվեր, Խեյ և այլ գետերի հովիտներում, որտեղ սառցադաշտային փոխր նյութերի շերտախմբերի հզորությունը հասնում է տասնյակ մետրերի: Ջրբաժաններում զգալի տարածում ունեն մորենային կուտակումները, որոնք անտառապատված լինելու շնորհիվ քիչ են լվացվել:

Ուսումնասիրվող մարզում կլիման աշքի է ընկնդմ խիստ ցուրտ ձմեռներով, տաք ամառներով: Միջին հունվարյան ջերմաստիճանները տատանվում են՝ -21 — -23° -ի միջև: Ձմեռը ձյունառատ է, որը և հանդիսանում է հիմնական խոնավության աղբյուր: Միջին հովիսյան ջերմաստիճանները՝ $+16$, $+19^{\circ}$ են, տարեկան տեղումները՝ 350 — 400 մմ ամառային մաքսիմումով, որը նպաստավոր է անտառային բուսականության աճման համար: Հիմնական ծառատեսակներից են՝ սոճին, բարդին, սպիտակ եղենին, իսկ ստորին շարահարկում՝ խոտերը, մամուռները և քարաքոսերը: Հողերը ճմակարբոնատային և ճմապոդոլային, գորշ անտառային տեսակների են: Ցածրություններում, ուր տեղումները քիչ են, տարածված են տափաստանային ցածր խոտածեսակները: Սակայն ֆերմերային տնտեսությունների հանդես գալով տափաստանային վայրերն ամբողջությամբ հերկվեցին, բնուկան լանդշաֆտն իր տեղը զիշեց կուլտուրականին, հատկապես գարնանացան ցորենի ցանքերին:

Միսսուրիի սարավանդ և Մեծ հարքավայրեր.— Լանդշաֆտային տեսակետից ընկած են չոր տափաստանում: Մարզի կարեւոր առանձնահատկություններից են չոր ու տաք կլիմայական պայմանները, հատկապես կլոր տարին Կորդիլիերներից վիզող շինուկ քամու առկայությունը, որով էլ պայմանավորված են բարձր ջերմաստիճաններն ու ցածր խոնավությունը: Ցածր խոնավությունն իր կնիքն է դնում լանդշաֆտի, հատկապես հողաբուսական ծածկի, ինչպես նաև ջրագրական ցանցի ու ռելիէֆի ձևերի վրա: Այս մարզում հողագործությունն առանց ոռոգման անհնարին է

դառնում: Սասկաշեվան և Միսսուրի գետերի միջագետքի որոշ հատվածներ նույնիսկ անհուսք են:

Մարզի հյուսիսում տարածված են սառցադաշտային ոելիեֆի ձևերը, որից հարավ ոելիեֆն աշքի է ընկնում մեծ մասնատվածությամբ: Հանդիպում են բեղլենդներ, հատկապես Կանադայում, Ռեդ-ռիվեր և Ուայտ գետերի հովիտներում: Էրոզիոն մասնատվածությունը տեղ-տեղ այնքան մեծ չափերի է հասնում, որ հաճախ վայրը թողնում է լեռան տպավորություն: Մարզի հարավը հենց բուն Մեծ հարթավայրերն են, որտեղ նոսր բուսականության շնորհիվ հաճախ փոշու փոթորիկներ են լինում: Վերջիններիս գործունեության հետևանքն են ոելիեֆի դեֆլուկցիոն ձևերը: Ներքասկայի նահանգում զգալի տարածություն են զրաղեցնում (50 կմ²) դյումերը, որոնք ունեն մոտ 30 մ բարձրություն: Այստեղ է գտնվում տեկտոնական ծագում ունեցող Բլեկ-Հիլ լեռնաշղթան, որը ձգվում է մոտ 150 կմ և առավելագույն բարձրությունը 2207 մ է: Բարձր դիրքի պատճառով ստանում է համեմատաբար շատ խոնավություն և ծածկված է սոճու անտառներով:

Մարզը հիմնականում արոտային անասնապահության շրջան է: Մշակվող հողատարածությունները խոնավության պակասության պատճառով ավելի քիչ են, սակայն արհեստական ոռոգման շնորհիվ ստանում են գարնանային ցորենի, եգիպտացորենի և կերային կուլտուրաների լավ բերք: Մարզի արևելքում՝ տարածված են սև, իսկ արևմուտքում՝ շագանակագույն հողերը, շոր հատվածներում՝ բաց գարշնագույն հողերը, որոնք աշքի են ընկնում 3—4 տոկոս հումուսի պարունակությամբ:

Լյանո-էստակադո և էղուարզս սարավանդները.— Բնորոշ են ավելի արիդ կլիմայական պայմաններով: Նախորդ՝ ավելի հյուսիս գտնվող մարզերի հետ համեմատած ուսումնասիրվող մարզի մակերևույթում հողմահարման կեղևի հգորությունն ավելի փոքր է. նրա ոելիեֆում զգալի տարածություններ են գրավում պալեոզոյան հասակի կրաքարերից կազմված մայր ապարների ելքերը: Գետերն ստեղծել են խոր կանիոնաձև հովիտներ, դրանով բարդացնելով մարզի ջրամատակարարման աշխատանքները: Ռելիեֆն ամբողջությամբ թմբավոր է, տեղ-տեղ հանդիպում են ոչ բարձր բլուրներ՝ մասնատված ժամանակավոր ջրհոսքերի կողմից: Զմեռը տաք է, սակայն լինում են և սառնամանիքներով օրեր: Ամառը շոգ է: Տեղումները, համեմատած նախորդ մարզի

հետ, ավելի շատ են, սակայն թափվում են կարճ ժամանակամիջոցում, հորդառատ անձրևների ձևով՝ լվանալով մերկացնուեն մայր ապարների նորանոր շերտեր։ Գորշ դարչնագույն հողերում զարգացած են խոտային ու թփային բուսատեսակները՝ բիզոնախոտը, այլախոտերը, սուկովենտները։ Մարզի արևելյան խոնավ վայրերում հանդիպում են ցածրահասակ կաղնու տեսակներ, ոռոգվող հողերում մշակում են հացահատիկային և նույնիս մերձարևադարձային կուլտուրաներ։

Կորդիլիերներ

Հյուսիսամերիկյան Կորդիլիերները աշխարհի խոշորագույն լեռնային համակարգերից մեկն են։ Ինչպես մյուս երիտասարդ լեռնային երկրներում, այնպես էլ այստեղ լանդշաֆտագոյացնող կարևոր գործոն են երիտասարդ տեկտոնական պրոցեսներ։ Համարյա ամենուրեք լեռներն արևմուտքից արևելք հանդիս են գալիս հինգ լեռնագրական գոտիներով։ Մերձափնյա շղթաներ Ներքին ճկվածքներ, Նեադայի լեռնաշղթաներ, Ներքին սարահարթեր ու սարավանդներ, իսկ արևելքում՝ Լարամյան լեռնաշղթաներ։ Լեռնագրական այս գոտիները խոնավության տեսակետից գտնվում են տարբեր պայմաններում, հետևաբար ունեն տարբեր լանդշաֆտներ։ Ամենից շատ տեղումներ ստանում են Մերձափնյա և Նեադայի բարձրադիր լեռնաշղթաների արևմտահայալանջերը, ավելի քիչ՝ Լարամյան լեռնաշղթաները և Ներքին սարահարթերն ու սարավանդները։ Այ դպրածառով էլ առաջիններ ծածկվել են անտառներով, երկրորդները՝ շորասեր թփուտներով կիսանապատային բուսատեսակներով։ Բացի այդ, իր մեծ ձրգվածության հետևանքով Կորդիլիերները բնական պայմաններ տեսակետից նույնպես տարբերվում են. նրանց հյուսիսը գտնվուէ արկտիկական, իսկ հարավը՝ արևադարձային գոտում։

Ֆիզիկաշխարհագրական տեսակետից Կորդիլիերները բաժանվում են հետեւյալ երկրների. 1. Ալյասկայի Կորդիլիերներ 2. Կանադական Կորդիլիերներ, 3. ԱՄՆ-ի Կորդիլիերներ, 4. Մերսիկական բարձրավանդակ և Կալիֆոռնիա թերակղզի։

Ալյասկայի Կորդիլիերներ

Այս երկրի տարածքն ընկած է Արկտիկական և Մերձարկտիկական գոտիներում և բնորոշ է խիստ կլիմայով, երկարատև ձըմեռներով ու կարճ ամառներով, բազմամյա սաղցույթով, լեռնային սաղցադաշտերով ու հավերժական ձնաբժերով, տունդրային և անտառատունդրային բուսականությամբ։ Սա միակ երկիրն է, որ ձգվում է արևմուտքից արևելք։ Հիմնական մորֆոստրուկտուրային միավորներն են՝ Բրուգսի լեռները և Հյուսիսում ձգվող նախալեռնային հարթությունը, Յուկոնի սարահարթը, իսկ հարավում՝ մի շարք բարձր լեռնաշղթաներ։ Երկրի ափերը ողողվում են ցուրտ Բոֆորտի, Չուկոտյան, Բերինգի և տաք Ալյասկայի ծոցի ջրերով։ Հյուսիսում Չուկոտյան և Բոֆորտի ծովերը տարվա մեծ մասում չեն ազատվում սառուցներից և ցամաքի վրա բարերար ազդեցություն չեն թողնում, մինչդեռ Հյուսիսաղաղօվկիանոսյան տաք ջրերի Ալյասկայի ծոց ներթափանցման շնորհիվ նրա վրա գոյացած տաք, խոնավ օդային զանգվածները, շարժվելով դեպի արևելք, առատ խոնավություն են տալիս և բարձրացնում օդի ջերմաստիճանը։ Սակայն խաղաղօվկիանոսյան խոնավ ու տաք օդային զանգվածները մերձափնյա բարձր լեռների պատճառով դեպի երկրի խորքը չեն թափանցում։ Ալյասկայի ծոցի շրջանում ձմեռը տաք է, ամառը՝ զով։ Յուկոնի սարահարթը, Բըրուգսի լեռները, ընկած լինելով արկտիկական օդային զանգվածների ազդեցության տակ, ունեն ցուրտ, խիստ ցամաքային կլիմա, որտեղ մեծ տարածում ունի հավերժական սաղցույթը։

Առատ խոնավության հետևանքով Ալյասկայի ծոցին հարող Ալյասկայի, Ս. Եղիայի լեռնաշղթաների լանջերին մեծ տարածում ունեն հավերժական ձյունը և հզոր սաղցադաշտերը, որոնք երբեմն իջնում են մինչև օվկիանոս։ Ալյասկայի լեռնաշղթայից հյուսիս կլիմայի ցամաքայնության հետևանքով սաղցադաշտեր համարյա թե չկան։ Ալյասկայի կենտրոնական մասով արևելքից արևմուտք հոսում է միակ խոշոր Յուկոն գետը, որի տարեկան ծախսը գետաբերանում կազմում է 600 խոր մ/վրկ։ Գետը վերին հոսանքի շրջանում ունի նեղ, խոր հովիտ, իսկ ստորին հոսանքի շրջանում, դուրս գալով հարթավայր, միանդրելով թափվում է Բերինգի ծովը։ Յուկոնը կարևոր տրանսպորտային ուղի է, իսկ

ձմեռը սառչելով վերածվում է սահնակային հարմար ճանապարհ:

Ալյասկայի Կորդիլիերները հարուստ են մի շարք օգտակար հանածոների պաշարներով՝ հատկապես ոսկով, նավթով, քարածխով, պղնձով, պլատինով, կապարով և այլն: Բնական հարըստություններից են անտառները, որոնք այստեղ կազմում են տարածքի 10 տոկոսը միայն: Ալյասկայի Կորդիլիերյան երկրում առանձնացնում են շորս բնական մարզեր՝ 1. Արկտիկական, 2. Յուկոնի սարահարթ, 3. Ալեռության կղզիներ, 4. Հարավային բարձրալեռնային մարզ:

Արկտիկական մարզ.— Ընդգրկում է Բրուքսի լեռները, դրանից հյուսիս գտնվող Արկտիկական սարավանդը և Յուկոնիկական դաշտավայրը: Ամբողջությամբ սա մի անտառազորկ տունդրայական տարածք է՝ շատ խիստ կլիմայական պայմաններով: Բրուքսի լեռները 1500—2000 մ բարձրության, առանցքային մասերում պալեոլոյան, իսկ եզրերում՝ մեզոլոյան հասակի ապարներից կազմված մի շարք լեռնաշղթաներ են (Դե Լոնգի, Բերդա, Էնդիկոտտ, Ֆրանկլին, Ռումյանց և այլն): Սայր հյուսիս-արեվելքում Բրուքսի լեռների շարունակությունն են կազմում Ռիչարդսոնի լեռները:

Արկտիկական սարավանդը կառուցվածքային տեսակետից նման է Մեծ հարթավայրերին: Այն կազմված է կավճի և պալեոգեն-նեոգենի ավազաքարերից, ունի թույլ թեքություն դեպի հյուսիս: Առաջնային ծովագում է Արկտիկական դաշտավայրին:

Արկտիկական դաշտավայրը հարթ, լճերով ու ճահճներով հարուստ, երիտասարդ ծովային և ալյուվիալ նստվածքներից գոյացած շրջան է: Տաք ամսվա միջին ջերմությունը՝ +5°-ից մի բարձրանում, իսկ ցուրտ ամսվանը՝ —25°-ից բարձր չէ: Զմռան տեղումները քիչ են, ծյունածածկույթն անկայուն է: Ամառը դաշտավայրում կարճ է և ցուրտ, հողի մակերևույթը՝ 20—30 սմ-ից ավելի լի հալվում: Բազմամյա սառցությունը 250—270 մ է: Զգալի տարածում ունեն հիդրոլակոլիտային, պոլիգոնալ գրումտային ուղիեֆի ձևերը:

Մարզի լեռնային հատվածներում հիմնական ուղիեֆագոյացնող գործոն է նիվացիան, որի շնորհիվ նախալեռները ծածկված են հողմնահարման խոշորաբեկոր և մանրահատիկ գոյացություններով: Բրուքսի լեռների բարձրադիր մասերում զգալի են սառ-

ցաղաշտային ռելիեֆի ձևերը, սակայն ոչ ժամանակակից, այլ հնագույն սառցապատման։ Այժմ կլիմայի ցամաքայնության պատճառով կարելի է հանդիպել միայն ոչ մեծ տարածություն զբաղեցնող գլեշերային և ֆիոնային սառցաղաշտերի։

Լեռների շրջանը համարյա զուրկ է բուսականությունից, բացառությամբ մամուռների և քարաքոսերի, ինչպես նաև Արկտիկական տունդրային յուրահատուկ մի շարք բարձրակարգ բույսերի։ Գետահովիտներում հանդիպում են կեշու և ուռենու թփեր, իսկ մարգի հարավում՝ եղևնու ցածր ծառատեսակներ։ Արկտիկական սարավանդի և դաշտավայրի շրջանում տարածված են մամուռաբոշխային տունդրայական բուսականությունը, իսկ ցածրություններում՝ ճանճային բուսատեսակները։

Յուկոնի սարահարք. — Մի ընդարձակ տարածություն է՝ կազմված պալեոզոյան կարծր ապարների ոչ բարձր զանգվածներից և ակումուլյատիվ հարթություններից։ Սարահարթն արևելքից դեպի արևմուտք թույլ թեքություն ունի, որտեղով հոսում է Յուկոն գետը։ Յուկոնի սարահարթի արևմտյան՝ Բերինգի ծովափնյա շրջանը ալյովիալ և աբրազիոն հարթություն է, 150—200 մ բարձրությամբ, որի հյուսիսում է Սյուարդտ թերակղզին։ Սարահարթի տարածքում առանձին բարձրություններ հասնում են 2000—2500 մետրի։ Յուկոնի սարահարթը ծածկոցային սառցաղաշտերով չի ծածկվել, բացառությամբ առանձին լեռնազանգվածների (Կիլբրուկ և այլն), որոնք իրենց վրա կրում են սառցաղաշտային ռելիեֆի մի շարք ձևեր։ Հյուսիսից և հարավից Յուկոնի սարահարթը եզրավորվում է բարձր լեռնաշղթաներով։

Տեսական դենուդացիայի հետևանքով Յուկոնի սարահարթում մերկացել են մի շարք կարևոր օգտակար հանածոների պաշարներ։ Հիշատակության արժանի են ոսկու հանքավայրերը, որոնք կապված են Նևադայի հասակի ուլտրահիմքային ինտրուզիվ գոյացությունների հետ։

Չնայած Յուկոնի սարահարթն ընկած է Արկտիկական մարգից հարավ, բայց ձմեռներն այստեղ ավելի ցուրտ են։ Սա պայմանավորված է Կանադական բարձր ձնշման գոտու հարկանությամբ։ Համարյա ամեն տարի օդի ջերմաստիճանը -50° -ից ցածր է լինում, իսկ նվազագույնը եղել է -64° ։ Զմեռը լինում է պարզկա, առանց քամու, այդ պատճառով էլ սառնամանիքներն այնքան էլ վտանգավոր չեն։ Միայն Բրուքսի լեռներից դեպի հա-

րավ շարժվող բորա քամու դեպքում սառնամանիքները դառնում են անտանելի: Խոկ Ալյասկայի լեռնաշղթայի կողմից երեմն իշնող ֆյոն քամիները մեղմացնում են Յուկոնի սարահարթի եղանակը: Գետերում սառուցի հաստությունը երբեմն հասնում է մեկ մետրի: Գարունը գալիս է ուշ, սակայն ցուրտ սեզոնից տաքին անցնելը տեսում է կարճ:

Ամառը կարճ է և տաք, համեմատաբար խոնավ, օգոստոսին օդի ջերմաստիճանը նույնիսկ բարձրանում է $+25^{\circ}$ -ից: Տաք ամսվա միջին ջերմաստիճանը $+15^{\circ}$ է: Տարեկան տեղումները կազմում են 300 մմ: Սարահարթի կլիման ամբողջությամբ վերցրած շոր ցամաքային է, բացառությամբ Բերինգի ծովափնյա շրջանի, որտեղ ամառը սառն է, ձմեռը մեղմ. ամպամածությունը բարձր է՝ 70 տոկոս: Թույլ գոլորշիացման հետևանքով սարահարթի գետերը բավականին ջրառատ են և ունեն ոչ միայն տրանսպորտային, այլև հիդրոէներգետիկ նշանակություն:

Յուկոնի սարահարթում զգալի տեղ են գրավում անտառները՝ կազմված ուռենու, բարդու, սպիտակ եղևնու, խեժափիճու և սոճու ոչ բարձր ծառատեսակներից: Մելիեֆի բարձրադիր մասերը ծածկված են տունդրայական բուսականությամբ: Անտառներում



Ալյասկայի բնապատկեր:

կարելի է հանդիպել գորշ արշի, անտառային եղբերվի, որմզդեղի, լուսանի, իսկ ջրաժամային հատվածներում՝ հյուսիսային եղբերվի, բևեռաղվեսի, լեմինգի:

Ալեռության կղզիներ և Ալյասկա թերակղզի.— Մարզն ընդգրկում է բուն Ալյասկա թերակղզին և Ալեռության կղզիները։ Ալեռության կղզիները կազմված են 111 հրաբխային կղզիներից։ Այս մարզին բնորոշ են ժամանակակից ակտիվ հրաբխականությունը և օվկիանոսային կլիման։ Արևմուտքից արևելք ձգվում է Ալեռության լեռնաշղթան, որի առանձին գործող հրաբխային գագաթները հասնում են 2500—2800 մ բարձրության։ Ալեռության լեռնաշղթան կազմված է հիմնականում էոցինի հասակի էֆուզիվ և նստվածքային ծալքավոր շերտախմբերից, որոնք ներարկվել են գրանիտային և գաբրոդիորիտային ինտրուզիաներով։

Մարզի տարածքում հաշվվում են մոտ 72 հրաբխային կոներ, որոնցից մոտ 45—47 գործել են 1760 թ. հետո։ Ամենաբարձր հրաբխային կոներից են Ռեդառուր (3410 մ), Իլամնան (3076 մ), Շիշալղինան (2861 մ) և այլն։ Մի շարք հրաբխային կոների խառնարաններում գոյացել են լճեր։ Մի քանի հրաբուխներ անընդհատ ծխում են, երբեմն էլ ժայթքում՝ արտանետելով մեծ քանակությամբ լավային նյութեր։ Հայտնի է 1912 թ. Կատմայ հրաբխի ժայթքումը, որի պայթյունը լսվել է 1200 կմ-ի վրա։ Նրա գագաթում գոյացել է 15 քառ. կմ մակերեսով կաղզերա։ 1953 թ. փետրվարի 15-ին Տրիդենտ հրաբխից արտանետված գազերը և մոխիրը հասել են 9000 մ բարձրության։

Ալեռության արշիպելագում հաշվվում են մոտ 111 կղզիներ, որոնք բոլորն էլ հրաբխային ծագում ունեն. դրանց ժայռոտ ափերը մեծ վտանգ են ներկայացնում նավերի համար։ Կլիման խոնավ ծովային է։ Զմոնանը հաճախ են նկատվում ցիկլոնային պրոցեսներ, որի շնորհիվ եղանակը մարզում դառնում է անկայուն, ամպամած, խոնավ, սակայն ոչ ցուրտ։ Օդի ջերմաստիճանը տատանվում է 0° -ի շուրջը։ Ջյունով օրերի թիվը հասնում է 120—130-ի։ Ամառը համեմատաբար աշքի է ընկնում պարզ, սակայն ցուրտ եղանակով։ Հունիսյան ջերմաստիճանը տատանվում է $+10^{\circ}$ -ի շուրջը։ Ալեռության կղզիների կլիման համարում են «հավերժական աշուն»։

Բուսական ժամանակակից մարզն աղքատ է։ Ալյասկա թերակղզում հանդիպում են ոչ մեծ անտառային զանգվածներ, իսկ

մնացած հատվածները ծածկված են մարգագետնային բուսականությամբ: Մեծ տարածում ունեն եղեգնախոտերը, օշինդրը, պուզան, խորդենին, ընձախոտը և այլ տարախոտեր: Բուսականության նորմալ զարգացմանը խանգարում են ուժեղ քամիները, որոնք արագացնում են բույսերի տրանսպիրացիան:


Հրաբխային կոների լանջերը ծածկված են ավելի չորասեր բուսականությամբ՝ հավամրգի, թթուհատի և անտառատունդրային յուրահատուկ այլ բուսատեսակներով:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից կարևոր նըշանակություն ունի ծովային կուղը, որը ոչնչացման եզրին է գտնվում իր թանկարժեք մորթու համար: Հայտնի է նաև ծովակատուն և այլն:

Հարավային բարձրալեռնային մարգ.— Սրա մեջ մտնում են Ալյասկայի, Սուրբ Եղիայի, Չուգաչի լեռները և միջլեռնային սարավանդներն ու դաշտավայրերը: Մարզի հիմնական բնութագրիներն են մեղմ, խոնավ կլիման և բարձրալեռնային ուելիեֆը: Վերջիններովս էլ պայմանավորված մեծ տարածում ունեն հարուստ փշատերև անտառները և ժամանակակից սառցադաշտերը:

Հիմնական լեռնագրական միավորներից է Ալյասկայի լեռնաշղթան, որի միջին բարձրությունը մոտ 3000 մ է: Այն կազմված է տարրեր հասակի՝ մինչքեմբրյանից մինչև չորրորդականի ապարներից: Հնագույն ապարներից հայտնի են գրանիտները, գաբրոդիորիտները, որոնց մերկացումների հետևանքով լեռները գարձել են սրագագաթ, իսկ լանջերը՝ բավականին զառիթափ և անմատչելի: Ինչպես հին, այնպես էլ ժամանակակից սառցադաշտերը լեռներին տվել են ալպյան բնույթ: Գնայած իր անմատչելի ուելիեֆին, այնուամենայնիվ, Ալյասկայի լեռներն զգալիորեն մասնատված են գետերի, հատկապես Ցուկոնի գտակ Տանանայի կողմից: Հենց այդ գետահովիտներն էլ հարմար ավտոխճուղային ու երկաթուղային ուղիներ են Ցուկոնի սարահարթից դեպի Ալյասկայի ծոց անցնելու համար: Ալյասկայի լեռների առանձին գագաթներ՝ Մակ Կինլին (6197 մ), որը ոչ միայն Ալյասկայի, այլև ամբողջ ցամաքի բարձր գագաթն է, Ֆարակերը (5181 մ) հասնում են 5000 մ և ավելի բարձրության: Ալյասկայի Կորդիլիերների ամենաբարձր լեռնաշղթան, նույնիսկ ամբողջ ցամաքում, իհարկե,

Սուրբ Եղիայի լեռներն են, որի մի քանի գագաթներ 5000 մետրից բարձր են, իսկ լոգան գագաթն ունի 6050 մ բարձրություն:




Լեռնային սառցադաշտ Մ. Եղիայի լեռներում:

Բարձր լեռնային լանդշաֆտը, ցածր ամառային ջերմաստիճանները և առատ խոնավությունը նպաստավոր պայմաններ են ստեղծել ինտենսիվ սառցապատման համար: Զմեռը ձյան շերտի հզորությունը հասնում է 1,5—2 մ.-ի: Ձյան գիծն ընկած է 400—600 մ բարձրության վրա: Նույնիսկ ամռանը լեռների գագաթներում ձյուն է գալիս. ամբողջ լեռնաշղթայի 9/10 մասը ծածկված է սառցաշերտերով: Սառցադաշտերը լեռներից իշնելով, միաձովվում են իրար՝ ստեղծելով ընդարձակ նախալեռնային սառցադաշտ: Ամենախոշոր սառցադաշտերից են Մալյասպինը (10 հազար քառ. կմ), որն իշնելով ծովափ, ստեղծում է նույնիսկ այսերգեր, Խաբարդը և այլն:

Վերջին 50—60 տարիների դիտումները ցույց են տվել, որ սառցադաշտերը նահանջում են՝ օվկիանոսի ափին թողնելով մեծ քանակությամբ մորեններ:

Սուրբ Եղիայի լեռներից հյուսիս-արևմուտք սկսվում են Չուգաչի լեռները, որոնք վերջանում են Կենայ լեռներով համանուն թերակղզում: Չուգաչի լեռները շատ բարձր չեն, սակայն սառ-

ցապատման շնորհիվ ունեն բարձր ալպյան լեռների տեսք: Այս
լեռները կազմված են պալեոզոյան և մեզոզոյան նստվածքային ու



Սառցադաշտ Ալյասկայի լեռներում:

մետամորֆիկ ապարներից. ծալքավորվել են մեզոզոյան՝ նեա-
դայի ծալքավորության ժամանակ, սակայն բարձրլեռնային ոելին-
ֆը ձեռավորվել է ալպյան ծալքավորության ժամանակ:

Ալյասկայի Կորդիլիերները ակտիվ սեյսմիկ շրջաններից
մեկն են համարվում: 1964 թ. մարտին տեղի ունեցած երկրաշար-
ժը հիմնովին ավերեց Ալյասկայի խոշոր Անկորիչ քաղաքը:

Կուկի ծոցից արևելք ընկած է միջլեռնային ճկվածքային գո-
տին, որը շարունակվում է ամբողջ Կորդիլիերների արևմուտքով:

ընդհուպ մինչեւ Մեքսիկական լեռնաշխարհի արևմուտքը: Ալյասկայի լեռնաշղթայի ծայր հարավ-արևելքում է գտնվում Վրանգելի հրաբխային զանգվածը, որտեղ մոտ 12 հրաբխային կոներ 3500 մետրից բարձր են: Վրանգելի լեռնային զանգվածը գոյացել է նեղենում, որտեղ կան նաև ժամանակակից մի շարք գործող հրաբուխներ:

Կլիման ծովային է, նման Ալեության կղզիներին, միայն տեղումների քանակն այստեղ 3000 մմ-ից ավելին է, իսկ ամառային միջին ջերմաստիճանները բարձր՝ $+12^{\circ}$: Միջլեռնային ճկվածքային գոտում, որտեղով ղեպի հարավ հոսում է Մատանուսկի գետը, կլիման համեմատաբար ցամաքային է, ձմեռը՝ ցուրտ, միջին հունվարյան -12° բարեխառնությամբ, ամառը՝ $+14$, $+15^{\circ}$, տեղումները մոտ 7—8 անգամ պակաս, քան մերձափնյա շրջանում: Նման կլիմայական պայմանները նպաստավոր են նույնիսկ գյուղատնտեսական կուլտուրաների մշակության համար: Այդ ճկվածքային գոտին Ալյասկայի կարտոֆիլի, վարսակի, ցորենի մշակության և անասնապահության կարեռը շրջանն է: Ալյասկայի լեռնային մարզի ամբողջ ծովափը ծածկված է փշատերև անտառներով: Անտառ առաջացնող հիմնական ծառատեսակն է սիխտինյան եղևնին, որը նպաստավոր պայմաններում հասնում է $50-60$ մ բարձրության, 3—4 մ հաստության, մյուսներից կարևոր են լեռնային հեմլոկը, կենսածառը և այլն:

Անտառները ծածկում են համարյա թե սառցադաշտերից ազատ բոլոր տարածքները, բացառությամբ լեռների զարիթափ լանջերի: Ալյասկայի ծովափնյա գոտին հայտնի է անտառասղոցարաններով և ցելուզոգի արդյունաբերությամբ: Մյուս բնական հարստություններից բնորոշ են ձկնային ուսուլքները, հատկանի թառափաղիները և ծովային այլ կենդանիներ:

Կանադական Կորդիլիերներ

Հյուսիսային Ամերիկայում Կանադական Կորդիլիերները ամենալեռնոտն են: Այստեղ ներքին սարահարթերի և սարավանդների գոտին ոմնի ավելի նեղ տարածում, քան Ալյասկայի կամ հարավում ԱՄՆ-ի Կորդիլիերյան երկրում: Երկրը, գտնվելով աշխարհագրական բարեխառն գոտում, աշքի է ընկնում սառը,

խոնավ կլիմայով, սառցադաշտային գգալի տարածմամբ, ան-տառային բուսականությամբ:

Կանադական Կորդիլիերների ռելիեֆը ձևավորվել է Կանադական վահանի հարևանությամբ, որի ներգործությամբ ապարներն ուժեղ դիսլոկացվել են՝ գոյացնելով խոշոր ծալքեր և վրաշարժեր, կոտրվածքներ, երկայնակի իշվածքներ, որոնք ձգվում են հարյուրավոր կիլոմետրեր: Այդ է պատճառը, որ երկրում հարթավայրերը շատ քիչ են: Վայրի ռելիեֆի ձևավորման գործում զգալի դեր են խաղացել հին պալեոզոյան, նույնիսկ մինչքեմբրյան հասակի ապարները, սակայն ծալքավորությունները տեղի են ունեցել յուրա-կավճի և կայնողոյան դարաշրջաններում:

Երկրի արևելքում տարածված են կարամյան ծալքավորության Մակենզիի և Ժայռոտ լեռները, որոնք ձգվում են դեպի Հարավ մինչև Ելուստոնյան ազգային պարկը: Ժայռոտ լեռներն արեվելքում ունեն մոտ 2000 կմ երկարություն և երկրաբանական տեսակետից աշքի են ընկնում միատարրությամբ:

Ներքին սարահարթերի և սարավանդների համակարգը ցայտում կերպով աշքի է ընկնում երկրի հարավում, որտեղ միոցենյան հրաբխային հզոր շերտախմբերը գոյացրել են Ֆրեյզերի սարավանդը: Ֆրեյզերից հյուսիս տարածված են միջեռնային ոչ մեծ սարավանդները և իշվածքները: Ներքին գոտին արևմուտքից եղրավորում են Առափնյա լեռները: Առափնյա լեռներն ունեն նեադայի ծալքավորություն և նույնպես հյուսիսից հարավ ձրգվածություն, ինչպես Ժայռոտ լեռները: Առափնյա լեռնաշղթան արևմուտքում ունի խիստ մասնատված զարիթափ լանջեր և օվկիանոս է թափանցում մի շարք թերակղիների ու հրվանդանների ձևով, որոնք իրարից բաժանված են ֆյորդերով:

Սայր արևմուտքում հյուսիսից հարավ ձգվում է Կղզային լեռնաշղթան, որն իր մեջ ընդգրկում է մի շարք կղզիներ՝ Վանկուվեր, Շառլոտա թագուհու և Ալեքսանդրի կղզիախումբը: Կըղզային լեռնաշղթան Առափնյա լեռնաշղթայից բաժանվում է մերձափնյա տեկտոնական իշվածքով:

Առատ տեղումները և ամառային ցածր ջերմաստիճանները նպաստավոր պայմաններ են ստեղծում Կանադական Կորդիլիերների սառցապատման համար: Սառցադաշտերն ավելի շատ տարածված են Առափնյա լեռնաշղթայում, որոնք առանձին լեզվակներով իջնում են մինչև նախալեռնային հարթությունները: Մա-

կայն ավելի մեծ տարածում են ունեցել պլեյստոցենյան սառցադաշտերը, որոնք հասել են մինչև օվկիանոս՝ գոյացնելով միշտը տրոգային հովհանքը: Նախկին տրոգներն այժմ խորզրյա ֆյորդեր են. այդ ափերը հիշեցնում են Սկանդինավյան թերակղզու արևմտյան ափերը:

Երկիրը հարուստ է օգտակար հանածոներով, որի մեծ մասը կապված է լեռներում ներարկված ինտրուզիաների և հնագույն կարծր ապարների մերկացումների հետ: Հիշատակության արժանի են պղնձի, երկաթի, կապարի, ցինկի, ոսկու և արծաթի հանքավայրերը, կան նաև քարածխի, գիպսի հարուստ պաշարները: Մեծ են հիդրոէներգապաշարները, հատկապես Խոշոր Կոլումբիա և Ֆրեյզեր գետերի մոտ, որոնց վրա կառուցված են միշտը խորշոր հիդրոէլեկտրակայաններ: Կանադական Կորդիլիերների մոտ $1/3$ -ը ծածկված է արդյունաբերական նշանակություն ունեցող անտառներով: Մերձափնյա ջրերը, ոչ մեծ լճային գոգավորություններն ու գետերը հարուստ են ձկներով:

Երկրի լեռնագրական առանձնահատկություններն իրենց կը նիքն են դնում կլիմայական պայմանների և հողաբուսական ծածկութիւն վրա: Նրա արևմուտքը, որտեղով անցնում է տաք ալեռության հոսանքը, բնորոշ է բարձր խոռնավությամբ և մեղմ կլիմայով: Տեղումների քանակը կղզային լեռնաշղթայում և Առափնյա լեռնաշղթայի արևմտահայաց լանջերում հասնում է 2000, իսկ որոշ հատվածներում՝ 6000 մմ-ի: Զմունը որոշ տեղերում ծյան շերտի հաստությունը հասնում է 6—8 մետրի: Բարձր է ամպամածությունը, մառախլապատությունը: Ամենացուրտ ամսվա միջին շերմությունը -4° -ից ցածր չէ: Ամառը զով է, միջին հուլիսյան ջերմաստիճանները կազմում են $+13$, $+15^{\circ}$: Առից հեռանալով կլիման դառնում է ցամաքային: Ներքին սարահարթերի ու սարավանդների շրջանում տարեկան միջին տեղումները 400 — 500 մմ են: Զմեռն այստեղ ծյունառատ է ու ցուրտ, իսկ ամառը՝ չոր և շոգ, որտեղ առանց արհեստական ոռոգման հողագործությամբ գրեթե հնարավոր չէ զբաղվել:

Երկրի արևելյան՝ ֆայոոտ լեռների շրջանում տեղումների քանակը որոշ շափով ավելանում է՝ պայմանավորված Ատլանտյան օվկիանոսի կողմից եկող խոնավ օդային զանգվածների, այն էլ հիմնականում ամռանը:

Կանադական Կորդիլիերների տարածքում անջատում են երեք մարզեր՝ Լարամյան, Ներքին և Առափնյա:

Լարամյան մարզ.— Սրա հյուսիսում գտնվում են Մակենզիի, իսկ դեպի հարավ՝ Ժայռոտ լեռները: Լեռնային այս գոտին բաժանվում է երկու լեռնաշղթաների՝ արևելյան՝ Առաջավոր և արևմտյան՝ Կասիրա-Օմինեկի ու Կոլումբիական: Արևմտյան ու Արևելյան լեռնաշղթաները միմյանցից բաժանվում են խոր, միջօրեականի ուղղությամբ ձգվող տեկտոնական հովտով: Արևմտյան շղթաները հիմնականում կազմված են բյուրեղային մետամորֆացված պրոտերոզոյան թերթաքարերից, գրանոդիորիտներից և մեզոզոյան կվարցիտային ինտրուզիվ ապարներից: Լարամյան մարզի արևմտյան լեռներն ունեն բավականին սրածայր գագաթներ, դառիթափ լանջեր: Միջին բարձրությունները կազմում են 2100—2300 մ, առանձին դեպքերում՝ 3000 մ: Այս լեռները 600—700 մ ձյան գծից բարձր են, որով և պայմանավորված է մեծ քանակությամբ ձնաբժերի ու սաղցադաշտերի առկայությունը: Զգալ տարածություն են գրավում դենուղացիոն հին հարթակները:


Լարամյան մարզի արևելյան թերթաքարերի մասին տարածքում շարունակվում են կյուսի, թիգ բեշտ, Մեղիսոն լեռներ անվամբ: Ի հակադրություն արևմտյան լեռների, արևելյան լեռները կազմված են պալեոզոյան հասակի նստվածքային ապարներից՝ թերթաքարերից, կրաքարերից և կվարցիտներից: Լեռներում մեծ տարածում են գտել վրաշարժերը, գեղունկտիվ դիսլոկացիաները, որոնք արդյունք են ավելի երիտասարդ էոցենյան և օլիգոցենյան ժամանակաշրջանների: Մակենզիի և հատկապես Առաջավոր լեռները բավականին դժվարամատչելի են. դրանք դեպի Մեծ հարթավայրերն իջնում են զառիթափ, իսկ դեպի արևմուտք՝ փոքրաթեք լանջերով: Առաջավոր լեռների բարձր գագաթը Ռոբսոնն է՝ 3954 մ բարձրությամբ:

Միջլեռնային խոր հովիտը (Կանադական ակոսը) ձգվում է հյուսիսից հարավ մոտ 1500 կմ, ունի մոտ 10—15 կմ լանուրություն և 1000—1500 մ խորություն: Հովտի գոյացման ընթացքին, բացի, տեկտոնական պրոցեսներից, նպաստել են նաև արտաքին ուժերը՝ սաղցադաշտերը և հատկապես գետային էրոզիան ներկայումս այդ իշխածքային գոտին գրաղեցրել են Կուտինի Կոլումբիա, Ֆրեյզեր և այլ գետերի վերին հոսանքները:

Հարամյան մարզի կլիման շափավոր խոնավ ու սառն է, Մակենզիի լեռներում ցուրտ, որի ստորոտներում հունվարի միջին ջերմաստիճաններն իջնում են -15 , -20° , հուլիսին՝ $+15$, $+20^{\circ}$: Ամբողջ մարզը, հատկապես արևմտահայաց լեռնալանջերը, ընկած են Խաղաղ օվկիանոսից եկող օդային դանգվածների ազդեցության տակ: Արևմտյան լանջերն ստանում են $1500-2000$, արևելյանը՝ $500-1000$, իսկ կենտրոնական հովտային շրջանները՝ 500 մմ տեղումներ:

Լեռնային բարձր մասերում տեղումների մեծ մասը բաժին է ընկնում ձմռանը, այդ պատճառով էլ գոյանում է $2-2,5$ մ ձյունածածկույթ: Առատ ձյունը պատճառ է դառնում ամռանը գետերի հորդացման, իսկ նվազագույն հոսքը բաժին է ընկնում ձրմանը: Առատ տեղումների հետևանքով բարձրություններում գոյանում են հովտային սառցադաշտեր, իսկ լեռնագագաթները համարյա թե լրիվ ծածկված են հզոր սառցադաշտերով:

Մարզի բուսական ծածկույթը կրում է անցողիկ՝ ցամաքային կլիմա ունեցող տայգայից (սե և սպիտակ եղենու, բանքսի սոճու, սպիտակ կեշու ծառատեսակներով) դեպի խոնավ ծովային փշատերեւ անտառներ: Լեռների բարձրադիր մասերը ծածկված են



Մինեանկա լիճը կանագական ժայռոտ լեռներում:

եղենու անտառներով, իսկ մնացած ծառատեսակներն զբաղեցնում են հովիտները։ Կոլումբիական լեռներում զգալի տարածում ունեն հսկա եղկինը, լեռնային սոճին, դուգասյան սոճին և այլ ավելի ջերմասեր ծառատեսակներ։ Արևելահայաց լեռնալանջերը ծածկված են ավելի չորսասեր սոճու անտառներով, որոնք բարձրանում են մինչև 1000—1800 մետրը։ Ավելի բարձր ընկած են հյուսիսում տունդրան, հարավում՝ ալպյան մարգագետինները Հողերը հիմնականում լեռնապողովային են։ Տարածված կենդանիներից են ձյունայժը, գորշ արջը, լեռնային կարիքուն, արջամուկը և այլն։

Ներքին մարզ.— Սարավանդային շրջան է՝ ընկած կարամյան լեռնային մարգից արևմուտք։ Մարզը ձևավորվել է խիստ մետամորֆացած մինչքեմբրյան և մեզոզոյան նստվածքային ու հրաբխային ապարներից, ծալքավորվել նևադայի (միջին, վերին յուրա) ժամանակ։ Միոցենում վայրը, տեկտոնական գծերով մասնատվելով, տեղիք է տվել անդեզիտաբազալտային լավաների արտավիժման, որոնք ծածկել են ընդարձակ տարածություններ, լցվել հովիտները։ Լավային հզոր ծածկոցների տակից բարձրանում են մի շարք լեռներ՝ բաժանելով հրաբխային սարավանդներն առանձին մասերի։ Այդպիսի լեռներից են Սկինա-Հեյզելտոնը, որի հյուսիսում է Ստիկին, հարավում՝ Նեշակո սարավանդը, իսկ ծայր հարավում՝ Ֆրեյզերի սարավանդը։

Ներքին սարավանդների մարզն ընկած է 700—1800 մ բարձրության վրա։ Փայտուտ լեռներից սկիզբ առնող մի շարք գետեր, հոսելով դեպի արևմուտք, ներքին մարզը մասնատել են 1000—1200 մ խորության կանիոններով։

Մարզի տարածքում ժամանակակից սառցադաշտեր չկան, սակայն պլեյստոցենյան սառցապատման հետքերը թարմ կերպով պահպանվում են։ Լավային շերտախմբերը ծածկված են մորենային և զանդրային նստվածքներով՝ տալով նրանց ալիքավոր տեսք։ Գետերի մեծ մասը հոսում են նախկին տրոգներով ու ոչ մեծ լը ճային գոգավորություններով (սառցադաշտային ծագման)։

Գտնվելով Առափնյա լեռնաշղթայի արևելյան ստվերոտ կողմում, ներքին սարավանդներն աշքի են ընկնում ցամաքային կրլիմայական պայմաններով։ Զմեռը ցուրտ է, սակավածյուն։ Ֆրեյզերի սարավանդում ձյուն լինում է միայն դեկտեմբեր, հունվար ամիսներին։ Ամառը տաք է, շոգ, սակայն գիշերը երբեմն նկատված է։

վում են նույնիսկ ցրտեր: Երկու կողմերից փակված լինելով բարձր լեռներով և թույլ ամպամածության հետևանքով ներքին սարավանդներն աշքի են ընկնում բարձր արևափայլի տևողությամբ՝ տարեկան 2000 ժամ, որը երկու անգամ բարձր է խաղաղօվկիանոսյան ափամերձ շրջանից: Չնայած գտնվում են նույն լայնության տակ, ինչ որ ժայռոտ լեռների տայգան է, այստեղ ամռան վերջին հասունանում են այնպիսի մրգեր, ինչպես ծիրանը, դեղձը և սեխը: Տաք ամսվա միջին ջերմաստիճանները հասնում են $+10$, $+22^{\circ}$, առավելագույնը՝ նույնիսկ $+35$, $+36^{\circ}$: Չմոռանք ամենացածրը եղել է -55° , իսկ հունվարյան միջինը ցածր է -10 , -12° -ից: Հովտային հատվածները տարեկան ստանում են մոտ 250 մմ տեղումներ, իսկ մնացած մասերը՝ 500—800 մմ:

Մարզն ընկած է երկու լանդշաֆտային՝ տայգային ու անտառատափաստանային զոնաներում: Հյուսիսում գտնվող Ստիկին սարավանդը ծածկված է սպիտակ եղևնու և սոճու խիտ անտառներով, իսկ գետնամերձ շերտում գերակշռող են մամուռներն ու քարաքոսները: Դեպի հարավ՝ նեշակո սարավանդի տարածքում էնգելմանի եղևնու և ալպյան եղևնինի անտառներն ավելի խոնավասեր են, որոնց երկրորդ յարուսում զգալի տարածում ունենք ապահովագություն:

Ֆրեյզերի սարավանդում հիմնական բուսական խմբավորումներն են նոսր անտառները, ուր մեծ տարածում ունեն նաև բարձրախոտերը՝ տիվարսակի, ցորենուկի, այլախոտի տեսակները: Հյուսիսի անտառների տակ տարածված են պողողային, գլեյապողողային և գորշ անտառային հողեր: Մայր հարավում տեղումների նվազման հետ հողերը դառնում են սկահողակերպ, իսկ հովիտներում՝ նույնիսկ բաց շագանակագույն, որոնց վրա աճում են շորասեր սև օշինդրը, սիղախոտը, հանդիպում են նույնիսկ կակտուսներ:

Ափամերձ մարզ.— Բնորոշ է հզոր լեռնային ռելիեֆով, մեղմ օվկիանոսային կլիմայով, խիտ փշատերև անտառներով և լեռնալանջերի վերին մասերում ընդարձակ սառցադաշտերի առկայությամբ: Տարածքի մեծ մասը կազմում է 3000—4000 մ բարձրության Ափամերձ լեռնաշղթան, որը կարեոր ջրբաժան է ներքին մարզի համար: Ափամերձ լեռնաշղթան լեռնազանգվածների մի շարան է հյուսիսից հարավ, որոնց միավորում է մի ընդհանուր հիմք: Տարվա մեծ մասը ծածկված է ձյունով, կան մի շարք

սառցադաշտեր, որոնք իջնելով հասնում են նույնիսկ ծովափի Սովագում շատ են տպօգները և ֆյորդերը։ Մայր արևմուտքում տարածված է Կղզային լեռնաշղթան, որը հյուսիսում ընդգրկում է մի շարք կղզիներ՝ Ալեքսանդրի կղզիախումբը (արշիպելագ), գեղի հարավ անցնելով Շառլոտա թագուհու և Վանկովեր խոշոր կղզիներին։

Առափնյա և Կղզային լեռնաշղթաներն ունեն տարրեր երկրաբանական կառուցվածքներ։ Առափնյա լեռնաշղթան իրենից ներկայացնում է էրոզիոն մասնատված նեադայի հասակի գրանիտային $3000-4000$ մ բարձրության հասնող մի հսկա բաթոլիտ, իսկ Կղզային լեռնաշղթան՝ ավելի ցածր՝ $2000-2200$ մ.-ի հասնող պալեոզոյան մետամորֆիկ և պալեոգենի հրաբխածին ապարներից կազմված ալպյան հասակի լեռներ են։ Առափնյա և Կղզային լեռնաշղթաներն իրարից բաժանված են նեղուցների և ծոցերի հյուսիսից հարավ իրար հաջորդող, մի խոշոր գրաբենային իշմածքով։

Խաղաղօվկիանոսյան տաք ջրերը, ողողելով Ափամերձ և Կրդղային լեռնաշղթաների արևմտյան ափերը, այն դարձնում են ձմեռը մեղմ և խոնավ, որտեղ միջին հունվարյան ջերմաստիճանները հասնում են $0+3^{\circ}$: Լեռներում ձմեռն առատ ձյուն է գալիս, որի հզորությունը ստորոտներում հասնում է մեկ մետրի, իսկ գագաթներում՝ $2-2,5$ մետրի։ Ափամերձ լեռնաշղթայի արևմտյան զառիթափ լանջերում հաճախ կարելի է նկատել կործանիլ ձնահյուսեր, որոնք գարնանը մեծ վնաս են պատճառում անտառներին։ Տեղումներով հարուստ շրջանը համընկնում է հոկտեմբեր-մարտ ամիսներին։ Միջին տարեկան տեղումները $2000-3000$ մմ են, իսկ Առափնյա լեռնաշղթայի արևմտյան լանջերն ստանում են մոտ 6000 մմ տեղումներ։ Տաք ամսվա միջին ջերմաստիճանները $+14, +15^{\circ}$ -ից բարձր չեն, որը բացատրվում է բարձր ամպամածությամբ և դրա հետ կապված ցածր ուաղիացիայի գործունությունով։

Տարեկան ոչ մեծ ջերմային տատանումները, սառնամանիքների բացակայությունը և առատ խոնավությունը նպաստում են փշատերև խիտ անտառների գոյացմանը։ Անտառագոյացնող հիմնական ծառատեսակներից են կարմիր մայրին, արևմտյան հեմչոկը, սիխտինյան եղևնին, որոնք հասնում են $40-50$ մ բարձ-

րության, 1—1,5 մ հաստության: Բոլոր ծառատեսակներն ունեն արդյունաբերական նշանակություն:

Վանկուվեր կղզու հարավարևմտյան շրջանում, որտեղ գրտնըվում են ջորջիայի նեղուցն ու ծոցը, կլիման ավելի տաք է ու չոր, դրա համար փշատերևների հետ հանդես են գալիս լայնատերևն սպիտակ կաղնու և միջերկրածովյան շրջաններին բնորոշ մորու ծառատեսակները:

Կանադական Կորդիլիերները մի շարք բնական հարստություններով կարևոր տեղ են գրավում Հյուսիսային Ամերիկայում: Առաջնյա և ժայռոտ լեռները հարուստ են բազմամետաղներով, պղնձով, ոսկով, Վանկուվեր կղզին՝ քարածխով, արծաթով, երկաթով, սնդիկով, գիպսով և այլն: Սակայն երկիրը մյուսներից շատ աչքի է ընկնում անտառային ու ջրային ռեսուրսներով: Գյուղատնտեսական ցանքերը քիչ տեղ են գրավում, այն էլ հիմնականում գետահովիտներում: Ջրերը հարուստ են թառափազգի ձկնատեսակներով և ծովային այլ կենդանիներով:

ԱՄՆ-ի Կորդիլիերներ

Ոչ մի երկրում չկա բնական պայմանների այնպիսի բազմազնություն, ինչպես ԱՄՆ-ի Կորդիլիերներում: Այստեղ բարձր ծյունապատ լեռների հարևանությամբ հանդես են գալիս ընդարձակ սարահարթերն ու սարավանդները, խիտ, խոնավ անտառներն ու անապատները, հորդառատ գետերն ու մշտական հոսքից զուրկ տարածքները: Հյուսիսարևմտյան ծովափում թափվում են մոտ 2000 մմ, իսկ հարավ-արևելքում՝ 100 մմ տեղումներ: Միեռանեազա և մյուս բարձր լեռնաշղթաներում ամառային ջերմաստիճանները 0° -ից ցածր են, իսկ ընդամենը 100 կմ հեռավորության վրա Մահվան հովտում դիտվել է արևմտյան կիսագնդի ամենաբարձր ջերմաստիճանը՝ $+57^{\circ}$:

Այդպիսի մեծ հակադրությունները բացատրվում են մի կողմից՝ բարդ երկրաբանական կառուցվածքով ու նրա հետ կապված բազմազան ռելիէֆի ձևերով, մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ նրա տարածքը գանվում է երկու՝ բարեխառն և մերձարևադարձային կլիմայական գոտիներում:

Կանադական Կորդիլիերների հետ համեմատած լեռնային այս երկիրն արևմուտքից արևելք մեծ ձգվածություն ունի և ընդ-

գրկում է ինչպես երիտասարդ ծալքավոր, այնպես էլ հին, սակայն երիտասարդացված կառուցցներն ու նույնիսկ պլատֆորմի առանձին մասերը: Պալեոգեն-նեոգենում վայրն ակտիվ բարձրացում է ապրել՝ ուղեկցվելով վարնետներով. ենթարկվել է էրոզիոն ու գեղունացիոն ուժեղ մասնատման ու տեղատարման:

Երկրի արևելյան՝ Փայուսություն լեռնային գոտին անընդհատ շրջան չի կազմում, ելուսթոնյան ազգային պարկից հարավ այն վերածվում է առանձին լեռնազանգվածների, որոնց միջև տարածվում են ընդարձակ սարավանդաձև հարթավայրեր և գրաքենային հովիտներ: Մի շարք լեռնաշղթաներ ճգվում են ոչ թե հյուսիսից հարավ, այլ՝ արևելքից արևմուտք:

Ներքին սարահարթներն ու սարավանդները խիտ ցամաքային կլիմայի պատճառով ունեն աննպատային ու տափաստանային լանջափուտ: Հյուսիտում է լավաներով ծածկված Կոլումբիայի սարավանդը, կենտրոնում՝ դենուդացիոն ուղիեփ ունեցող Մեծ Ավազան սարահարթը, իսկ հարավում՝ Կոլորադոյի սարավանդը կենտրոնական այս գոտին արևմուտքից եզրավորված է Կասկադյան և Սիեռա Նևադայի լեռներով, որոնք փոքրաթեք լանջերով արևմուտքում իշնում են Ուիլամետ գետի և հարավում Կալիֆորնիայի հովիտները: Մայր արևմտյան ծովափով է ծրագում ոչ բարձր Ափամերձ լեռնաշղթան:

Ի տարբերություն Կանադական Կորդիլիերների, ԱՄՆ-ի Կորդիլիերների ուղիեփում պլեյստոցենյան սառցապատումները կարևոր դեր չեն կատարել, բացառությամբ բարձր լեռնագագաթների և մասամբ Կոլումբիայի սարավանդի, որտեղ նկատվում են սառցագաշտային ուղիեփի մի շարք հնագույն ձևեր:

Երկրի մեծ մասը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում, դեպի հարավ այն դառնում է շոգ ու չոր: Հյուսիսարևմտյան ափամերձ շրջաններն ստանում են մոտ 2000 մմ տեղումներ, հարավ-արևմուտքը՝ կոս Անջելեսը՝ 300—400 մմ, այն էլ հիմնականում ձմռանը: Ավելի շատ խոնավություն ստանում են արևմտյան բարձր լեռները, որոնք էլ սահմանափակում են խոնավության մուտքը դեպի ներքին սարահարթեր: Սիեռա Նևադայի արևմտյան լանջերին տարեկան թափվում են մոտ 1000 մմ տեղումներ, այն էլ հիմնականում ձմռանը, որտեղ ձյան շերտի հաստությունը տեղ-տեղ հասնում է 8—10 մ-ի՝ մեծ վնաս պատճառելով անտառներին: Մերձափնյա շրջաններում հովիսի միջին

շերմաստիճանը $+20^{\circ}$ է, հունվարինը՝ $+10^{\circ}$: Շոգ է Կալիֆոռնիայի հովիտը, որտեղ հուկիսյան ջերմաստիճանները $+27$, $+28^{\circ}$ են, հարավում նույնիսկ՝ $+35^{\circ}$: Ներքին սարահարթերն ու սարավանդները ստանում են $200-250$ մմ տեղումներ և աշքի են ընկնում շոր ու շոգ ամառներով և համեմատաբար ցուրտ ձմեռներով:

Ժայռոտ լեռների արևելահայաց լանջերն ստանում են $700-800$ մմ տեղումներ, իսկ արևմտահայաց լանջերը՝ $300-400$ մմ: Լեռների հյուսիսում հունվարին նկատվում է -20° , իսկ հուկիսին՝ $+20^{\circ}$ ջերմություն: Ժայռոտ լեռների կլիմայի ցամաքայնության չորրհիվ հավերժական ձյան գիծը նրա հյուսիսում ընկած է 3000 , իսկ հարավում՝ 4000 մ բարձրության վրա:

Գետային ցանցը լավ է զարգացած ժայռոտ լեռների շրջանում, որտեղ գոյացած հորդ ջրհոսքերը դեպի արևմուտք իջնելով Մեծ Ավազան սարահարթ, անհետանում են մեծապես տարածված հողմահարման փուխր նստվածքների մեջ: Հոսքի շերտի բարձրությունը Սիեռա Նևադայի և Կասկադյան լեռների արևմտյան լանջերում կազմում է 600 մմ, ժայռոտ լեռներում՝ $200-400$ մմ, իսկ ներքին սարահարթերում ու սարավանդներում՝ միայն $20-30$ մմ:

Զնայած կլիմայի ցամաքայնության, ԱՄՆ-ի Կորդիլիերներ երկիրն աշքի է ընկնում գյուղատնտեսական կուլտուրաների, հատկապես ոռոգվող հողերում բամբակի, հացահատիկի ու բանջարաբուտանային կուլտուրաների մշակությամբ: Սակայն երկրի բնական ռեսուրսների մեջ կարևոր տեղ են գրավում օգտակար հանածոները, հատկապես գունավոր մետաղները՝ պղինձը, բազմամետաղները, ուրանը, մոլիբդենը, ոսկին, արծաթը, քիմիական հումքի տեսակներից՝ ֆուֆորիտը, կալիումական, կերակրի, գրանուրերան աղերը: Հայտնի են նաև քարածխի ու նավթի մի շարք հանքավայրեր:

Ներքին շրջաններն ու բարձր լեռները ԱՄՆ-ի արոտային անասնապահության կարևոր վայրերն են:

ԱՄՆ-ի Կորդիլիերները բաժանվում են հետեւյալ խոշոր բնական մարզերի՝ ժայռոտ լեռների, ներքին սարահարթերի ու սարավանդների (Կոլումբիայի և Սնեյքի, Մեծ Ավազան, Կոլորադոյի), Արևմտյան լեռնայինի:

Ժայռոտ լեռներ.— Ելուսթոնյան ազգային պարկի մոտ լեռները գեռ պահպանում են այն բնդհանուր գծերը, որոնք յուրա-

Հատուկ էին Կանադական Ժայռոտ լեռներին՝ բարձրադիր ուղիեցի գլացիալ ձևեր, խիտ տայգա: Սակայն դեպի հարավ լանդշաֆտն արագ փոխվում է, անհետանում են ուղիեցի գլացիալ ձևերը, կլիմայի շորովթյան հետ անտառներն իրենց տեղը զիջում են լեռնալանջերում տափաստանային, իսկ ստորոտներում՝ կիսաանպատային բուսականությանը:

Ժայռոտ լեռները մի անտիկլինալային շղթա է, որի հիմք կազմում են մինչքեմբրյան բյուրեղային ապարները, իսկ վերին շերտը կազմում են պալեոզոյան և ավելի երիտասարդ նստվածքային ապարները: Առանցքային մասում բյուրեղային հիմքը մերկանում է, իսկ եզրերում երիտասարդ շերտախմբերը մոնոկլինալ ծալքերի ձևով բարձրացել են՝ ստեղծելով ոչ բարձր լեռներ: Այսպիսով, լեռնաշղթան կարծես թե կազմված է մի շաք ծալքավորված շղթաներից, մեկը բարձր առանցքային մասում և մի քանիսն ավելի ցածր՝ եզրերում: Վերին գոտուն բնորոշ է երկու մակարդակ: Գագաթների մեծ մասը ընկած են 3500—3950 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրերը՝ 4200—4350 մետրի էլեվերտ լեռն ունի 4399 մ բարձրություն: Ժայռոտ լեռները գոյացել են վերին կավճում և ստորին պալեոգենում՝ պալեոցենում, և եղել են ավելի բարձր, քան հիմա: Էցցենի տաք կլիմայական պայմանների հետևանքով լեռները ենթարկվել են պենեպլենացման, իսկ օլիգոցենում նորից բարձրացել են ու հարթվել, սակայն առանձին բյուրեղային գագաթներ պահպանել են նախկին բարձրությունները: Նեղենի նոր բարձրացումների հետևանքով վայրը ձեռք է բերել երկշար աստիճանային տեսք: Բարձրացումների շնորհիվ հողմահարված նյութերը լցվել են միջլեռնային գոգավորությունները, երբեմն էլ ծածկել ոչ բարձր լեռնաբազուկները՝ առաջացնելով սարավանդածե ընդարձակ հարթություններ: Զգալի տեղ են գրավում հրաբխային գոյացությունները, որոնք հանդես են գալիս ինտրուզիաների, լակոլիտների, ինչպես նաև արտավիժումների ձևով՝ ստեղծելով Ելուսթոնյան լավային սարավանդը:

Ելուսթոնյան ազգային պարկն ընկած է 2100—2500 մ բարձրության վրա գտնվող համանման հրաբխային սարավանդում: Այն հիմնադրվել է 1872 թ.: Նրա տարածությունը մոտ 9000 կմ² է: Ազգային պարկի տարածքում կան մոտ 3000 գեղեցիկ ներ, ցեխային հրաբուխներ, լճեր:

Գեյզերների մի մասը գործում են մի քանի տարին մեկ անգամ, մյուսները՝ օրական տասնյակ անգամ: «Գիգանտ» գեյզերը գործում է երեք օրը մեկ, որի արտավիժման ժամանակ ջրի սյան բարձրությունը հասնում է 91 մետրի: Բոլոր գեյզերները միասին վեցրած օրական արտավիժում են 8000 մ³ ջուր:

Ելուստիոնյան ազգային պարկը արգելավայր է, որտեղ բը-նական լանդշաֆտը լավ է պահպանվում: Դա հազարավոր զբու-սաշրջիկների գեղեցիկ ժամանցի վայր է:

Լեռները մասնատված են գետահովտներով, որոնք մեծ մասմբ սկիզբ են առնում առանցքային լեռնաշղթայի լանջերից: Արևմտյան լանջերից են սկիզբ առնում Կոլորադոն, Ռիո Գրանդեն, Սնեյքը, արևելյան լանջերից՝ Արկանզասը, Հյուսիսային և Հարավային Պլաթները, Միսսուրին: Գետերը մեծ մասամբ ունեն անտեցիդենտ հովիտներ, հին են, քան ժամանակակից ունիելիքը:

Ժայռոտ լեռների կլիման ցամաքային է: Լեռների ստորոտ-ներում ձմեռը ցուրտ է, ամառը՝ խիստ շոգ: Հյուսիսում հոմ-վարյան միջին ջերմաստիճանները կազմում են -10 , -12° , բա-ցարձակ նվազագույնը՝ -38° : Ամենուրեք նկատվում են ջերմաս-տիճանային ինվերսիոն երևույթներ: Ամառը արևոտ է և շոր, մի-ջին հովիսյան ջերմաստիճանները 1500 մ բարձրության վրա կազ-մում են $+20$, $+22^{\circ}$, առավելագույնը հաճախ հասնում է $+38$, $+43^{\circ}$ -ի: Ամենից քիչ տեղումներ ստանում են միջլեռնային գո-գավորությունները (150 մմ) և ծածկված են մեծ մասամբ կիսա-անապատային բուսականությամբ: Ժայռոտ լեռների հարավային մասերում ձմեռը ջերմաստիճանը 0° -ից բարձր է, այդ պատճա-ռով էլ տարածված են մերձարեադարձային բուսական խմբավո-րումները: Արևմտյան լանջերը ծածկված են անտառներով: Ստո-րին գոտում երևան են գալիս 3—4 մ բարձրության գիհու ցածր անտառները, որոնք հասնում են մինչև 1300 մ բարձրությունները: 1300—2000 մ բարձրությունները ծածկված են սոճու նոսր ան-տառներով, որոնց տակ տարածված են տափաստանային խոտա-տեսակները, այդ պատճառով էլ հողերը սեահողակերպ են: 2000 մ.-ից բարձր մթնոլորտային տեղումների ավելացման հետ (600 մմ) նոսր, լուսաեր անտառները փոխվում են մութ անտառների, որոնց կարեոր ծառատեսակներից են դուգլասյան եղեինը, ոլո-րապտույտ սոճին, էնգելմանի եղենին: Անտառի վերին սահմանը հասնում է 2800—3000 մ-ի, որից հետո սկսվում է ալպյան գո-

տին՝ ծածկված բոշխերի, գորտնուկների, անմոռուկների, կաքավախոտերի և այլախոտերի տեսակներով:

Անտառները հարուստ են կենդանիներով, հայտնի են սպիտակապոչ եղջերուն, կանադական եղջերուն, ամերիկյան որմզդեղջը, գիշատիչներից՝ պուման, գորշ արջը, սև արջը, լեռնային լուսանը: Լեռների բարձրադիր քարքարոտ հատվածներում հանդիպում են ձյունայծը, հաստեղջուր ոչխարը, սկյուռներ, նապատակներ և թոշունների մի շարք տեսակներ: Ելուսթոնյան ագգային պարկում պահպանվում են բիզոններ:

Ներքին սարահարթեր և սարավանդներ.— Հյուսիսում է գրտնը վում Կոլումբիա-Սնեյկի հրաբխային սարավանդը, որն զբաղեցնում է մոտ 500 հազ քառ կմ մակերես: Այն ունի 700—1000 մ բարձրություն: Հիմքում ընկած են պալեոզոյան և մեզոզոյան կարծր նստվածքային շերտախմբեր, որի վրա տարածվել են միոցեն-պլիոցենի բազալտային մոտ 1500 մ հզորության լավաները: Միայն Կապույտ լեռներն են, որ լավաների տակից բարձրանում են որպես հին ոելիեֆի վկաներ: Լավային արտավիժումները եղել են մի քանի փուլերով. այդ մասին են վկայում 12—20 լավային շերտերը, որոնք երբեմն ընդմիջվում են տասնյակ և նույնիսկ հարյուրավոր մետրի հասնող լճային նստվածքներով: Վերջին ժայթքումները տեղի են ունեցել ստորին շորրորդականում: Ներկայումս գործող հրաբուխներ չկան, սակայն վայրում նկատվում են տեկտոնական ակտիվ շարժումներ:


Կոլումբիա-Սնեյկի սարավանդն աշքի է ընկնում էրոզիոն մասնատվածությամբ: Սնեյկ գետը, սկիզբ առնելով ժայռություններից, սարավանդի տարածքի լավաներում առաջացնում է 1500 մ խորության կանիոն: Կոլումբիան Կորդիլիերների ամենաջրառատ գետն է, որը նույնպես լավային ծածկույթում գոյացնում է 600—1000 մ խորության կանիոն: Սարավանդի հյուսիսում, դեպի հարավ մեծ տարածում ունեն չոր, բավականին խոր գետահովտները, որոնք գործել են շորրորդական սառցադաշտերի բռւռն հալքի ժամանակ: Դրանցից է, օրինակ, Դրանդ-կուլի կանիոնը, որն ունի 270 մ խորություն և մի քանի տասնյակ այլ չոր հովիտներ: Լավային այս սարավանդի միայն հյուսիսում կան սառցադաշտային մորեններ, իսկ հարավում հրաբխային ապարները լրիկ մերկանում են: Երիտասարդ հրաբուխները տարածված են սա-

րավանդի արևելյան մասում, լավ պահպանված կոներով և խողոք խառնարաններով:

Կոլումբիա-Սնեյկի սարավանդը, գտնվելով Առափնյա լեռնաշղթաների արևելյան հողմագերծ կողմում, ստանում է 250—300 մմ տեղումներ և ժամկված է չոր տափաստանային բուսականությամբ, միայն արևելյան, ժայռոտ լեռների մոտ գտնվող հատվածներն են, որ ստանում են 600 մմ տեղումներ և ունեն անտառատափաստանային բուսականություն: Հողերը շագանակագույն են և աշքի են ընկնում բարձր հերկվածությամբ: Կոլումբիա-Սնեյկ գետերի ու դրանց վտակների ջրերը օգտագործվում են ցանքատարածությունները ոռոգելու համար: Բացի այդ, գետերը, հատկապես Կոլումբիան, աշքի են ընկնում էներգապաշարներով: Կոլումբիայի վրա կառուցված են ջոն Դեյ, Գրանդ-կուլի, Զիֆ ջողեֆ և այլ հիդրոէլեկտրակայաններ: Ամբողջ կասկադի հզորությունը կազմում է 10 միլ կվտ:

Կոլումբիական սարավանդից հարավ նրա շարունակությունն է կազմում Մեծ Ավազան սարահարթը, որը Հյուսիսային Ամերիկայի ամենաընդարձակ անապատային շրջանն է: Մեծ Ավազան սարահարթն աշքի է ընկնում խիստ ցամաքային կլիմայով, թույլ ջրագրական ցանցով, աղքատ բուսական ու կենդանական աշխարհով: Սարահարթի տարածքից գետերը հողմահարված նյութերը դուրս չեն բերում: Բեկորային նյութը կուտակվում է նախալեռներում և կամաց-կամաց իր տակ թաղում լեռնային ոեթեքը: Ամբողջությամբ բեկորային նստվածքներն ավելի մեծ տարածք են գրավում, քան լեռները, որոնք հանդես են գալիս որպես առանձին «կղզիներ»: Մեծ Ավազան սարահարթն առաջցել է Լարամյան ծալքավորության ժամանակ և արդեն նեղովենի վերջում իրենից ներկայացնում էր մի պենեպլեն: Չորրորդականում տեկտոնական շարժումներն առաջ են բերել մի շարք վրաշարժեր, որոնք հենց ժամանակակից ուելիեֆի տարածված ձևերից են: Նորագույն տեկտոնական շարժումներից գոյացած ճեղքերից արտավիժել են լավաներ, որոնք ավելի մեծ հզորություն ունեն սարահարթի հյուսիսում: Սարահարթն ունի 1500—2000 մ բարձրություն, սակայն նրա տարածքում զգալի տեղ են գրավում վարնետային իջվածքները, որոնցից հիշատակության արժանի է Մահվան հովիտը (—85 մ): Առանձին լեռներ սարա-

Հարթի վրա բարձրանում են 2500—3500 մ: Ամենաբարձր լեռ
Ուկիլեր Պիկն է (3980 մ),



Մնացորդային բազալտային սյուն Վոյոմինդ գետի ավազանում:

Մեծ Ավազան սարահարթը պլեյստոցենում ունեցել է խոնավ կլիմայական պայմաններ, խիտ ջրագրական ցանց (ներկայում միակ խոշոր գետը Հումբոլդտն է), մոտ 100-ից ավելի լճային գոգավորություններ, որոնցից հիշատակության արժանի են Բոնվիլ և Լահոնտան քաղցրահամ խոշոր լճերը: Այժմ դրանց տեղը պահպանվում է Մեծ աղի լիճը, որի մակերեսը 2500—6000 հա կմ է, միջին խորությունը՝ 4,5—7,5 մետր, առավելագույնը՝ 15

լետը, աղիությունը՝ 137—300 %, հիմնականում կերակրի և պառակերյան աղեր են: Լճով է ծածկված եղել նաև Մահվան հով-



Դյունային ավազուտներ Մահվան հովտում:

տի հատակը: Ամբողջ սարահարթը ծածկված է եղել փարթամ բուսականությամբ, տարածված կենդանիներից էին մամոնտը, վայրի ձին, մի շարք կապիկներ, որոնք հավանաբար անհետացել են 9000—10000 տարի առաջ:

Մեծ Ավազան սարահարթի կլիման խիստ ցամաքային է. միջին տարեկան տեղումները կազմում են 100—250 մմ, որոնց մեջ մասը թափվում են ձմռանը: Ամառը շոգ է, իսկ ձմեռը համեմատաբար ցուրտ՝ 0° -ին մոտ, սակայն երբեմն օդի ջերմաստիճանը իջնում է -15 , -20° , նույնիսկ՝ -30 , -35° : Հյուսիսային լանության 37° -ից հարավ միջին հունվարյան ջերմաստիճանը $+5^{\circ}$ -ից ցածր չէ: Ամառը նկատվում է $+25$, $+26^{\circ}$:

Բույսերի վեգետացիայի համար հարմար սեզոնը գարունն է, երբ սառնամանիքները վերանում են, իսկ ամառվա շոգը դեռ չնկատվում: Սարահարթի հյուսիսում տարածված են անապատային և կիսաանապատային բուսատեսակները, իսկ հարավում՝ տուկուենտները, օշինդրը, մոխրաթելուկները և ակացիայի թթվուտները: Հարավային մասի լեռնային շրջաններում տեղումներն զգալիորեն ավելանում են, որտեղ լանդշաֆտը դառնում է


շոր տափաստանային՝ ծածկված մերձարևադարձային թփային ու նոսր անտառային բուսական տեսակներով։ Լճային գոգավորությունները եզրավորված են աղուտային մի շարք բուսատեսակներով։ Հարավային անապատային հատվածներում տարածված են կակտուսները, ագավանները, յուկին և այլ թփուտներ։

Սարահարթի տարածքի լեռները լանդշաֆտային տեսակետից նման են Ժայռոտ լեռներին, միայն այն տարբերությամբ, որ կիմայի ցամաքայնության պատճառով այստեղ ուղղաձիգ գոտիները մի քիչ ավելի բարձր են, քան Ժայռոտ լեռներում։

Մեծ Ավազան սարահարթը պիտանի հողահանդակներ քիչ ունի, հիմնականում մշակում են կերային կուլտուրաներ, այն արոտային անասնապահության, հատկապես ոչխարաբուծության կարևոր շրջան է։

Կենդանական աշխարհը ներկայացնում են կրծողներն ու սղունները։ Գիշատիչներից տարածված են կարմիր լուսանը, գորշուկը։

ԱՄՆ-ի Կորդիլիերների հարավում է Կոլորադոյի սարավանդը, որն ունի 1500—1800, տեղ-տեղ նույնիսկ 2000—2500 մ բարձրություն։ Սարավանդի հիմքում ընկած են մինչքեմբրյան մետա-



Մնացորդային ժայռաբեկոր Կոլորադոյի սարավանդում։

Խորֆիկ բյուրեղացված ապարները, որոնց վրա հորիզոնական կերպով տեղադրված են ստորին պալեոզոյից մինչև շորրորդականի հասակի նստվածքային շերտախմբերը։ Նեղենում սարա-



Կռլորադոյի Մեծ կանիոնը

վանդը ենթարկվել է կոտրտվածքների; որոնք ուղեկցվել են հըրաբիսային արտավիճումներով և գոյացրել 150—250 մ բարձրության հրաբիսային կոներ։ Ամբողջությամբ վերցրած կռլորադոյի սարավանդը Հյուսիսամերիկյան պլատֆորմի մի մասն է, որը նրանից անջատվել է Լարամյան ծալքավորության ժամանակ։ Սարավանդի ուղղաձիգ բարձրացումը տեղի է ունեցել դան-

դաղ, որի հետևանքով գետերը, պահպանելով իրենց նախնական ուղղությունները, խորացրել են հովիտները՝ առաջացնելով կանիոններ։ Նշանավոր է Կոլորադոյի Մեծ կանիոնը։ Այն գտնվում է Արկանա նահանգում (ԱՄՆ), Կոլորադո գետի միջին հոսանքում։ Մեծ կանիոնի լայնությունը՝ սարավանդի մակերեսութիւն 8—25 կմ է, խորությունը՝ 1800 մ, երկարությունը՝ մոտ 800 կմ։ Գետի հունի լայնությունը 90—100 մետր է։ Կոլորադոյի վրա կառուցված է թուողերդամի ջրամբարը և համանուն հէկը։ Գետը հորդառատ է լինում հատկապես ամռանը, երբ վէրին հուանքների շրջանում ձյունը հալվում է։ Գետի հովիտը մի երկրաբանական թանգարան է, որի զարդիթափ, մերկացած լանջերում կարելի է տեսնել մեր մոլորակի էվոլյուցիան՝ սկսած արխելից մինչև կարուն։

Գետի հոմը միխրճված է գորշագույն բյուրեղային թերթաքարերի, գրանիտների ու գնեյսների մեջ, որոնք ծածկված են կարմիր ավազաքարերով, թերթաքարերով և լավաներով։ Հետո լվացվող ապարների տարածման շրջանում Մեծ կանիոնի լանջերը փոքրաթեք են, իսկ կարծր կրաքարերի տարածման շրջաններում գոյացել են կախված լանջեր։ Մեծ կանիոնը իր հրաշալի բնությամբ դեպի իրեն է գրավում բազմաթիվ զրոսաշրջիկների։

Սարավանդի տարածքով հոսող բոլոր գետերին յուղահատուկ են կանիոնները, որոնք մեծ դժվարություններ են ստեղծուած երկաթուղիների և ավտոխճուղիների կառուցման գործում։ Սարավանդի ցածրադիր՝ մինչև 150 մ բարձրությունները ծածկված են անապատներով, որտեղ զգալի են բուսագույրի տարածքները։ Ավազաթմբերի վրա աճում են «անապատային թեյաբույսեր», «հընդկական բրինձը» և թփային յուկին, գիհին, սոճին։ Զգալի տարածություններ են զբաղեցնում ֆիդիկական հողմահարության նյութերը։ Ավելի բարձր հատվածները ծածկված են բիզոնախոտի, ակացիայի, սոճու ցածր թփուտներով։ իսկ ցածր հովտային շըրշաններում երբեմն հանդիպում են կակտուսներ։

Արևմտյան լեռնային մարգ.— Ընդգրկում է Կասկադյան, Միեռա ներադա, Առափնյա լեռնաշղթաները և դրանց բաժանող հովիտները։ Այս մարզի ձևավորման գործում մեծ դեր են խաղացել երիտասարդ տեկտոնական շարժումները։

Առափնյա լեռնաշղթաները գոյացել են պալեոգեն-նեոգեն-յան և նույնիսկ ստորին շորորդական հասակի ապարներից, ու

րոնք գոյացրել են բավականին զառիկող ժալքեր, սրածայր լեռնագագաթներ: Կալիֆոռնիայի հովտի հիմքը բավականին արագ կերպով իջել է, որին մի շարք հետազոտողներ անվանում են Էսունիսկ երիտասարդ գեոսինկլինալային ավազան: Կասկադյան և մասամբ Սիեռա Նևադայի շրջաններում պահպանվում են ունիթի հին և ժամանակակից հրաբխային ձևերը:



Խառնարանային լիճ Կասկադյան լեռներում:

Կասկադյան լեռների հիմքում ընկած են բյուրեղային ապարները և Նևադայի հասակի ինտրուզիաները, որոնք ծածկված են պալեոգեն-նեոգենի հզոր լավային շերտախմբերով: Լեռների գագաթներում, անտառային սահմանից վեր բարձրանում են մոտ 120 հրաբխային կոններ: Մի շարք հրաբխային կոններ ունեն 3000—4400 մ բարձրություն, դրանցից են՝ Բեյքեր (3285), Ռեյնիր (4392), Հուդ (3427), Շասթա (4317), Լասեն Պիկ (3187) և այլն: Այդ հրաբուխներից մի քանիսը գործում են նաև մեր օրերում: Հրաբխային կոնների գագաթները ծածկված են սառցադաշտերով, որոնք երբեմն առանձին լեզվակներով իջնում են մինչև ստորոտները: Խոշոր սառցադաշտ կա Ռեյնիր հրաբխի վրա, որը գրավում է 140 քառ կմ տարածք:

Հասեն Պիկ գագաթից հարավ Կասկաղյան լեռներն անցնում են Սիեռա Նևադային: Սիեռա Նևադան մի հորստային բարձրացում է, որը մեծ ուժգնության է հասել նեղենում: Լեռները հիմնականում կազմված են գրանոդիորիտային կարծր ապարներից, այդ պատճառով էլ բարձր են և հեշտությամբ չեն դնուդացվում: Մոտ 11 գագաթներ բարձր են 4200 մետրից, իսկ Ուփենին 4418 մ է: Սիեռա Նևադայի վրա պահպանվում են մի շարք հավերժական ձնաբժեր: Ժամանակակից սառցադաշտեր չկան, սակայն պլեյստոցենում նրա վրա եղել է խոշոր սառցադաշտ: Նրա լանջերում թարմ կերպով պահպանվում են սառցադաշտային ռելիեֆի ձևերը՝ կրկեսները, տրոգային հովհանները, լճերը, կարլինգները և այլն: Լեռների կատարային մասը սառցարածան գիծ է եղել արևելյան ու արևմտյան սառցադաշտերի համար: Այն ենթարկվել է ինտենսիվ սառնամանիքային հողմահարության և



Սիեռա Նևադայի լեռները ԱՄՆ-ում:

ստացել իր անունը՝ Սիեռա Նևադա, որն իսպաներեն նշանակում է «ձյան սղոց»:

Սիեռա Նևադայի արևմտյան լանջերի ռելիեֆի ձևավորման գործում մեծ դեր են խաղում հոսող ջրերը, որոնք գոյացրել են խոր կանիոններ: Քինդ գետի կանիոնն ունի 2400 մ խորություն և Հյուսիսային Ամերիկայում ամենախորն է:

Կասկադյան և Սիեռու Նեադա լեռներից արևմուտք տարածված է տեկտոնական իշխածքների գոտին, որի հյուսիսում է Ուփլամետ գետի հովիտը: Վերջինս Կանադական ակոսի հարավային շարունակությունն է: Հովտի ցածր մասն ունի 20—50 կմ լայնություն: Ուփլամետի հովտից հարավ տարածված Կալիֆոռնիայի իշխածքը լցված է հարեւան լեռներից հողմահարված ու տեղափոխված փուխր նյութերով, որտեղ կավճի հասակի հզորությունը կազմում է 6000 մ, պալեոգեն-նեոգենինը՝ 3000 մ, շորրորդականինը՝ 600 մետր: Հովտի ոելիեֆի ձևավորման գործում մեծ դեր են կատարում Սաքրամենթո և Սան Խոսակին գետերը, որոնք Սիեռու Նեադայից հոսում են դեպի հովիտ՝ նստեցնելով մեծ քանակությամբ փուխր նստվածքներ: Կալիֆոռնիայի ալյուվիալ նստվածքներում հայտնաբերվել են ոսկու հարուստ պաշարներ:

Մարգի արևմուտքով ձգվում է ոչ բարձր Ափամերձ լեռնաշղթան, որը կազմված է մեզոզոյան և մասամբ նեոգենի հասակի ծալքավորված շերտախմբերից: Լեռներն աշքի են ընկնում վլաշարժերով: Վայրը սեյսմիկ է, 1906 թ. երկրաշարժը մեծ վնասներ է պատճառել Սան Ֆրանցիսկո քաղաքին: Նորագույն տեկտոնական շուրջումների շնորհիվ Ափամերձ լեռնաշղթան աշքի է ընկնում ուղղաձիգ ակտիվ բարձրացմամբ: Այդ մասին են վկայում նրա արևմտյան լանջերում մի քանի հարյուր մետր բարձրության վրա գտնվող ծովային դարավանդները: Փամանակակից ոելիեֆի ձեռվավորման գործում, բացի տեկտոնիկայից, հիշատակության արժանի են նաև էրոզիոն գործուները:

Արևմտյան լեռնային մարգի կլիման մերձարևադարձային-միջերկրածովային է: Այն ընկած է խաղաղօվկիանոսյան օդային զանգվածների ազդեցության տակ, զգալի է նաև կալիֆոռնիական սառը հոսանքի ազդեցությունը: Տեղումները հիմնականում թափում են ձմռանը: Մարգի ծայր հյուսիս-արևմուտքն ստանում է մոտ 2000 մմ, իսկ հարավը, կու Անջելոսի շրջանը՝ 350—400 մմ տեղումներ, Կալիֆոռնիայի և Ուփլամետի հովտային շրջանի հյուսիսը՝ 700—1000 մմ, հարավը՝ 150—200 մմ: Այդ պատճառվ էլ առանց ոռոգման հողագործությամբ զբաղվելը դառնում է անհնար: Շատ տեղումներ են ստանում Սիեռու Նեադայի արևմտյան լանջերը՝ 1000—1200 մմ, որտեղ ձմեռը ձյան շերտի հաստությունը հասնում է 8—10 մետրի և մեծ վնաս է պատճառում անտառային բուսականությանը:

Հովհաննեսի միջին շերմությունը արևմտյան ափամերձ զրջաններում լինում է $+15$, $+20^{\circ}$, ցուրտ ամսինը՝ $+10$, $+12^{\circ}$: Շոգ է Կալիֆոռնիայի հովհատը, որի հյուսիսում $+27$, $+28^{\circ}$ է, իսկ հարավում՝ $+32$, $+35^{\circ}$, ձմեռը՝ $+7$, $+8^{\circ}$: Ամառն անձրևներ գալիս են Կասկադյան լեռներում և Առափնյա լեռների հյուսիսում, իսկ մնացած շրջաններում համարյա թե տեղումներ չեն լինում:

Առափնյա լեռների արևմտյան լանջերի գորշ անտառային հողերում տարածված են եղևնու-հեմլոկի խիտ անտառները, որոնց հետ հանդիպում են նաև եղեինը, կենսածառը և այլ խոնավասեր ծառատեսակներ: Լեռների արևելյան լանջերը և Ուիլամետի հովտի շուրջը տարածված են դուգլասի, սպիտակ եղեինի, սիխտինյան եղևնու, սպիտակ սոճու և շորասեր այլ ծառատեսակներ: ԱՄՆ-ի անտառների ամբողջ տարածքի 13 տոկոսը կազմում է հաստաբում, արդյունաբերական նշանակություն ունեցող դուգլաս ծառատեսակը: Հրդեհի ժամանակ դուգլասի կոները չեն այրվում, այդ պատճառով էլ այդպիսի շոր կլիմա ունեցող վայրերում դրանք արագ վերականգնվում են: Առափնյա լեռների հարավարևմտյան ցածր, մինչև 650 մ բարձրությունները ծածկված են սեկվոյայի հնատառներով, որում հանդիպում են նաև մորու ծառը, կաղնին, լաստենին, որոնց տակ տարածված են մրտավարդի, խոլորձի և այլ մշտականաշմերձարևարդային թփուտներ: Սեկվոյայի անտառներն աշքի են ընկնում բարձր արտադրողականությամբ: Մեկ հեկտարից ստացվում է 11-



Հսկա սեկվոյա ծառը:

12 Հառար մՅ փայտանյութ, որը 15—20 անգամ ավելի է, քան
տայգայում:

Սիեռա Նևադայի արևմտյան լանջերը ծածկված են ղեղին
սոճու, շաքարի սոճու, ամերիկյան սոճու անտառներով: Այդ ան-
տառներում հանդիպում են նաև դուզլաս, եղին, մայրի և մի քա-
նի տեսակ՝ լայնատերևներ: Ընդարձակ հողահանդակները, ո-
որոգման համակարգերի առկայությամբ վայրը դարձրել են մերձ-
արևադարձային կուլտուրաների մշակման հիմնական շրջաններ: Այստեղ մշակում են թեյ, բրինձ և այլ մերձարևադարձային կուլ-
տուրաներ:

ՄԵԽԻԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ և ԿԱՂԻՖՈՌՆԻԱ ՔԵՐԱԿՂԳԻ


Այս երկրով վերջանում են Հյուսիսամերիկյան Կորդիլիերնե-
րը: Լեռնագրական միավորները ձգվում են հյուսիսից հարավ,
նեղանալով մոտենում են իրար, կենտրոնական սարահարթն ա-
վելի է նեղ, քան ԱՄՆ-ի Կորդիլիերներում: Մայր հարավում հը-
րաբխային Սիեռա Մադրեն ձգվում է արևմուտքից արևելք: Ի
հակադրություն հյուսիսում գտնվող Կորդիլիերյան մյուս երկըր-
ների, այստեղ խոնավությունն ավելանում է հյուսիս-արևմուտ-
քից դեպի հարավ-արևելք ուղղությամբ:

Փայոսոտ լեռները գեպի հարավ անցնում են Արևելյան Սիեռա
Մադրե լեռներին, իսկ Սիեռա Նևադան՝ Արևմտյան Սիեռա Մադ-
րեին: Ներքին սարահարթի հյուսիսը կոչվում է անապատային
հյուսիսային Մեսա, որից հարավ տարածվում է հրաբխային՝
կենտրոնական Մեսան: Արևելյան ծովափով ձգվում է մի նեղ
դաշտավայր, որի մակերեսույթում մերկանում են ծալքավոր կա-
ռուցները և երիտասարդ ինտրուզիվ ապարները: Մայր արևմուտ-
քում ընկած է Կաղիֆոռնիայի թերակղզին, որը Առափնյա լեռնե-
րի հարավային շարունակությունն է:

Պալեոզոյան հասակի ապարներ հանդիպում են երկրի հյու-
սիսային շրջաններում, որոնք մասամբ ծալքավորվել են հերցին-
յան լեռնակազմական պրոցեսների ժամանակ և դրանով հիմք
դրել ցամաքի գոյացմանը: Մեզոզոյի սկզբում այդ ցամաքը թե-
րակղզի էր, որի հարավը ողողվում էր Ատլանտյան և Խաղաղ օվ-
կիանուները միացնող նեղուցի ջրերով: Մինչև կավիճ Մեքսիկա-
կան բարձրավանդակը ցամաքային կապ չի ունեցել Կենտրոնա-
կան Ամերիկայի հետ: Ցուրայի և կավճի սահմանում տեղի է ու-
նեցել Նևադայի ծալքավորությունը և զգալիորեն ընդարձակվել է

ցամաքը: Այդ ժամանակ նստվածքային հզոր շերտախմբեր են ներարկվել բաթողիտային մարմինները, որոնց կարծը ապար ները Արևմտյան Սիեռա Մագրեի, Կենտրոնական Սեսայի, Հարավային Սիեռա Մագրեի և Կալիֆոռնիայի լեռների հիմք են դարձել:

Կավճի վերջում և պալեոգենի սկզբում տեղի է ունենում լարամյան ծալքավորությունը, որն ընդգրկում է ամբողջ երկիրը, հատկապես մեծ ուժգնության է հասնում Արևելյան Սիեռա Մագրեի տարածքում: Լարամյան ծալքավորությամբ Մեքսիկական բարձրավանդակը ձեռք է բերել ժամանակակից-տեսքը և կապվել Կենտրոնական Ամերիկայի հետ: Եթե կայնողոյում ամբողջ Հյուսիսային Ամերիկայում կլիմայական զգալի փոփոխություններ են տեղի ունեցել, ապա Մեքսիկական բարձրավանդակի բնակլիմա-



Էլ Սալտո ջրվեժը Մեքսիկական բարձրավանդակում:

յական պայմանները համարյա թե մնացել են անփոփոխ, պահպանվել են հնագույն ֆառնան ու ֆլորան: Սկսած վերին կավճից, վայրը ենթարկվել է դենուգացիայի: Այստեղ մեծ տարածություններ են բռնում հնագույն հարթեցման մակերնույթները՝ պենեպէնները: Միոցենյան ժամանակաշրջանում տեղի են ունենում երկրակեղեկի ուժեղ տեղաշարժեր, վարնետներ, որի ժամանակ գոյացել է Կալիֆոռնիայի ծոցը: Տեկտոնական խզման գծերից դուրս են ժայթքել հրաբխային լավաներ՝ առաջացնելով մի շարք հրաբխային կոներ և լավային սարավանդներ: Հրաբխային արտավիժումներն ու հաճախակի երկրաշարժերը շարունակվում են դեռ մեր օրերում: Եզրային լեռնաշղթաների գոյացման պատճառով բարձրավանդակի կենտրոնում կլիման դարձել է ցամաքային, վերափոխվել է ջրագրական ցանցը: Սկզբնական շրջանում գետերի մեծ մասը հոսելիս են եղել դեպի կենտրոնում գտնվող լճային գոգավորությունները, որոնք, ակայն, հետագայում լրիվ շորացել են:

Մեքսիկական բարձրավանդակը հարուստ է օգտակար հանածոներով: Համաշխարհային նշանակություն ունի արծաթը, կապարը, անագը, պղինձը, սնդիկը: Ավելի քիչ տարածված են երկաթի, ուրանի, քարաղի, ծծմբի, քարածխի, իսկ դաշտավայրերում՝ նավթի և գազի պաշարները:

Մեքսիկական բարձրավանդակի հյուսիսն ունի չոր, անապատային կլիմա: Ավելի խոնավ շրջաններ են արևելքը և հարավը: Հյուսիս-արևմուտքը և Կալիֆոռնիա թերակղզին ընկած են արևելյան ինալազօվկիանոսյան բարձր ճնշման գոտու ազդեցության տակ և աշքի են ընկնում ցամաքային կլիմայական պայմաններով: Հովհայան ջերմաստիճանը $+25^{\circ}$ է, իսկ տեղումները՝ $100-150$ մմ: Զմեռը հյուսիսում տաք է, սակայն երեսմն հյուսիսից թափանցող ցուրտ օդային զանգվածների շնորհիվ օդի ջերմաստիճանն իջնում է $-15, -20^{\circ}$ -ի:

Հարավը և արևելքն ընկած են հյուսիսատլանտյան բարձր ճնշման (Ազորյան) գոտու ազդեցության տակ և ամռանն ստանում են առատ տեղումներ՝ $2000-4000$ մմ: Զմեռը 3000 մետրից բարձրը լեռներում լինում են ցրտեր, գոյանում է ձնածածկույթ: Ջան գիծը գտնվում է 4500 մ բարձրության վրա: Բարձր հրաբխային կոների վրա հավերժական ձյունը պահպանվում է, կան նաև ոչ մեծ սառցադաշտեր:

Մեքսիկական բարձրավանդակի մեծ մասը ղեպի օվկիանոս հոսք շունի: Միայն արևելյան և հարավային խոնավ լեռնային ջրաններում կան մի շարք հորդառատ գետեր, իսկ հյուսիսային և կենտրոնական մասերում հիմնականում գործում են ժամանակավոր ջրառքերը:

Մեքսիկական բարձրավանդակում անջատում են շորս ուստաձիգ լանդշաֆտային գոտիներ:

1. Շոգ գոտին (տիեռա-կալենտա) ընդգրկում է բարձրավանդակի մինչև 1000 մ բարձրությունները, հատկապես արևելյան դաշտավայրերը: Այստեղ շոգ է ինչպես ամառը, այնպես էլ ձմեռը: Տարին բաժանվում է խոնավ (ամառ) և չոր (ձմեռ) սեզոնների: Այս գոտին ծածկված է հիմնականում խոնավ արևադարձային անտառներով:

2. Բարեխառն գոտին (տիեռա-տեմպլադա) ընդգրկում է 1000—1500 մ բարձրությունները: Կլիման շափակոր շոգ է, զով գիշերներով:


3. Ցուրտ գոտին (տիեռա-ֆրիա) տարածվում է 1500—2700 մ բարձրություններում: Ամառը շափակոր տաք է, ձմեռ՝ սառը, երբեմն սառնամանիքներով: Ցուսականությունը մերձարևադարձային է, ամառը խոնավ է, ձմեռ՝ չոր և ցուրտ:

4. Սառնամանիքային գոտին (տիեռա-էլադա) ընդգրկում է բարձրավանդակի 2700 մ-ի, բարձր շրջանները: Այս գոտում հաճախ են սառնամանիքով օրերը, սակայն իր բարձր դիրքի շնորհիվ ստանում է մեծ քանակությամբ արեգակնային էներգիա, որով պայմանավորված լանդշաֆտը հանդես է գալիս լեռնամարդագետնային բուսականությամբ: Հասունանում են նաև հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաները:

Հյուսիսային Ամերիկայի մյուս շրջանների հետ համեմատած Մեքսիկական բարձրավանդակն աշքի է ընկնում հարուստ ֆլորիստական կազմով: Այստեղ աճում են մոտ 500 տեսակ կակտուսներ, 140 տեսակ ագավաներ, 250 տեսակ կաղնի, ինչպես նաև տարածված են մրտավարդի, սև ընկուղենու, լորենու, շինարի և այլ ծառատեսակներ:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները պատկանուն են նեռարկտիկական մարզին: Հայտնի են մալամի եղջերուները, անտիլոպները, ճյուղեղջյուրները, աղվեսները, գայլերը, կղաքիսը, պարկավոր մկները, ինչպես նաև նեռորոպիկական մարդին:

բնորոշ զրահակիրները, մրջնակերները, մշկախողը և մի շարք սողումներ ու թռչուններ։ Մեքսիկական բարձրավանդակի տարածքում առկա են հինգ բնական մարզեր՝ Արևելյան Սիեռա



Սուկովենտային բնաւականություն Մեքսիկական բարձրավանդակում։

Մադրե, Հյուսիսային Մեսա, Կենտրոնական Մեսա և Հրաբխային Սերա, Արևմտյան Սիեռա Մադրե, Կալիֆոռնիա թերակղզի։

Արևելյան Սիեռա Մադրե.— Զգվում է Մեքսիկական բարձրավանդակի արևելյան մասով։ Դեպի Կենտրոնական սարահարթ ձուզվում է նրան, իսկ արևելքում զարիթափ լանջերով իջնում է դեպի Մերձափնյա դաշտավայր։ Լեռներն ավելի բարձր են կենտրոնում (2500—3500 մ), իսկ դեպի հյուսիս և հարավ ցածրանալով հասնում են 1000—1500 մ բարձրության։ Լեռների արևելյան լանջերն ունեն էրոզիոն ռելիեֆ, իսկ արևմտյանն աշքի է ընկնում ֆիղիկական հողմահարության ձևերով։

Արևելյան Սիեռա Մադրե լեռները գոյացել են կարամյան ժայռավորության ժամանակ, ապա նստվածքային ապարները վերածվել են տիպիկ անտիկլինալ ժայռերի, զուրկ հրաբխային ներարկումներից։ Մալքավորության ժամանակ լեռները վրաշարժ

Են կատարել դեպի արևելք, առկա են նաև մի քանի վարնետային գիւղոկացիաներ: Առանձին լեռնաբազուկներ իշնելով հասնում են Մեքսիկական ծոց: Մեքսիկական ծոցի արևմուտքում ձգվում է նեղ թմբավոր ուղիեֆով դաշտավայրային մի շերտ, որը փաստուրեն լեռների արևելյան թևն է: Լեռների հյուսիսային հատվածները Մեքսիկական ծոցից 500—600 կմ հեռու գտնվելու հետեանքով ավելի քիչ տեղումներ են ստանում և ծածկված են չորասեր թփերով, իսկ Ռիո Գրանդե գետի հովտում հանդիպում են կաղնու, մորու ծառի և այլ շորասեր ծառեր ու թփեր: Սակայն հիմնական բուսական խմբավորումներն այստեղ սուկուլենդրներն են՝ կազմված կակտուսներից, յուկիից, տատասկաթզենուց:

Հյուսիսային լայնության 27° -ից հարավ, լեռների արևմտյան ջանջերին նույն բուսական խմբավորումներն են, ինչ հյուսիսում, իսկ արևելյան խոնավ լանջերը ծածկված են կաղնու-սոճու անտառներով: Սոճու բազում տեսակների մեջ աշքի է ընկնում երկարասեղ սոճին՝ մոնտեզուման: Մայր հարավարևելյան շրջանները ծածկված են մշտադալար արևադարձային անտառներով, կարմրածառի, պատկառուկի, ֆիկուսի, արմավենու և մշտադալար կաղնու տեսակներով: Բոլոր ծառատեսակները հանդես են գալիս շարակարգերով (յարուսներով) և փաթաթված են լիաններով ու էպիֆիտներով:

Անտառներում տարածված են մարդակերպ կապիկները, մրջնակերները և այլ կենդանիներ: Արևելյան դաշտավայրային և նախալեռնային շրջանների բնական լանդշաֆտը վերածվել է կուլտուրականի, որտեղ մշակում են սուրճի ծառ և այլ մերձարեվադարձային ու արևադարձային կուլտուրաներ:

Հյուսիսային Մեսա.— Լանդշաֆտային տեսակետից նման է Մեծ Ավազան սարահարթին: Զգալի տարածում ունեն կարճ բեկորավոր լեռները, տափարակ սարավանդներն ու ընդարձակ գոգավորությունները: Կլիման խիստ ցամաքային է, շրագարական ցանցը՝ թույլ, հողաբուսական ծածկույթը՝ աղքատ. այդպիսին են այս մարզի բնական առանձնահատկությունները: Կենտպոնում գտնվում է Զիուառուա անապատը, իսկ Արևելյան ու Արևմտյան Միեռա Մադրեների նախալեռները ծածկված են կիսաանապատացին և չոր սավանային բուսականությամբ:

Հյուսիսային Մեսայի մակերևույթը կազմված է տարրեր հասակի նստվածքային գոյացություններից, որոնք ծալքավորվել են

Հարամյան լեռնակազմության ժամանակ: Ավելի շատ տարածված են կավճի հասակի կրաքարերն ու թերթաքարերը, որոնց մեջ զարգացել են ոելիեֆի կարստային ձևերը: Զգալի տարածում ունեն կայնողոյան հրաբխային շերտախմբերը: Մեսայի միջին բարձրությունը 600—1000 մ է, առավելագույնը՝ 2500 մ:

Հյուսիսային Մեսան ունի թույլ թեքություն գեղի հյուսիս, գեղի ուր հոսում են ժամանակավոր ջրհոսքերը, սակայն խիստ ցամաքային կլիմայի պատճառով դրանք չեն հասնում Ռիո Գրանդե գետին, այլ թափվում են ոչ մեծ լճային գոգավորությունների մեջ, բացառությամբ Կոնչոս գետի, որն արևմուտքից արևելք կը տրում է ամբողջ անապատը և հասնում Ռիո Գրանդե:

Մեսան ամռանը շոգ է, իսկ ձմեռը միշտ նկատվում է 0°-ից ցածր բարեխառնություն: Սարավանդը ծածկված է կրեոզոտային թփուտներով և կակտուսներով, դրանց հետ հանդիպում են ագավաներ և այլ սուկուլենտներ: Ավելի բազմազան են կակտուսային ֆորմացիաները, հսկա՝ 8—10 մ հասնող կակտուսների կողքին հանդիպում են լայն տակառանմաններ, գաճաճներ և այլն:

Մեսայում տարածված են թույլ աղակալված գորշահողերը, որոնց վրա լավ զարգանում են կակտուսները, և աղակալված մոխրագորշ հողերը, որտեղ աճում են կրեոզոտային թփեր: Արևմբռյան և Արևելյան Սիեռա Մադրենների՝ գեղի Մեսա ուղղված նախալեռները ծածկված են յուկիի նոսր անտառներով, որոնք նմանվում են արմավենու անտառներին: Յուկիի խոշոր տերևներից ստանում են բարձրորակ մանրաթել, ջիուառա անապատի սալանշակներով հարուստ վայրերում տարածված են աղքատիկ հալոֆիտ բույսերը: Անապատներում տարածված են թունավոր մողես, օձերի մի քանի տեսակներ: Գյուղատնտեսության համար մշակվող հողերը գտնվում են ոռոգվող գետահովիտներում, որտեղ բամբակ են մշակում: Համեմատաբար լավ է զարգացած արոտային անասնապահությունը:

Կենտրոնական Մեսա.— Սա հրաբխային բարձրադիր ոելիեֆով, շափակոր տաք և խոնավ կլիմայով, լեռնային նոսր անտառներով մարզ է: Խիտ բնակեցված լինելու հետևանքով այստեղի բնությունը ձևափոխված է: Ռելիեֆն ամենուրեք ծածկված է կայնողոյան հասակի բազալտային, անդեղիտային, տուֆային շերտախմբերով, որոնք ծածկելով մայր ապարները, ստեղծել են սարավանդաձև մակերևույթ: Միայն գետահովիտներում է, որ նը-

կատվում են մայր ապալը և ի ելքերը: Կենտրոնական Մեսան ընկած է 2000—2500, առավելագույնը՝ 3000 մ բարձրության վրա: Նրա բարձրադիր հրաբխային կոների միջև զգալի տեղ են գրավել լճային գոգավորությունները, որոնց մեծ մասը ներկայումս լիպահպանվում, բացի նստվածքներից:

Կենտրոնական Մեսայի հրաբխային բարձր եզրը հրաբխային Սիեռա Մադրեն է: Այն ծգվում է արևմուտքից արևելք մոտ 800 կմ՝ ոմենալով 50—100 կմ լայնություն: Ի տարրերություն հյուսիսի, այստեղ մայր ապարների ելքեր չկան, քանի որ հրաբխային շերտախմբերի հղորությունը շատ մեծ է: Հրաբխային Սիեռան ժամանակակից ակտիվ գործող հրաբխային վայրերից մեկն է աշխարհում, որտեղ հրաբխային կոների բարձրությունը հասնում է 5000—5500 մետրի: Խոշոր հրաբուխներից են՝ Օրիսաբան (5700



Պոպոկանտեպետլ հրաբխի խառնարանի մի մասը:

մ), Պոպոկանտեպետլը (5452 մ), Իստակսիուատլը (5286 մ), Սիեռա գել-Ախուեկոն (3952 մ), Նևադա գե-Տոլուկան (4577 մ), Սագալակուեյեն (4000 մ), Կոլիման (4339 մ) և այլն: Ներկայումս գործող հրաբուխներից են՝ Խորուկոն, Պարիկուտին և այլն: Հրաբխային Սիեռան գեպի հարավ իշնում է մինչև Բալսաս գետի տեկոնական իջվածքը:

Կենտրոնական Մեսան իր բարձր դիրքի պատճառով համապատասխանում է ոչ թե արևադարձային, այլ բարեխառն կը

լիմայական գոտում: Զմեռը հաճախ օդի ջերմաստիճանը 0° -ից ցածր է լինում, նույնիսկ Մեխիկոյի շրջակայքում ապրիլից սեպտեմբեր նկատվել է մոտ 100 դեպք, երբ գիշերը ջերմաստիճանը 0° -ից ցածր է իշել. վերջինս բացատրվում է հյուսիսից ներթափանցող ցուրտ օդային զանգվածների ազդեցությամբ և հողի մակերեսովի ուժեղ ճռագայթարձակմամբ:


Բնական բուսածածկույթը կազմել են սոճու-կաղնու անտառները, սուկուլենտների խառնուրդով, որ ներկայումս հարթավայրերում շեն պահպանվում մարդու տնտեսական գործունեության հետևանքով: Մեսայում տարածված են դարչնագույն հողերը, որտեղ մշակում են հացահատիկային կուլտուրաներ՝ եգիպտացորեն, ցորեն, լորազգիներ: Զգալի տարածություն են գրավում կուտուրական ագավայի պլանտացիաները, որից ստանում են բապիրտ և մանրաթել: Հարավային լեռնալանջերը ծածկված են տերևաթափ անտառներով, որ հասնում են մինչև 1500 մ բարձրությունները: Դրանից բարձր ընկած են սոճու-կաղնու տնտառները, 2400—2800 մ վրա՝ սոճու-եղեինի անտառները: Ավելի բարձր տարածվում են գիհու թփուտները և խոտային բուսատեսակները, 3000—3500 մ-ից բարձր ընկած են ալպյան մարգագետիններն ու հավերժական ձյունը:

Բարձր լեռներում կուտակված ձյունը ամառային անձրևների ժամանակ հալվելով ստեղծում է հորդառատ ջրհոսքեր և ավերիլ աշխատանքներ կատարում նախալեռնային շրջանի գյուղատնտեսական դաշտերում:

Հրաբխային հզոր լավաների տարածման հետևանքով մակերեսութային հոսքը բավականին թույլ է, Այս հանգամանքը մեծ դժվարություններ է ստեղծում խոշոր քաղաքների շրամատակարարման գործում: Մեխիկոյի գոգավորությունում կուտակված ստորերկրյա ջրերի անշափ շատ օգտագործման հետևանքով քաղաքը տարեկան 0,5 մ իջնում է:

Արևմտյան Սիեռա Մադրե.— Զգվում է Մեքսիկական բարձրավանդակի արևմտյան եզրով: Ինչպես Հարավային Սիեռա Մադրեն, սա նույնպես մակերեսույթում ծածկված է հին պալեոգենի հասակի լավաներով: Ուելիեֆի հիմնական ձևերը տեկտոնա-էրոզիոն են, հատկապես արևմտյան լանջերինը, որտեղ գետերն ըստեղծել են 1500—1600 մ խորության կանիոնաձև հովիտներ: Առավելագույն բարձրությունները հասնում են 2500—3000 մետրի

(Զորերաս լեռը 3150 մ է): Լեռնային ռելիեֆը սկսել է ձևավորվել պլեոցենի սկզբից՝ ուղեկցվելով լավային արտավիժումներով։ Թարձրացման հետ զուգընթաց առաջացել են վարնետիներ, որոնց



Կորբեի կանիռը Մեխիկոյի մոտ:

ուղղությամբ հետագայում հոսել են գետերը։

Արևմտյան Սիեռա Մադրեն Խաղաղ օվկիանոսի կողմից քիչ խոնավություն է ստանում, այդ պատճառով էլ արևմտյան լանջերը կ նույնիսկ մերձափնյա նեղ դաշտավայրը ծածկված են չորսամբ բուսականությամբ, նոսր, բայց անանցանելի ակացիայի և այլնի մացառուտներով։ Միայն լեռների հարավային և հարավարևմտյան

լանջերը, որն արևադարձային մուսոնների հետևանքով առատ տեղումներ են ստանում, ծածկված են հաստաբում տերևաթափ անտառներով։ Բարձր լեռնային գագաթները և լանջերը ծածկված են սոճու, եղևնու անտառներով։ Միջին բարձրության լեռնալանջերում հիմնականում տարածված են սոճու-էաղնու նոսր անտառները։ Խիստ մասնատվածության հետևանքով Արևմտյան Սիեռա Մադրե լեռների շրջանը շատ թույլ է յուրացված, չկան այն կտրող, անցնող երկաթուղիներ, քիչ են ավտոխճուղիները։ Նրա հյուսիսում արդյունահանում են բազմամետաղներ, մնացած հատվածները յուրացված չեն։ Գյուղատնտեսությամբ զբաղվում են արևմտյան Մերձափնյա դաշտավայրի ոռոգվող հողերում, իսկ մնացած շըրշաններն արոտային անասնապահության վայրեր են։

Կալիֆոռնիա թերակղզի։— Կազմված է ոչ բարձր լեռնաշրջալից, որը ձգվում է թերակղզու կենտրոնով, մնացած մասերն ունեն թմբավոր ուղիեթ և հարթավայրեր։ Թերակղզու արևմտյան մասով անցնող Կալիֆոռնիայի ցուրտ հոսանքը, ինչպես նաև այդտեղ գտնվող մթնոլորտի բարձր ճնշման կենտրոնը թերակղզում ստեղծում են անբարենպաստ չոր, շոգ կլիմայական պայմաններ։ Չնայած դրան, հարաբերական խոնավությունը բարձր է (50 տոկոս), տարեկան տեղումները 100 մմ.-ից շեն անցնում, գիշերը միշտ ցող է գոյանում, որի հետևանքով սուկուլենտային բուսականությունը կարողանում է իր գոյությունը պահպանել։ Ամառվա վերջում և աշնանը Կալիֆոռնիայի տարածք են թափանցում արևադարձային ցիկլոններ-փոթորիկներ (որը մեքսիկացիներն անվանում են Կուբասկո), որոնք ժամում ունենում են 120—160 կմ արագություն։ Այդ փոթորիկները օդ են բարձրացնում մեծ քանակությամբ ավազ, ոչնչացնում են ցանքսերը և վընաս պատճառում նույնիսկ բնակավայրերին, վերջում առաջացնում են հեղեղային անձրևներ ու դրանով պարպում ամբողջ տարվա խոնավությունը։

Կալիֆոռնիա թերակղզին Մեքսիկական բարձրավանդակի իջվածքային շրջանն է։ Տեկտոնական տեսակետից թերակղզին ունի նևադայի ծալքավորություն՝ ներարկված բյուրեղային ինտրուզիաներով։ Սկսած միոցենից, Արևմտյան Սիեռա Մադրեի բեկվածքային երեսույթների հետ կապված Կալիֆոռնիա թերակղզին սկսում է իշնել, որը և շարունակվում է մեր օրերում։ Հստ մեքսիկական երկրաբանների, թերակղզին գոյացել է ստորին շորորդա-

կանում՝ մոտ մեկ միլիոն տարի առաջ։ Հյուսիս-արևելքում է գտնվում մի ընդարձակ դաշտավայր, որը կազմում է Կալիֆոռնիայի հովտի հարավային շարունակությունը։ Այն գոյացել է Կողորադու գետի բերվածքներից։ այդ հատվածում Կողորադոն տարեկան 80 միլ տոննա փուլիր նյութ է կուտակում։

Թերակղու լեռները դեպի արևմուտք իջնելով, գոյացնում են զարդարակի բեկորավոր լանջեր, իսկ հարավում ցածրանալով անցնում են ջրի տակ։

Ի տարբերություն Մեքսիկական բարձրավանդակի անապատային շրջանների, Կալիֆոռնիայի անապատներում օդի ջերմաստիճանը 0-ից ցած չի իջնում։ Զմունը նկատվում է +4, +7°, և բույսերը չեն ցրտահարվում։

Թերակղու հյուսիս-արևմուտքում տարածված է Սոնորայի անապատը, որը ծածկված է յուրահատուկ բուսական ծածկոցով և համեմատաբար հարուստ կենդանական աշխարհ ունի։ Լեռնալանջերը ծածկված են նոսր կաղնու-սոճու անտառներով, սակայն հիմնական բուսական խմբավորումը շապարակն է (Ամերիկայում շորասեր թփերն անվանում են շապարակ)։ Սոնորայի անապատում զգալի տարածում ունեն խոշոր սոկոլզենտները և թփուտները, անտերես, մերկ ցողուններով ծառատեսակները։ Ամենախոշոր ծառերից են մոտ 18—20 մ բարձրություն և 3 մ տրամագիծ ունեցող կակտուսները, մյուս ծառատեսակներից հայտնի են ծառանման յուկին և ավելի շատ՝ կրեռզոտի թփերը, երկաթի ծառը, որը հանդես է գալիս թփի ձևով։ Օազիսներում տարածված են արմավենիները և հին աշխարհից այստեղ բերված փյունիկյան արմավենիները։

Բույսերի պտուղները դեպի իրենց են գրավում անհամար թռչունների և կաթնասունների։ Վերջիններից հայտնի են՝ մշկախոզը, խոշոր անտիլոպները և կրծողների բազմաթիվ տեսակներ։ Լեռներում հանդիպում են հաստեղջուր ոչխարներ։ Բացի Կոլորադոյի ստորին հոսանքից, մնացած անապատային շրջանները թույլ են յուրացված։ Ոռոգվող հողերում մշակում են թել, բամբակ և արևադարձային այլ կուտուրաններ։

Կենտրոնական Ամերիկա

Հյուսիսային Ամերիկայի հարավային նեղ պարանոցային մասը, Վեստ Ինդյան կղզիների հետ միասին, կոչվում է Կենտ-

բոնական Ամերիկա: Այն տարածվում է Հյուսիսում՝ Տեսանտեպեկ, հարավում՝ Դարեանի պարանոցների միջև:

Կենտրոնական Ամերիկան կապող օղակ է Հյուսիսային ու Հարավային Ամերիկա մայրցամաքների միջև և բնական պայմանների տեսակետից նմանվում է Հյուսիսում՝ Հյուսիսային, իսկ հարավում՝ Հարավային Ամերիկաներին: Տեկտոնական տեսակետից կենտրոնական Ամերիկան մասամբ Հյուսիսային Ամերիկայի Կորդիլիերյան համակարգի հարավային շարունակությունն է, մասամբ էլ նմանվում է Անտիլյան-Կարիբյան մարդի Կորդիլիերյան գոտում: Կլիմայական, հողաբուսական ծածկութիւն և կենդանական աշխարհի տեսակետից այս երկիրը ավելի շատ նման է Հարավային Ամերիկայի հյուսիսային մասերին:

Կառուցվածքային տեսակետից կենտրոնական Ամերիկան աշքի է ընկնում մեծ մասնատվածությամբ: Այստեղ միմյանց հաջորդում են ծալքաբեկորավոր լեռնաշղթաները, առանձին զանգվածները, խոշոր իջվածքները և ցածր հարթությունները, որ տարածված են հիմնականում Մեքսիկական ծոցի, Կարիբյան ծովի, իսկ արևմուտքում՝ Խաղաղ օվկիանոսի ափամերձ շրջաններում: Աշխարհագրական ցածր լայնությունների, որով և պայմանավորված տաք շրերի շնորհիվ կենտրոնական Ամերիկայի ինչպես պարանոցային, այնպես էլ կղզիների ափամերձ հատվածներում զարգացած են կորալային խութերը: Ամբողջ կենտրոնական Ամերիկան աշքի է ընկնում բարձր սեյսմիկականությամբ և ժամանակակից հրաբխականությամբ:

Կենտրոնական Ամերիկայի տարածքում անշատում են ֆիզիկա-աշխարհագրական երկու մարզ՝ Պարանոցային և Կղզային:

Պարանոցային մարզի արևելյան ափերը ողողում են Մեքսիկական ծոցի և Կարիբյան ծովի, իսկ արևմտյանը՝ Խաղաղ օվկիանոսի շրերը: Ամենալայն հատվածը Յուկատան թերակղզու շրջանում է (860 կմ), իսկ ամենանեղը՝ Պանամայի պարանոցի շրջանում, ընդամենը 50 կմ:

Պարանոցային մարզի մեծ մասը կազմում են լեռները, որոնց բնորոշ են ոելիեֆի բարձր մասնատվածությունը, ժամանակակից գործող հրաբուխներն ու երկրաշարժերը:

Արևմուտքում Խաղաղ օվկիանոսի ափերով տարածվում է մի նեղ դաշտավայր՝ կազմված չորրորդականի հասակի ծովային, ալյուվիալ և հրաբխային գոյացություններից: Սովակնյա գիծը

Թույլ է մասնատված, որտեղ բավականին մեծ տարածում ունեն ավազային կուտակումները, դյունային թմբաշարերը, միայն հարավում ափին են մոտենում առանձին լեռնաբազուկներ՝ ըստեղծելով մի շարք ոչ մեծ թերակղզիներ ու ծովածոցեր։

Պարանոցային Ամերիկայի արևմտյան մասով հյուսիսից հարավ ձգվում են 2500—3000 մետրի հասնող հարավային Սիեռա Մադրեի շարունակությունը կազմող Սիեռա Մադրե դե Գա-



Գործող հրաբուխ Կենտրոնական Ամերիկայում։

պաս լեռները։ Այդ լեռների արևմտյան լանջերի երկայնքով բարձրանում են մի շարք հանգած և գործող հրաբխային կոներ։ Դրանցից հիշատակության արժանի են Կենտրոնական Ամերիկայի ամենաբարձր հանգած հրաբխային գագաթ Տախումուլկոն

(4217 մ) Գվատեմալայի լեռներում, Տախանան (4064 մ), Սանտա Մարիան, Ատիտլանը, ակտիվ գործող ֆունքոն, իրասում է այլն:

Նիկարագուայի տարածքում Կենտրոնական Ամերիկայի լեռները ցածրանում են (այստեղ է գտնվում Նիկարագուայի իջվածքը) և նորից բարձրանում տարածվելով մինչև Պանամայի պարանոցը: Նիկարագուայի իջվածքը մի շարք երկրաբանների կողմից դիտվում է որպես տեկտոնական սահման Հյուսիսամերիկյան Կորդիլերների և Հարավային Ամերիկայի Անդերի միջև: Իջվածքային այդ շրջանը աշքի է ընկնում բարձր սեյսմիկականությամբ: 1973 թ. տեղի ունեցած երկրաշարժը համարյա թե ամբողջությամբ ավերեց Նիկարագուայի մայրաքաղաք Մանագուան:

Պարանոցային մարզի արևելքով ձգվող մերձափնյա դաշտավայրային գոտին ավելի լայն է, համեմատած խաղաղօվկիանոսյան մերձափնյա գոտու հետ, հատկապես Յուկատան թերակղու շրջանում: Արևելյան մերձափնյա դաշտավայրը մեծ մասամբ ծածկված է կավային նստվածքներով, հետևաբար աշքի է ընկնում ճահճոտ ուղիեցիկով: Միայն Յուկատան թերակղուն է, որ, ծածկված լինելով նեղենի հասակի կրաքարերով, նույնիսկ առատ խոնավության առկայության պայմաններում գուրկ է ճահճներից և մակերևութային հոսքից: Այստեղ մեծ տարածում ունեն ուղիեցիկ կարստային ձեռքը: Կարիբյան ծովի մերձափնյա դաշտավայրում զգալի տարածություն են գրավում ավազային թմբաշարերը, դյուները, ոչ մեծ լագունային լճերը: Ափի երկայնքով ձգվում են բազմաթիվ մասր կղզիներ և կորալլան խութեր: Պարանոցային մարզն աշքի է ընկնում մի շարք օգտակար հանածոններով, որոնցից հիշատակության արժանի են ոսկին և արծաթը (Հոնդուրաս, Նիկարագուա), կապարը (Գվատեմալա, Հոնդուրաս), սուրման (Հոնդուրաս), քրոմը և ծծումբը (Գվատեմալա):

Ամբողջ Պարանոցային մարզը տարածված է առատ տեղումներով հարուստ և բարձր ջերմաստիճանային գոտում: Յուրաքանչյաման միջին ջերմաստիճանները հյուսիսում 21° է, հարավում՝ 26° , իսկ տաք ամսվանը համապատասխանաբար՝ 27° և 28° : Օրական ջերմաստիճանային տատանումները կազմում են $8-10^{\circ}$: Մինչև 1000 մ բարձրությունները միջին տարեկան ջերմաստիճանները $+20^{\circ}$ -ից ցած չեն իջնում, իսկ 1000 մ-ից բարձր այն $+20^{\circ}$ -ից բարձր չեն: Միայն մի քանի հրաբխային բարձր գագաթներ ունեն

քացասական ջերմաստիճաններ և ծածկված են հավերժական ձյունով։ Եւարդի Հյուսիսային մասը մինչև Նիկարագուայի իշվածքն ունի արևադարձային կլիմա և ընկած է Հյուսիսարևելյան պասատների ազդեցության գոտում։ Մարդի հարավային մասը՝ տարածված է մերձհասարակածային կլիմայական գոտում։

Զմեռը պասատային բարձր ճնշման գոտին ընդգրկում է Անտիլյան կղզիների շրջանը, որտեղից փշող խոնավ ու տաք քամիները մեծ քանակությամբ տեղումներ են բերում դեպի Կարիբյան ծով ուղղված լեռնալանջերին, իսկ Հողմահակառակ խաղաղօվկիանոսյան լեռնալանջերում տիրապետում է շոր եղանակը Ամառը Հյուսիսարևելյան խոնավ քամիներն ընդգրկում են ամբողջ Կենտրոնական Ամերիկան և ամենուրեք նկատվում է խոնավ եղանակ, հատկապես արևելահայաց լեռնալանջերում։ Կենտրոնական Ամերիկայի ծայր հարավը ընկած է մերձհասարակածային գոտում, որտեղ թափվող տեղումները արդյունք են հասարակածային խոնավ օղային զանգվածների ներթափանցման (հասարակածային մուսոններ), հատկապես տարվա տաք սեզոնում։

Այսպիսով, Կենտրոնական Ամերիկայի Պարանոցային մարզում նկատվում է խոնավ արևելյան և փոփոխական խոնավ արևմբռյան գոտի, որտեղ շոր եղանակը տևում է 6—7 ամիս, իսկ նրա հարավում՝ 3 ամիս։

Արևելյան խոնավ գոտու Հյուսիսում թափվում են 1500, իսկ հարավում՝ 4000—5000 մմ տեղումներ, արևմբռյան՝ խաղաղօվկիանոսյան գոտում համապատասխանաբար Հյուսիսում՝ 1000, հարավում՝ 1700 մմ։ Փակ գոգավլորություններում տեղումների քանակը 500 մմ-ից ավելին չէ։

Կենտրոնական Ամերիկայի Պարանոցային մարդի փոքր տարածության, ուժեղ մասնատվածության պատճառով գետերը աշքի շեն ընկնում իրենց երկարությամբ և զրահավաք ավազանի մեծությամբ։ Դիխավոր ջրբաժանը մոտ է գտնվում Խաղաղ օվկիանոսին, այդ պատճառով էլ ավելի երկար են դեպի արևելք հոսող, քան թե դեպի արևմուտք հոսող գետերը։ Ատլանտյան օվկիանոսի ավազանի գետերը, կապված առատ տեղումների հետ, ավելի հորդառատ են, քան խաղաղօվկիանոսյանը։ Բացառություն է կազմում Յուկատան թերակղզին, որը միանգամայն գուրկ է մակերեսութային հոսքից՝ ուղիեցի կարստային ձևերի պատճառով։ Յուկատանի բնակչությունը օգտվում է կարստային ջրհորներից։

Մարդի տարածքի տեկտոնական իշվածքներում կան մի շարք լճեր, որոնցից հիշատակության արժանի են Նիկարագուայի իշվածքում Մանագուա և Նիկարագուա (մոտ 8000 քառ կմ) լճերը: Նիկարագուա լճում կան մի շարք կղզիներ, որոնց վրա բարձրանում են հանգած ու գործող հրաբուխներ: Նիկարագուա լճից դեպի Կարիբյան ծով է հոսում Սան Խուան գետը:

Մարդի տարածքի արևելքը ծածկված է արևադարձային և մերձարևադարձային խոնավ անտառներով, որոնք աճում են պողպատացված լատերիտային հողերում: Ստորին շոգ (տիերակալենտա) գոտում մինչև 800 մ բարձրությունները օդի տարեկան ջերմաստիճանը 22° -ից ցած շի իջնում, իսկ տեղումները 2500—3000 մմ են: Գոտում տարածված են արմավենիների մի շարք տեսակներ, կառլուկատու ծառեր, որոնք փաթաթված են լիաններով, շատ են էպիֆիտները: Հարթ տարածությունները ծածկված են ճահճին ճահճներով: Ափամերձ հատվածներում շատ են մանգրային անտառները: Մշակում են բանան, կակաո, շաքարեղեգն և այլ արևադարձային կուլտուրաներ: Ցուկատան թերակղզու հյուսիսը ծածկված է շորասեր թփերով և նոսր անտառներով, հատկապես սուկուլենտներով:

Բարեխառն գոտում (տիերա-տեպլադա) մինչև 800—1700 մ բարձրությունները, որտեղ օդի ջերմաստիճանը $17-22^{\circ}$ է, ջերմասեր անտառներն իրենց տեղը զիջում են լեռնային խիտ անտառներին, որտեղ ավելի շատ տարածված են ծառանման պտերները:

Ցուրտ գոտին (տիերա-ֆրիա), որն ընկած է $170^{\circ}-3200$ մ բարձրություններում, միջին ամսական ջերմաստիճանները տատանվում են $10-17^{\circ}$ -ի միջև, ծածկված է խառն անտառներով: Հիմնական անտառագյուղնող ծառատեսակներից են մշտականաշկաղնին, մագնոլիան, պտերները և մի քանի փշատերներ, ավելի շատ են մամուռները, քարաքոսները և այլն: Անտառի վերին սահմանը հասնում է մինչև 3900 մ բարձրությունները: Ավելի բարձր տարածված են ցածր թփուտները և արպյան մարգագետինները: Հավերժական ձյան գոտին սկսվում է մոտ 4100 մ բարձրություններից: Խաղաղօվկիանոսյան լեռնալանջերը ստորին գոտում ծածկված են տիպիկ սավանային բուսականությամբ, կարմրահողերով, որտեղ տարածված են բարձր խոտերը, իսկ ծառատեսակներից՝ արքայական արմավենին իր բարձր ու գեղեցիկ

Փյուղավորությամբ: Երկրորդ գոտում տարածված են խառն ան-
տառները, կաղնու, սպիտակ լաստենու, սոճու մի քանի տեսակ-
ներով։ Ավելի բարձր տարածված են ենթալպյան և ալպյան մար-
գագետիններն ու նիվալ գոտին։

Մարզն ընկած է նեռտրոպիկական կենդանաշխարհագրա-
կան գոտում։ Նրա կենդանական աշխարհը հարուստ է։ Հիմնա-
կանում տարածված են այն կենդանիները, որոնք բնորոշ են Հա-
րավային Ամերիկայի անտառներին ու սավաններին, իսկ հյուսի-
սը նմանվում է ավելի շատ Հյուսիսային Ամերիկային։ Խոնավ
անտառներում հանդիպում են լայնքիթ կամփիկները, զրահա-
կիրը, պուման, հովազը, լուսանը, ենոտը, սրընչակը, գետնա-
ակյուռը, տապիրը, մրջնակերը, պարկամուկը, շատ թոշուններ,
միջատներ և սողուններ։

Կենտրոնական Ամերիկայի կղզային մարզն ընդգրկում է
մայրցամաքային ծագում ունեցող Մեծ Անտիլյան (Կուբա, Հաֆ-
ֆի, Յամայկա, Պուերտո Ռիկո և Պինոս) կղզիները, որոնցից հյու-
սիս տարածված են կորալյան ծագում ունեցող Բահամյան, իսկ
արևելքով ձգվում են հրաբխային ծագման Փոքր Անտիլյան կղզ-
իները։

Անտիլյան կղզիների մակերևույթը, բացի Կուբայից, լեռնոտ
է։ Հայիթի կղզում արևմուտքից արևելք ձգվում են շորս զուգաճեռ
լեռնաշղթաներ, որոնք միմյանցից բաժանվում են երկայնակի
վարնետային հովիտներով։ Կենտրոնական Կորդիլիերները Տինա
զանգվածում հասնում են 3140 մ բարձրության, որը արշիպելագի
ամենաբարձր կետն է։ Յամայկայի և Պուերտո Ռիկոյի ոելիեֆը
կազմված է ոչ բարձր ծալքաբեկորավոր և սարավանդաձև հըղկ-
ված լեռներից։ Միենա Մաստրա լեռները Կուբա կղզու հարավում
հասնում են 2000 մ բարձրության։ Կուբայի տարածքի մեծ մասը
գաշտավայրային է, որտեղ երբեմն բարձրանում են ոչ մեծ ինտրու-
զիվ գոյացություններ։ Դաշտավայրը ծածկված է մեղողոյան կրա-
քարերով, որտեղ զարգացած են ոելիեֆի կարստային ձևերը։

Փոքր Անտիլյան կղզիները, որոնք ձգվում են Կարիբյան ծովի
արևելքով, հիմնականում առաջացել են պլիոցենի ժամանակ ար-
տավիժած հրաբխային լավաներից, սակայն մի շարք հրաբխային
կոներ գոյացել են պատմական ժամանակաշրջանում։ Մի քանի
հրաբուխներ ներկայումս աչքի են ընկնում մեծ ակտիվությամբ։
Ժամանակակից ակտիվ գործող հրաբուխներից հիշատակության

արժանի են Սուֆրիերը (Գվաղելուպա կղզում), որը հասնում է 1485 մ բարձրության, Մոն Պելեն (Մարտինիկա կղզում), որի արտավիժման ժամանակ 1902 թ. կործանվել է 4000 բնակիչ ունեցող ամբողջ մի քաղաք:

Կղզային մարզը, գտնվելով արևադարձային գոտում, աշխի է ընկնում բավականին շոգ և խոնավ կլիմայական պայմաններով: Միջին ամսական ջերմաստիճանը $24-27^{\circ}$ է, միայն Կուբայում երեմն, հյուսիսից ներխուժող ցուրտ օդային զանգվածների շընորհիվ, օդի ջերմաստիճանը իջնում է $+10$, $+12^{\circ}$, իսկ 3000 մ բարձրություններում լինում է 0° -ից ցածր ջերմություն: Տեղումների զգալի մասը թափվում է ամռանը, երբ Անտիլյան կղզիների վրա գերիշխում են հյուսիսարևելյան պասատները: Զմեռը մարդում տիրապետող է բարձր ճնշման գոտին, որի հետ կապված՝ տեղումները պակասում են, սակայն ուժեղ երաշտներ չեն նկատվում: Արեելյան և հյուսիսարևելյան լեռնալանջերը տարեկան ըստանում են 3000 մմ, իսկ ներքին հարթավայրերն ու հարավարեմրտյան լեռնալանջերը՝ 1000 մմ տեղումներ: Աշնանը, բարձր ճնշման գոտին հարավ տեղաշարժվելու կապակցությամբ, մարդի տարածք են թափանցում արևադարձային ցիկլոնները և փոթորիկներ առաջացնելով՝ հսկայական վնաս պատճառում ազգաբնակչությանը:

Մարզի գետային ցանցը զարգացած է հատկապես խոշոր կղզիներում: Գետերը կարճ են, սակայն հորդառատ: Միայն Կուբայում հաշվվում է մոտ 200 գետ: Դրանցից ամենաերկարն է Տուա գետը (250 կմ), որը մասամբ նավարկելի է: Մնացած գետերն ավելի փոքր են, որոնց հովիտներում մեծ տարածում ունեն սահանքներն ու ջրվեժները: Հանգած հրաբուխների խառնարաններում կան մի շարք ոչ մեծ լճեր, իսկ Կուբայի հարթ տարածքում՝ կարստային ծագման լճեր:

Մարզի բուսական ծածկույթը թեև խիստ տուժել է մարդու տնտեսական գործունեության հետևանքով, այնուամենայնիվ, աշխի է ընկնում հարուստ բուսականությամբ: Հողմնակողմ ուղղված լեռնալանջերը ծածկված են խոնավ արևադարձային անտառներով, իսկ հարթավայրերը՝ շաքարեղեգնի և այլ արևադարձային կուլտուրաների պլանտացիաներով: Հողմնահակառակ լեռնալանջերը ծածկված են տերևաթափ անտառներով ու սավաններով, որոնցում հանդիպում են արքայական արմավենիներ, մի-

մողա, կակտուսներ, իշակաթնուկներ, կոկոսյան արմավենիներ, բանան: Կուբայի արևմուտքում շորրորդականից որպես ռելիտներ պահպանվել են սոճու պուրակներ: 2300 մ բարձրություններում տարածված են գաճաճ սոճու, ուռենու, գիհու թփուտները: Լեռների բարձր մասերը ծածկված են մարգագետնային բուսականությամբ:

Իր մեկուսացված դիրքի պատճառով Կղզային մարգ ունի աղքատ կենդանական աշխարհ: Խոնավ անտառներում հանդիպում են լայնագիթ կապիկներ, հովազներ, գրահակիրներ, կինկածա արջ, պարկավոր օպոսում, լուսան, սրբնչակ գետնասկյուռ, նապաստակ, ենոտ, ավելի շատ տարածված են շղիկները, զբային թռչուններն ու սողունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Алисов Б. Н., Климатические области зарубежных стран. М., 1950 г.
Американский север, Сборник, М., 1950 г.
Боли А., Северная Америка. М., 1948 г.
Бузовкин Б. А., Климат США. Л., 1960 г.
Белосельская Г. А., Северная Америка. Воронеж ГУ, 1965 г.
Виво Х. А., География Мексики. М., 1951 г.
Витвицкий Г. Н., Климат Северной Америки. М., 1953 г.
Власова Т. В., Физическая география материков. М., 1976 г.
Вульф Е. В., Историческая география растений. М., изд. АН СССР, 1944 г.
Глазовская М. А., Почва зарубежных стран. М., 1975 г.
Зубкова З. Н., Алеутские острова. М., 1948 г.
Игнатьев Г. М., Гренландия. М., 1956 г.
Игнатьев Г. М., Северная Америка. М., 1966 г.
Кинг Ф. В. Геологическое развитие Северной Америки. М., 1961 г.
Хайн В. Е., Региональная геотектоника. Северная и Южная Америка и др. М., 1971 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. Ֆիզիկաաշխարհագրական ընդհանուր ակնարկ	3
Երկրաբանական ձևավորման պատմությունը	4
Ռելիէֆը և օգտակար հանածոները	9
Կլիման	16
Ներքին ջրերը	27
Հողերը	33
Բուսականությունը	35
Կենդանական աշխարհը	42
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՇ. Ֆիզիկաաշխարհագրական շրջանները	46
Ոչ Կորդիլիերյան արևելք	47
Գրենլանդիա	48
Կանադական Արկտիկական կղզիախումբ	51
Լավրենտյան բարձրություն և կից դաշտավայրեր	53
Կենտրոնական հարթավայրեր	59
Ապալաչյան լեռներ	63
Մերձափնյա դաշտավայրեր	69
Մեծ հարթավայրեր	73
Կորդիլիերներ	78
Ալյասկայի կորդիլիերներ	79
Կանադական կորդիլիերներ	87
ԱՄՆ-ի կորդիլիերներ	95
Մերսիկական բարձրավանդակ և Կալիֆոռնիա թերակղզի	111
Կենտրոնական Ամերիկա	122
Գրականություն	138

ՀՐԱԶԲԻ ՍԵԴՐԱԿԻ ԽԱԶՈՏՔՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱՄԱՍԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պրակ I

ՀՅԱՆԱԹԱԼԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱ

(Աւումնաօժանդակ ձևականաց)

Հրատարակության է ներկայացրել Համալսարանի ֆիզիկական ազխարհագրության ամբիոնը:

Հրատարակության խմբագիր՝ Ա. Է. Աղայան
Գլուխարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ս. Արքեցյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Յավոյյան

ԽԲ 705

Հանձնված է շարվածքի 26.03.1986 թ.: Առորագրված է տպագրության 06.11.1986 թ.: ՎՃ 03612: Զափուլ՝ $84 \times 108^{1/32}$ Թուղթ № 2: Տառատեսակ՝ «սովորական»: Տպագրության եղանակը՝ «բարձր»: Հրատարակական 6,2 մամուլ: Տպագրական 4,1 մամուլ $= 6,9$ պայմանական մամուլի: Տպաքանակ 3000: Պատվեր 858: Գինը՝ 40 կոպ.

Երևանի Համալսարանի հրատարակություն, Երևան, Առավյան փ. № 1:
Издательство Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 1.

Երևանի Համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52:

Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.